ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ
ARMENIAN CARITAS

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-ի

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյումրի 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Օգտագործված հապավումներ 5

Բաժին 1. Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման Քաղաքականության մշակման նախադրյալները 6

«Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցների կողմից կազմակերպությունում երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման կարիքների ինքնագնահատման արդյունքների վերլուծություն 6

ՀՀ-ում երեխաների պաշտպանության համակարգը՝ Բռնությունից երեխային պաշտպանության համատեքստում 21

ԲԱԺԻՆ 2. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 38

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ .38

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 40

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 47

2. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 50

3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 52

4. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 59

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ / ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍԸ 63

Հավելվածներ 66

Հավելված 1. «ՀայԿական Կարիտաս»-ի երեխաների պաշտպանության ԵՎ անվտանգության ապահովման ներքին ընթացակարգերը ԵՎ մասնագիտական վարքականոնները (նախատեսված կազմակերպության աշխատակիցների Եվ կամավորների համար) 66

1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 71

2. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 78

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ / ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍԸ 82

4. Երեխայի նկատմամբ բռնությունը. սահմանում, առանձնահատկությունները, ցուցիչները եւ նշանները 85

Հավելված 2. Երեխաների պաշտպանությանն ԵՎ անվտանգության ապահովմանն առնչվող իրավական ակտերի ցանկ ԵՎ հղումներ 99

Հավելված 3. Երեխայի պաշտպանության ԵՎ անվտանգության ապահովման վերաբերյալ փաստաթղթերի ձԵՎանմուշներ.....101

«Հայկական Կարիտաս»-ի Երեխաների պաշտպանության եվ անվտանգության ապահովման ներքին ընթացակարգի դրույթների պահպանման վերաբերյալ պարտավորագիր (ձԵՎանմուշ).....101

Երեխաների պաշտպանության կանոնների պահպանման հայտարարագրի ձԵՎանմուշ («Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցների, ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ, այցելուների, կամավորների ԵՎ բոլոր նրանց համար, ովքեր առնչվում են կազմակերպության հետ) 102

«Հայկական Կարիտաս» Բռնության դեպքերի գրանցամատյան ՁԵՎանմուշ № 1 103

«Հայկական Կարիտաս» Երեխայի պաշտպանության ԵՎ անվտանգության ապահովման վերաբերյալ երեխայի անհատական թերթիկ ՁԵՎանմուշ № 2 107

Երեխայի պաշտպանության ԵՎ անվտանգության ապահովման վերաբերյալ քննարկման արձանագրություն ՁԵՎանմուշ 3. 110

Հավելված 4. Երեխայի նկատմամբ բռնություն. սահմանումը, առանձնահատկությունները, ցուցիչները ԵՎ նշանները.....111

Հավելված 5. Երեխաների մասնակցության աստիճանները 125

Հավելված 6. Կազմակերպության՝ բռնությունների դեպքերին արձագանքման սխեմաները128

Հավելված 7. «Երեխաների պաշտպանության նվազագույն ստանդարտներ» Ինքնագնահատման թերթիկ.....129

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Հայկական Կարիտաս»-ի «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականության մշակման» ծրագրի շրջանակներում։

Փաստաթղթի մշակումն նպատակ է հետագայում բարձրացնել «Հայկական Կարիտաս»-ի հովանու ներքո գործող սոցիալական ծառայություններում, երեխաների աջակցության կենտրոններում եւ այլ ծրագրերում երեխաների անվտանգության ապահովման մակարդակը։

Ելնելով երեխայի լավագույն շահից եւ ձգտելով կառուցել իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա գործող սոցիալական ծառայություններ, սույնով «Հայկական Կարիտաս»-ը իր հանձնառությունն է արտահայտում ուղղված ոչ միայն շահառու-երեխաների, այլեւ իր աշխատակիցների եւ կազմակերպության հեղինակության պաշտպանությանը։

Փաստաթղթի մշակումը կրել է մասնակցային բնույթ, ինչը նշանակում է, որ «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականությունում», ինչպես նաեւ դրանից բխող մյուս փաստաթղթերում առկա դրույթները քննարկվել են, առաջարկվել եւ համաձայնեցվել կազմակերպությունում երեխաների հետ աշխատող եւ վերջիններիս աշխատանքը համակարգող աշխատակիցների հետ։

Փաստաթուղթը բաղկացած է երկու բաժիններից, մասնավորապես.

- ✓ *Բաժին 1. Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականության մշակման նախադրյալները. այս բաժնում անդրադարձ է կատարվում կազմակերպության աշխատակիցների կողմից «երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման» վերաբերյալ անցկացված ինքնագնահատման արդյունքներին։ Ի լրումն ներկայացվում է նաեւ ՀՀ-ում գործող երեխաների պաշտպանության համակարգը, որի շրջանակներում էլ ներկայումս ապահովվում է երեխաների պաշտպանությունը բռնություններից։*
- ✓ *Բաժին 2. «Հայկական Կարիտաս»-ի երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականությունը. այս բաժնում ներկայացվում է բուն քաղաքականությունը, իր ենթաբաժիններով։ Այն հանդիսանում է կազմակերպության*

ներքին փաստաթուղթ, որն ուղղված է կազմակերպությունում երեխաների համար անվտանգ եւ պաշտպանող միջավայրի ապահովմանը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՍՀՆ	Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
ԱԾԽՄԵ	Առանց ծնողական խնամքի մնացած երեխա
ԲՄՊՀ	Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն
ԵՊ	Երեխաների պաշտպանություն
ԸԿԵԻՊԲ	Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժին
ԽՀՄ	Խնամատարության եւ հոգաբարձության մարմին
ԽՀՀ	Խնամատարության եւ հոգաբարձության հանձնաժողով
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՍԱՏԳ/Բ	Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն/ բաժին

ԲԱԺԻՆ 1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների հետ աշխատող կամ որևէ կերպ առնչվող բոլոր մարմինների, կառույցների և ծառայությունների աշխատանքի հիմքում «երեխայի լավագույն շահի» սկզբունքի պահպանումը պետք է լինի: Սա նշանակում է, որ կազմակերպության աշխատանքը պետք է կազմակերպվի ելնելով երեք հիմնական ենթասկզբունքից, որոնք են երեխայի պաշտպանությունը վտանգից կամ ցանկացած տեսակի ռիսկերից, երեխայի իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև երեխայի զարգացման խթանումը:

Երեխայի պաշտպանությունը հանդես գալով որպես «երեխայի լավագույն շահի» սկզբունքի բաղադրիչներից մեկը, ամրագրված է նաև «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում: Վերջինումս նշվում է, որ յուրաքանչյուր երեխա իր բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ և պաշտպանությամբ ապահովված լինելու իրավունք ունի: Երեխայի բարեկեցության համատեքստում պաշտպան լինելու մասին խոսելիս պետք է նկատի ունենալ բոլոր տեսակի կանխամտածված և ոչ կանխամտածված վնասից պաշտպանության ապահովումը:

Ծառայությունում/ ցերեկային կենտրոնում աշխատանքային գործունեության ընթացքում երեխայի պաշտպանության ապահովման և պաշտպան լինելու իրավունքի իրացման տեսանկյունից նախընտրելի է կազմակերպության ներսում երեխաների հետ տարվող աշխատանքների, մասնավորապես երեխաների պաշտպանության ապահովման վերաբերյալ համապատասխան ընթացակարգերի, ուղղորդումների և կանոնակարգերի առկայությունն ու կիրառումը:

Շատ կարևոր է նկատի ունենալ, որ վերջիններիս արդյունավետության երաշխիքներից մեկը դրանց համապատասխանությունն է այն միջավայրային, մշակութային առանձնահատկություններին և իրավական համատեքստին, որի շրջանակներում գործում է կազմակերպությունը: Ահա թե ինչու, երեխաների անվտանգության ապահովման քաղաքականության մշակման վերաբերյալ առկա ուղղորդումները, որոնք տրված են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և երեխաների պաշտպանությամբ զբաղվող այլ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից, նախատեսում են համընդհանուր ճանաչում գտած սկզբունքների տեղայնացում, որի առաջնային փուլը՝ կազմակերպությունում ինքնագնահատման իրականացումն է:

Պահպանելով, վերոնշյալ սկզբունքը, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի աշխատակիցների շրջանում իրականացվել է սոցիալական հետազոտություն, պարզելու համար կազմակերպությունում շահառու-երեխաների և նրանց ծնողների/ խնամակալների հետ աշխատանքի առկա պրակտիկաները՝ երեխաների անվտանգության ապահովման համատեքստում:

Հետազոտության ընթացքում տվյալների ստացման համար կիրառվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության և հեռակա հարցաթերթիկային հարցման մեթոդները: Իսկ հետազոտության տվյալների վերլուծության համար կիրառվել է դեդուկտիվ մոտեցումը, այսինքն ստացված տվյալները նախ և առաջ խմբավորվել են ըստ հարցադրումների, ապա նոր կատարվել են ընդհանուր եզրահանգումներ:

Հետազոտության ընտրանքը. հետազոտությանը մասնակցել են Հայկական Կարիտասի 38 մասնագետներ, ովքեր անմիջական ծառայություններ են մատուցում ծառայությունից օգտվող երեխա-շահառուներին և նրանց ընտանիքներին, այդ թվում այն մասնագետները, ովքեր իրականացնում են անմիջական ծառայություններ մատուցողների աշխատանքի համակարգում:

Հետազոտության գործիքը՝

Որպես հետազոտության գործիք հանդես է եկել «Ինքնագնահատման հարցաթերթը»[1]: Վերջինս բաղկացած է 6 բաժիններից՝ երեխաների անվտանգության երաշխավորման խնդիրը կազմակերպությունում, երեխաների հանդեպ չարաշահման/ վնասի կանխարգելումը, ուղղորդումներ և վերապատրաստումներ, տեղեկատվության փոխանցում և հաղորդակցություն, մոնիթորինգ և վերանայում, երեխաների աննվտանգությունն ապահովող քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնք իրենց հերթին խմբավորված են եղել երեք հիմնական ոլորտներում՝

1. Կազմակերպության դիրքորոշումը երեխաների անվտանգության երաշխավորման խնդիրների վերաբերյալ
2. Կազմակերպության ներքին քաղաքականությունն ու գործող ընթացակարգերը երեխաների անվտանգության ապահովման ոլորտում
3. Կազմակերպությունում երեխաների նկատմամբ չարաշահման/ բռնության դեպքերի կանխարգելմանն ու վաղ միջամտությանն ուղղված գործընթացները:

[1] Ինքնագնահատման հարցաթերթը տե՛ս Հավելված 1.: Մշակված է Caritas Internationalis-ի կողմից և ադապտացված է զեկույցի հեղինակի կողմից:

Այժմ անդրադառնանք հետազոտության արդյունքներին և դրանք ներկայացնենք պահպանելով հարցաշարում առկա հարցադրումների տրամաբանական կառուցվածքը։

Հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները փաստում են, որ Կազմակերպությունը հստակ դիրքորոշում ունի երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ, ավելին կրում է նաև անհրաժեշտության դեպքում այդ դիրքորոշումն իր գործընկերների հետ կիսելու պատրաստակամությունը։



Հարցման արդյունքում ստացված այլ լրացուցիչ տվյալներ գալիս են հիմնավորելու այն հանգամանքը, որ իսկապես կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է երեխաների անվտանգության ապահովման սկզբունքով, մասնավորապես, ըստ հարցման մասնակիցների տեսակետի մոտ 80% դեպքերում կազմակերպության ղեկավար անձնակազմը գործում է ելնելով երեխաների իրավունքների իրացումն ապահովելու սկզբունքից։



Այս համատեքստում, կարող ենք անդրադառնալ նաև կազմակերպությունում երեխաների հետ աշխատանքի պրակտիկայում բոլոր տեսակի հնարավոր խտրականությունների բացառման սկզբունքի կիրառման խնդրին։ Այս դեպքում ևս, ինչպես կարող եք տեսնել ներքևում բերված գրաֆիկում, կազմակերպության մասնագիտական անձնակազմի ներկայացուցիչների համոզմամբ, կազմակերպությունը անխտրական վերաբերմունք է ցուցաբերում իր շահառուների նկատմամբ։



Միևնույն պատկերին կարելի է հանդիպել նաև հաջորդ գրաֆիկում, որի շրջանակներում քննարկվում է կազմակերպությունում երեխաների հետ աշխատանքի ընթացքում ստորացման/նվաստացման և բռնության հնարավոր դեպքերի բացառման խնդիրը։



Կարծես թե, երեխաների անվտանգության երաշխավորմանը վերաբերող հիմնահարցերի քննարկումներում, կազմակերպությունում խնդիրներ չեն նկատվում։ Ընդ որում, պետք է նշել, որ նման մոտեցումներ կիրառելու համոզմունքը արտացոլված է նաև Կազմակերպության առաքելության սահմանման մեջ, որտեղ «մարդու արժանապատվություն»-ը վկայակոչվում է որպես հիմնարար սկզբունք։

Սակայն, կարևոր է նշել, երեխաների հետ աշխատանքում անվտանգ պրակտիկ գործունեություն իրականացնելիս բավական կարևոր մի հանգամանքի մասին, այն է երեխաների իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի իմացության խնդիրը։ Հարցման մասնակիցների մոտ 55%-ը պնդում է երեխաների իրավունքների վերաբերյալ փաստաթղթերին մասնակիորեն իրազեկ լինելու մասին։ Երևի թե կարիք չկա, հիմնավորել, թե հատկապես երեխաների հետ աշխատող մասնագետների շրջանում, բայց նաև ամբողջ անձնակազմի համար, որքան մեծ կարևորություն ունի ամբողջական իրազեկվածությունը երեխաների իրավունքների վերաբերյալ փաստաթղթերին, մասնավորապես խոսքը «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի և դրանցից բխող այլ իրավական ակտերի իմացությանը և աշխատանքային գործունեությունում դրանցով ուղղորդվելուն է վերաբերվում։ Հաշվի առնելով, հատկապես այն հանգամանքը, որ երեխաների հիմնախնդիրների լուծում, շատ դեպքերում նաև իրավական խնդիրների լուծում է պահանջում, օրինակ՝ երեխայի առանց ծնողական խնամքի մնալու կամ նրա իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքելու և այլ դեպքերում։



Հարցաթերթի հաջորդ բաժնում անդրադառնում ենք Կազմակերպությունում Երեխաների հանդեպ չարաշահման/ վնաս կանխարգելման գործող մոտեցումների ուսումնասիրությանը:

Դիտարկելով վերևում բերված գրաֆիկում արտացոլված տվյալները, կարող եք տեսնել, որ կազմակերպության աշխատակիցները միանշանակ պատկերացում չունեն կազմակերպությունում երեխաների հետ աշխատանքի վերաբերյալ ուղղորդումների առկայության վերաբերյալ: Պատասխանների նման համամասնությունը, ի վերջո, կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, որոնց դեպքում, կազմակերպության աշխատակիցների նմանատիպ իրավիճակներում կարող են կիրառել բավականին տարբեր մոտեցումներ, դրանով իսկ խախտելով շահառուների նկատմամբ հավասար մոտեցում կիրառելու սկզբունքը:

Վերևում նկարագրված իրավիճակը որոշակիորեն համապատասխանում է նաև ստորև բերված գրաֆիկում ներկայացված տվյալներին, որտեղ խոսքը ոչ ստանդարտ իրավիճակներին արձագանքելու վերաբերյալ ուղղորդումներին է վերաբերվում: Այս դեպքում հատկապես կարևոր է, որպեսզի մասնագիտական անձնակազմը քայլ առ քայլ պատկերացում ունենա ուղղորդման ընթացակարգի վերաբերյալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ ստանդարտ իրավիճակները շատ ավելի են, հրատապ լուծումներ պահանջում, հետևաբար դրանց պետք է պատրաստ լինել:



Երեխաների չարաշահման/ վնասի կանխարգելման տեսանկյունից կարևոր հաջորդ հարցադրումը, որին անդրադարձել ենք՝ աշխատակիցների իրազեկվածությունն է այն պետական կառույցների և դրանց դիմելու կարգի մասին, որոնք ի պաշտոնե զբաղվում են երեխաների իրավունքների պաշտպանությամբ: Համաձայն ստացված տվյալներին, հարցմանը մասնակցած մասնագետների միայն կեսից ավելին է տիրապետում նման տեղեկատվության, դա նշանակում է, որ պետք է քայլեր ձեռնարկել, կազմակերպությունում երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետների շրջանում իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:



Միևնույն հարցման տվյալները, մատնանշում են, որ դեպքերի մեծամասնությունում երեխաների իրավիճակը վերահսկվում է անմիջական ծառայությունների մատուցման ողջ ընթացքում: Այս փաստը հատկապես կարևոր է, երբ խոսքը երեխայի անվտանգության կայունությունն ու շարունակականությունն ապահովելուն է վերաբերվում:



Ներկա իրականության պայմաններում երեխաների հետ աշխատող կազմակերպությունների համար՝ անվտանգության ապահովման տեսանկյունից, կարևոր է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ ուղեցույցի առկայությունը: Ինչպես կարող եք տեսնել, ներքոնշյալ գրաֆիկում, այս դեպքում ևս կազմակերպության աշխատակիցները միանշանակ պատասխան չունեն կոնկրետ պատասխան պահանջող հարցի վերաբերյալ: Արդյունքում, կարելի է հանգել, ոչ թե նման ուղեցույցի առկայության կամ բացակայության հարցին, այլ կազմակերպության ներսում առկա ռեսուրսների մատչելիության և բոլորի համար հասանելիության ապահովման խնդրին:



Երեխաների անվտանգության ապահովման համար կարևոր պայմաններից մեկն էլ ծառայությունների մատուցման ընթացքում մասնագետների կոմպետենտություն ու անձնային հատկանիշների համապատասխանությունն է երեխաների հետ աշխատանքին,



իսկ որոշ դեպքերում, անձնակազմի անդամների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների ձեռք բերուլըմ տարբեր պաշտոնական մարմիններից, այդ թվում նաև ոստիկանությունից:



Վերոնշյալ, երկու հանգամանքը հատկապես կարևոր են երեխաների մասնագետների կողմից հնարավոր բռնության ենթարկվելու ռիսկի կանխարգելման համար մի կողմից, իսկ մյուս կողմից երեխայի լիարժեք անվտանգության երաշխավորման տեսանկյունից: Պետք չէ թերագնահատել այն դերը, որ կոմպետենտ մասնագետը կարող է խաղալ երեխային նաև իր սեփական միջավայրից պաշտպանելու գործում: Հետևաբար, նախընտրելի կլինի, որպեսզի կազմակերպությունը քայլեր ձեռնարկի այս հարցերի կանոնակարգման ուղղությամբ:

Անձնակազմին վերաբերող մեկ այլ կարևոր ասպեկտը անդրադառնում է աշխատանքային վարքի կանոնակարգմանը, սակայն ոչ թե ուղղորդումների կամ վարքականոնների սահմանման համատեքստում, այլև դրանց խախտման դեպքում սանկցիաների համակարգի առկայության ու կիրառման: Ստացված տվյալները, որոնք բերված են ներքոնշյալ գրաֆիկում, հուշում են նման համակարգի առկայության մասին, սակայն համակարգի մասնակի գործառնման վերաբերյալ պնդումների բարձր մակարդակն իր հերթին հուշում է համակարգում առկա որոշակի դիսֆունկցիաների կամ գործառնման խափանումների մասին:



Շատ կարևոր է տեսնել, որ կազմակերպությունում գործում է աշխատակիցներ-ղեկավար կազմ ուղղությամբ հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմ (ինչպես պնդում են հարցվածների 47%-ը): Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել նաև աշխատակիցների կեսից ավելի տեսակետն այն մասին, որ նման ընթացակարգ սահմանված չէ, իսկ եթե անգամ սահմանված է, ապա գործում է մասնակի: Պետք է ի նկատի ունենալ, որ նման մեխանիզմի առկայությունը, այն կարևոր նախապայմաններից է, որն ապահովում է «փաստերի վրա հիմնված» պրակտիկայի կիրառումը ամենօրյա աշխատանքային գործունեության շրջանակներում:



Անդրադառնանք, կազմակերպությունում երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ ուղղորդումների առկայությանն ու կազմակերպության անձնակազմի վերապատրաստման խնդիրներին:

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, հարցվածների 32%-ը կարծում է և տեղյակ է, որ կան երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ գրավոր ուղղորդումներ, 24%-ի տեսակետի համաձայն նման ուղղորդումներ կան, սակայն դրանք գործառնում են ոչ ամբողջությամբ, մնացած 34%-ը, համապատասխանաբար, համոզված է նման ուղղորդումների բացակայության, իսկ 10%-ը տվել է «չգիտեմ» կամ «դժվարանում եմ պատասխանել» պատասխանը:



Հարցման արդյունքում ստացված տվյալներն ուսումնասիրելիս, որոշակի միանշանակ մոտեցում ենք տեսնում այն դեպքում, երբ խոսքը վերաբերվում է երեխայի՝ որպես անհատի նկատմամբ անքննադատ վերաբերմունքի դրսևորմանը, հարգելով նրա մշակութային պատկանելիությունն և վերջինովս պայմանավորված առանձնահատկությունները: Համաձայն հարցվածների տեսակետին, երեխայի մշակութային պատկանելիությամբ պայմանավորված քննադատական կամ մեղադրական վերաբերմունք նկատվում է միայն դեպքերի 5% դեպքերում (Այս համատեքստում հետաքրքիր կլիներ հասկանալ, թե կազմակերպության շահառուները մշակութային տեսանկյունից որքանո՞վ են հոմոգեն կամ հակառակը):



Անդրադառնանք անձնակազմի շարունակական զարգացման խնդրին: Հարցման տվյալները ցույց են տալիս, որ հիմնականում կազմակերպության աշխատակիցները երեխաների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստումների մասնակցելու հնարավորություն են ստանում: Ընդ որում, խոսքը նաև այնպիսի վերապատրաստումների մասին է, որոնց շրջանակներում անձնակազմի անդամները հնարավորություն են ստանում ծանոթանալ նաև երեխաների չարաշահման դեպքերին արձագանքելու մեխանիզմներին և միջոցներին:



Այս հատվածում ևս ունենք այնպիսի հարց, որն անդրադառնում է կազմակերպության ներսում տարբեր կառուցվածքային մակարդակներում գտնվող ստորաբաժանումների միջև համագործակցությանն ու հաղորդակցությանը: Չնայած ստորև բերված գրաֆիկում ներկայացված տվյալները խոսում են նման համագործակցության մասին, դեպքերի գրեթե 70%-ից ավելի դեպքերում, եթե առաջին երկու սյունակները միասին վերցնենք, ապա դրանում ավելի մեծ մասնաբաժին ունի համագործակցության ոչ ամբողջական լինելու վերաբերյալ տեսակետը: Հետևաբար, կազմակերպության ներքին համակարգում հաղորդակցության, համագործակցության ապահովման խնդիրներին լրացուցիչ ուշադրություն հատկացնելու կարիք կա: Պետք է նկատի ունենալ, որ երեխայի անվտանգության ապահովման տեսանկյունից, չափազանց մեծ նշանակություն ունի կազմակերպության ֆունկցիոնալ լինելը, իսկ վերոնշյալները դրա կարևոր բաղադրիչներից են:



Անդրադառնանք, հարցաթերթի հաջորդ բաժնին, որը կոչվում է տեղեկատվության փոխանցում և հաղորդակցություն: Նշենք, որ այստեղ խոսքը շահառուների և այլ կառույցների հետ հաղորդակցությանն է վերաբերվում:

Տեղեկատվության փոխանցման տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ անընդհատ քայլեր են ձեռնարկվում շահառու երեխաներին իրենց բռնությունից/ չարաշահումից պաշտպան լինելու իրավունքի մասին իրազեկելու նպատակով: Այս համատեքստում, կարելի է անդրադառնալ Գրաֆիկի 6.-ում բերված տվյալներին: Համաձայն, որոնց կազմակերպության շահառու-երեխաների շրջանում կարիք կա նաև իրազեկումներ իրականացնել կազմակերպությունից դուրս գործող այն հիմնական կառույցների մասին, որոնք զբաղվում են երեխաների պաշտպանության հիմնախնդիրներով:



Վերևում քննարկված խնդրի շարունակությունն արտահայտվում է հաջորդ գրաֆիկում, որտեղ քննարկվում է երեխաների պաշտպանությամբ զբաղվող կառույցների, ազգային մարմինների, ինչպես նաև «Թեժ գիծ», «Շտապ օգնություն» ծառայությունների տեսանելիության ապահովումը երեխաների համար՝ գոնե տեսանելի վայրում, դրանց հեռախոսներին փակցված լինելու միջոցով: Նման միջոցառումները, հնարավորություն են տալիս ընդլայնել երեխայի անվտանգության երաշխիքները, դրանք չսահմանափակելով միայն կոնկրետ կազմակերպության՝ անվտանգության երաշխավորի դերով:



Արտաքին հաղորդակցության տեսանկյունից, կարևոր է անդրադառնալ նաև կազմակերպության տեղական և ազգային մակարդակներում գործունեություն ծավալող գործընկերների հետ փոխհարաբերություններին: Համաձայն, հարցման արդյունքում ձեռք բերված տվյալներին, կարելի է գալ այնպիսի եզրահանգման, որ կազմակերպությունը իր գործընկերների հետ գործնական և փոխադարձ վստահության վրա հիմնված փոխհարաբերություններ է կարողացել կառուցել, սրա մասին է վկայում նաև ստացված տվյալների հակառակի մասին պնդման բացակայությունը:



Հաջորդը, որին անդրադարձել ենք սույն հետազոտության շրջանակներում, «Մոնիթորինգի և վերանայման» բաղադրիչն է: Սույն գրաֆիկի միջոցով, ավելի ակնհայտ է դառնում, այն վարկածը, որն առաջ էր քաշվում ի սկզբանե կազմակերպության կողմից երեխաների անվտանգության ապահովումն երաշխավորելու հանձնառությունը ստանձնելու և դրա իրականացման ուղղությամբ քայլերի ձեռնարկման մասին:

Համաձայն կազմակերպությունում երեխաների հետ աշխատող մասնագետների կարծիքի 73.7% դեպքերում թե՛ երեխաները, թե՛ նրանց ծնողները պարբերաբար տեղեկացվում են երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ կազմակերպությունում գործող ընթացակարգերին և մոտեցումներին:



Ինչպես ցույց են տալիս հաջորդ գրաֆիկում պատկերված տվյալները կազմակերպությունում շահառուները միայն պասիվ դերով չէ, որ հանդես են գալիս: Վերջինիս թվին կարելի է դասել ուղղակի տեղեկատվություն ստացող դերը: Ինչպես ցույց են տալիս ստորև բերված գրաֆիկի տվյալները 55% դեպքերում շահառուներն ու նրանց խնամակալները/ ծնողները անպայմանորեն ներգրավված են լինում երեխաների պաշտպանությանը վերաբերող քաղաքականության և այլ նմանատիպ խնդիրների քննարկմանը: Սա խոսում է կազմակերպությունում մասնակցային որոշումների կայացման երևույթի ոչ միայն առկայության, այլև բավականին լայն կիրառություն ունենալու մասին:



Երեխաների անվտանգության ապահովման համատեքստում մոնիթորինգի և վերանայման շրջանակներում կարևոր հաջորդ ասպեկտը, բռնության միջադեպերի արձանագրմանն ու դրանց շարունակական վերահսկմանն է վերաբերվում: Հարցման արդյունքներին համաձայն, 63% դեպքերում, կազմակերպությունում հենց նման պրակտիկա է կիրառվում:



Վերոնշյալը ասպեկտը հատկապես կարևոր է բռնության և չարաշահման հետագա դեպքերը կանխարգելելու և երեխայի մոտ հնարավոր կրկնակի տրամվայի ենթարկվելու հավանականությունից խուսափելու տեսանկյունից:

Դիտարկելով, հաջորդ գրաֆիկը, տեսնում ենք, որ կազմակերպության աշխատակիցները մասնակի են տեղեկացված կազմակերպությունում երեխաների պաշտպանության վերաբերյալ գրավոր ուղղորդումների մասին: Նման եզրակացությունը, պայմանավորված է տրված պատասխանների համամասնություններով, որտեղ դրանց առկայությունն ու բացակայությունը՝ որպես պատասխաններ ստացել են գրեթե հավասար մասնաբաժիններ: Իհարկե, պահպանվում է փաստաթղթի անվանումը այլ նմանատիպ ներքին փաստաթղթի հետ շփոթելու հավանականությունը, այնուամենայնիվ պատասխանների նման բաշխվածությունը խոսում է տեղեկատվության փոխանցելիության և հաղորդակցության մեխանիզմներում որոշակի «խափանումների» մասին:



Ներքևում բերված գրաֆիկը հետաքրքիր է այնքանով, որ այնտեղ իրականում քննարկվում է աշխատակիցների նկատմամբ հավասար և արդարացի մոտեցում ցուցաբերելու խնդիրները: Իհարկե, հարցվողների կեսից ավելին համոզված պատասխան են տվել, որ

կազմակերպությունում գործում են հենց հավասարության ու արդարության սկզբունքները, սակայն, հետագա աշխատանքներում պետք է հաշվի առնել, նաև կազմակերպության աշխատակիցների մնացած 47%-ի տեսակետը, ովքեր «կասկածամիտ» են կիրառվող մոտեցումների արդարացիության նկատմամբ:



Ներքոնշյալ գրաֆիկում ստացված տվյալները, առաջին հերթին խոսում են այն մասին, որ կազմակերպությունն իր աշխատանքում առաջնորդվում է տեղական/տեղային լուծումների կիրառման ճանապարհով, դրանով իսկ ցույց տալով մշակութային տեսանկյունից դեպի կոմպետենտ պրակտիկա կիրառելու ձգտման առկայությունը:



Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հետազոտության տվյալների վերլուծությունը, կազմակերպությունում՝ երեխաների անվտանգության լիարժեք ապահովումն երաշխավորելու տեսանկյունից առկա են մի քանի հիմնական խոչընդոտներ՝

- Կազմակերպությունում երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ փաստաթղթերի, այդ թվում քաղաքականություն, ներքին ընթացակարգեր, երեխանեի հետ աշխատանքի էթիկական նորմեր, գրավոր ամրագրումը և դրանց հասանելիության, մատչելիության ապահովումը բոլոր աշխատակիցների շրջանում:
- Կազմակերպության ներքին հաղորդակցության, տեղեկատվության փոխանցման համակարգում որոշակի շեղումներ են նկատվում, որոնց արդյունքում կազմակերպության աշխատակիցների մոտ նկատվում է տեղեկատվության պակաս: Չնայած այն հանգամանքին, որ դրանց ապահովման համար արդեն իսկ կան մշակված և գործող մեխանիզմներ:
- Կազմակերպությունը նաև երեխաների անվտանգության ապահովման ուղղությամբ իր իսկ կողմից արդեն կիրառվող մեխանիզմների հստակեցման, կանոնակարգման և դրանց «համընդհանուր նորմի» արժեք հաղորդելու կարիք ունի:

- Այնպիսի պատկեր է ստեղծվում, որ կազմակերպության աշխատակիցները վստահ չեն իրենց գործունեության իրավաչափ լինելու սահմանների, գործելակերպի և միջամտության մեթոդաբանության վերաբերյալ, ինչը նվազեցնում է կազմակերպության աշխատակիցների կողմից համադրելի և ընդհանրական սկզբունքների ու մասնագիտական մոտեցումների կիրառումը և ցանկացած պարագայում ընդունելի վարքագծի ցուցաբերումը:

Կազմակերպության վերաբերյալ իրականացված հարցման արդյունքում բացահայտվեցին նաև վերջինիս գործունեության այնպիսի ասպեկտներ, որոնք երեխաների անվտանգության ապահովման տեսանկյունից նշանակալի ռեսուրս են կարող հանդիսանալ՝

- Կազմակերպությունը պատրաստակամություն և ներքին համոզմունք ունի, որ երեխայի անվտանգության ապահովումը առաջնային խնդիր է:
- Կազմակերպության կողմից կիրառվում են երեխայի նկատմամբ բռնությունների կանխարգելման որոշակի մեխանիզմներ (մասնակցային որոշումներ, իրազեկումներ, դեպքերի արձանագրում):
- Կազմակերպությունը վարում է մշակութային տեսանկյունից կոմպետենտ պրակտիկա:

Հաշվի առնելով, վերոնշյալ դիտարկումները, Հայկական Կարիտասի Երեխաների պաշտպանության և անվտանգության ապահովման քաղաքականությունը կփորձի տալ այնպիսի հարցերի պատասխաններ, որոնք հնարավորինս ամրապնդող և բարերար ազդեցություն կարող են ունենալ երեխաների պաշտպանության համատեքստում կազմակերպության ներքին կարողությունների բարելավման վրա:

ՀՀ-ՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՐԵԽԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Երեխաների պաշտպանության համակարգը կարելի է մեկնաբանել երկու մոտեցմամբ՝ լայն եւ նեղ: Նեղ իմաստով երեխաների պաշտպանության կամ բարեկեցության համակարգը, ինչպես ընդունված է այն անվանել բազմաթիվ երկրներում, ներկայանում է որպես ծառայությունների, մասնագիտական գործունեության տարբեր ձեւերի, օրենքների եւ իրավական նորմատիվ ակտերի ամբողջություն, որն ուղղված է սոցիալական տարաբնույթ ռիսկերից երեխաներին պաշտպանելուն, նրանց հիմնական կարիքների բավարարմանն ու իրավունքների իրագործումն ապահովելուն: Լայն իմաստով, երեխաների պաշտպանության համակարգը գործ է ունենում ոչ միայն երեխայի կյանքի դժվարին իրավիճակները կանխելու եւ դրանք

հաղթահարելու հետ, այլեւ նպատակ է ունենում *բոլոր երեխաների* համար ապահովել *սոցիալական բարեկեցության, ամի, խնամքի եւ զարգացման համար նպաստավոր պայմաններ*[2]:

ՀՀ-ում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որն ապահովում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված մոտեցում՝ համայնքային, մարզային եւ ազգային մակարդակներում[3]: ՀՀ տարածքում, խոսելով երեխաների իրավունքների պաշտպանության մասին, նկատի ունենք, ոչ միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաներին, այլեւ ՀՀ-ում բնակվող՝ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի համարվող երեխաներին, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաեւ ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող երեխաներին՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, մասնավորապես, երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում ներգրավված սուբյեկտներն են.

- Խնամակալության եւ հոգաբարձության մարմինները (այսուհետ՝ ԽՀՄ)
- Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն/ բաժին (այսուհետ՝ ՍԱՏԳ/Բ)
- ՀՀ մարզպետարանի (Երեւանի քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (այսուհետ՝ ԸԿԵԻՊԲ)
- Ոստիկանության անչափահասների գործերով վարչություն
- Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այդ գործընթացում ներգրավված այլ մարմիններ եւ կազմակերպություններ

Երեխայի պաշտպանության համակարգի կարեւորագույն սուբյեկտներից մեկը համայնքային մակարդակում գործող խնամակալության եւ հոգաբարձության մարմիններն են, իրենց համապատասխան հանձնաժողովներով: Խնամակալության եւ հոգաբարձության մարմինները համայնքի ղեկավարներն են: Երեւանի պարագայում քաղաքապետի անունից խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնում են Երեւանի վարչական շրջանների ղեկավարները:

ԽՀՄ-ի գործառույթները բռնությունից երեխային պաշտպանելու համատեքստում[4] '

- իրականացնում է խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները, մինչեւ խնամակալ (հոգաբարձու) նշանակելը
- բացահայտում է ԱԾԽՄԵ-ների մասին տեղեկությունները, ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը եւ ապահովում երեխայի՝

---

[2] Տե՛ս Child Protection Systems. International Trends and Orientations/ N. Gilbert, N. Parton, M. Skivenes. New York, Oxford Press, 2011, էջ 15:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիր, էջ 4:

[4] Խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի 631-ն որոշում, հավելված 1., http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=106809

ընտանիքում դաստիարակվելու իրավունքի իրացումը, երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանությունը մինչեւ նրա տեղավորման հարցի լուծումը

- «Մարդկանց թրաֆիքինգի եւ շահագործման ենթարկված անձանց նույնացման եւ աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ՀՀ ԱՍՀՆ-ին ու ոստիկանությանն իրազեկում է համայնքում երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի մասին
- հսկողություն է իրականացնում խնամակալների (հոգաբարձուների) գործունեության նկատմամբ, այդ թվում մշտադիտարկումների միջոցով, քննության է առնում նրանց գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները
- կատարում է համայնքում երեխաների իրավունքների եւ շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում, հայտնաբերում է համայնքում բնակվող այն ընտանիքներին, որտեղ առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ եւ կատարում է այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում՝ գործակալության, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատությունների, մարզպետարանների, ԸԿԵԻՊԲ-ների հետ համագործակցությամբ: Մշտադիտարկման ժամկետները եւ հաճախականությունը սահմանվում են ըստ կարիքի՝ ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքներն անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել եւ քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում
- իրականացնում է աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները եւ շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով՝ իրազեկող հանդիպումների, միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով, հաշվի առնելով համայնքի կարիքները, առանձնահատկություններն ու երեխաների իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը եւ, համագործակցելով ԱՍՀՆ-ի, մարզպետարանների ԸԿԵԻՊԲ-ների հետ, անհրաժեշտության դեպքում ներգրավելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ անհատ փորձագետների
- կարգավորում է անչափահաս ծնողների ու երեխայի խնամակալի միջեւ առաջացած տարաձայնությունները
- մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների (նրանցից մեկի) մերժման դեպքում կարող է պարտավորեցնել ծնողներին (նրանցից մեկին) չխանգարելու այդ շփմանը
- երեխային ԲՍՊՀ տեղավորելու դեպքում շարունակում է երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալություն սահմանելու կամ որդեգրելու կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ ընտանեկան միջավայրում որեւէ այլ միջոցով խնամք ապահովելու ուղղությամբ աշխատանքները՝ համագործակցելով մարզպետարանների ԸԿԵԻՊ-ների, գործակալության, աջակցող ցանցի այլ անդամների, երեխաներին խնամք տրամադրող ԲՍՊՀ-ների, սոցիալական հոգածության կենտրոնների եւ այլ կազմակերպությունների հետ

- աջակցում է երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն՝ համագործակցելով ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ
- իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթը՝ առանց անձի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնության նախատեսված հիմքերով, գործակալության եզրակացության հիման վրա կայացնում է որոշում նրան ԲՍՊՀ տեղավորելու վերաբերյալ, իրականացնում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման կետերով սահմանված գործառույթները՝ կապված ԲՍՊ-ի ընդհանուր տիպի եւ հատուկ (մասնագիտացված) հաստատություն ԱԾԽՄԵ-ի ուղեգրման հետ (N 1 հավելվածի 14-րդ, 16-րդ կետեր) եւ այդ հաստատությունում ժամանակավոր տեղավորված երեխայի խնամքի տրամադրման հետ (N 1 հավելվածի 60-րդ կետ), տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձի հոգեկան խանգարման դեպքում ԲՍՊՀ-ում խնամքի տրամադրման հետ (N 2 հավելվածի 65-րդ, 66-րդ կետեր)
- հաշվի է առնում ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության որեւէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ, իսկ այն հաշվի չառնելու դեպքում իր որոշման մեջ անդրադառնում է այդ փաստին՝ նշելով այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել մասնագիտական եզրակացությունը մասամբ կամ ամբողջությամբ հաշվի չառնելու համար, ինչպես նաեւ կարող է առաջարկել եզրակացության վերանայում կամ այլընտրանքային եզրակացություն՝ ներկայացված այլ մասնագետի կողմից
- երեխայի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում է որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) մասին
- իրականացնում է երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, ՀՀ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով դատարան է ներկայացնում այդ ակտը եւ դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը
- ՀՀ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով դատարան է ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի հետազոտության ակտը եւ դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը
- երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում, երեխային վերցնում է ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում է երեխայի ժամանակավոր տեղավորումը եւ 7 օրյա ժամկետում դիմում է դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով
- մասնակցում է դատարանում հետեւյալ հարցերին վերաբերող գործերի քննությանը՝
  - ծնողական իրավունքներից զրկում
  - ծնողական իրավունքների սահմանափակում
  - ծնողական իրավունքների վերականգնում
  - երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճեր

- 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչում
- երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնության կազմում կամ ժառանգության բաժանում

➢ Մասնակցում է քրեական վարույթում՝ որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ

Ակնհայտ է, որ նշված գործառույթների մեծ մասը ԽՀՄ-ն չի կարող իրականացնել: Այդ իսկ պատճառով ԽՀՄ-ներին կից ստեղծվում է **խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողով**, որը խորհրդակցական մարմին է եւ գործում է հասարակական հիմունքներով: Հանձնաժողով ստեղծելու եւ անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Այդ որոշմամբ սահմանվում է նաեւ հանձնաժողովի նախագահ, ով իր հերթին հանձնաժողովի կազմից է: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել երեքից մինչեւ ինն անձ, որոնցից նշանակվում են հանձնաժողովի նախագահի տեղակալն ու քարտուղարը: Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է ԽՀՄ-ի կողմից:

Հանձնաժողովների հիմնական լիազորությունները բռնությունից երեխային պաշտպանելու համատեքստում հետեւյալն են.

1. հանձնաժողովները սահմանում են խնամակալություն (մինչեւ 14 տարեկան երեխաների համար) եւ հոգաբարձություն (14-18 տարեկան երեխաների համար)
2. իրականացնում են խնամակալի եւ հոգաբարձուի պարտականությունները մինչն խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը
3. ներկայացնում եւ պաշտպանում են երեխայի իրավունքներն ու շահերը, երեխայի իրավունքների ոտնահարման, նրա կյանքին եւ առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթություն տալու պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում
4. հայտնաբերում եւ հաշվառում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին
5. իրականացնում են երեխայի խնամքն ու դաստիարակությունը ստանձնել հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն ու ներկայացնում դատարանում
6. վերահսկողություն են իրականացնում խնամակալների եւ հոգաբարձուների գործունեության նկատմամբ
7. վերահսկողություն են իրականացնում խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ եւ այլն

Ակնհայտ է, որ խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին ու հանձնաժողովներին վերապահված է կարեւոր դեր եւ լիազորությունների բավականին մեծ շարք, որոնց նպատակն է ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը՝ երեխաների պաշտպանության հիմնախնդիրների, այդ թվում բռնության ռիսկ/վտանգ պարունակող դեպքերի վաղ հայտնաբերման եւ վաղ կանխարգելման, ինչպես նաեւ

կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության, խնամքի կազմակերպման ու վերահսկողության իրականացման միջոցով:

ՀՀ ԵՊ համակարգի հաջորդ աստիճանը՝ Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններն (ԸԿԵԻՊԲ) են, որոնք գործում են ՀՀ յուրաքանչյուր մարզում՝ որպես մարզպետարանների կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ Երեւանում՝ որպես քաղաքապետարանի բաժին: Բաժնի հիմնական գործառույթները կապված են մարզում կանանց, երեխաների եւ ընտանիքների հիմնախնդիրների եւ դրանց լուծմանն ուղղված մարզային մակարդակում համապատասխան քաղաքականություն վարելու հետ:

Երեխաներին բռնությունից պաշտպանության համատեքստում բաժիններն ունեն հետեւյալ գործառույթները.

1. ուսումնասիրում են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների եւ նրանց ընտանիքների սոցիալական պայմանները ու կատարում նրանց կարիքների գնահատում
2. ուսումնասիրման եւ գնահատման արդյունքների հիման վրա մշակում են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր եւ ապահովում դրանց իրականացումը
3. ձեռնարկում են երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, պաշտոնական անձանցից եւ այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի եւ առողջությանը սպառնալու, նրա իրավունքների ու շահերի խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում
4. լուծում են ընտանիքում առկա տարաձայնությունները՝ հաշվի առնելով երեխայի շահերը
5. մասնակցում են դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքները եւ շահերը
6. երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության եւ հոգաբարձության մարմնի հետ միաժամանակ իրավասու են անմիջապես վերցնելու երեխային ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, ու խնամակալության եւ հոգաբարձության մարմնի հետ համատեղ ապահովել նրա տեղավորումը յոթ օրվա ընթացքում, դիմելով դատարան՝ ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով եւ այլն

Երեխաների պաշտպանության համակարգում ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների լիազորությունները նպատակուղղված են ապահովելու երեխաների իրավունքների պաշտպանությունը մարզային մակարդակում: Երեխաների պաշտպանության ծառայությունների զարգացման ներկա մակարդակում այդ կառույցները երկակի դերակատարություն ունեն, ժամանակ առ ժամանակ նրանք ստիպված են նաեւ ծառայություններ մատուցողների դերում հանդես գալ, բացի կազմակերպչական ֆունկցիայի իրականացումից: Այնուամենայնիվ, նրանք են **բանալի կառույցը՝ երեխաների հանդեպ վատ վերաբերմունքի պարագայում կազմակերպելու առնչվող կառույցների աշխատանքը եւ որոշումներ ընդունելու երեխայի խնամքի կազմակերպման տարբերակների վերաբերյալ**:

Ցանկացած կառույց/ծառայություն, որը գործ ունի երեխաների հետ եւ հայտնաբերում է բռնության կասկած կամ ակնհայտ դեպք, պետք է հաղորդի Երեխայի պաշտպանության բաժիններին, իսկ այնուհետեւ համագործակցի այդ կառույցի հետ՝ երեխայի/ընտանիքի աջակցության անհատական պլանին համաձայն: ԵՊԲ-ն պատասխանատու է նաեւ բռնության դեպքերի վերանայումների համար, երբ երեխայի/ընտանիքի հետ արդեն որոշակի աշխատանք է իրականացվել, գնահատի փոփոխությունները եւ դրանից կախված՝ փոփոխի աշխատանքային ծրագիրը կամ նոր դերակատարներ ներգրավի:

Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի մյուս օղակն ազգային հանձնաժողովն է, որը պատասխանատու է ոլորտում համապատասխան քաղաքականություն մշակելու, քաղաքականական ծրագրեր իրականացնելու, տարբեր ոլորտներում երեխաների իրավունքների իրագործման կամ պաշտպանության նպատակով համապատասխան օրինագծեր ստեղծելու կամ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու համար:

Ազգային մակարդակում Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը ղեկավարում է ՀՀ ԱՍՀ նախարարը, անդամները ներկայացնում են երեխաների խնդիրներին առնչվող նախարարությունների փոխնախարարները: Հանձնաժողովը համակարգում է երեխաների պաշտպանության ոլորտի աշխատանքները, մշակում քաղաքականական պլան՝ որդեգրած քաղաքականության շրջանակներում: Հանձնաժողովը քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող առանցքային խնդիրները:

Նշենք նաեւ, որ ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումների շրջանակներում, սոցիալական աջակցության ծառայությունների աշխատակիցները 2017թ.-ի հունվարի 1-ից հանդես կգան որպես դեպք վարողներ: Ենթադրվում է, որ բռնության դեպքերի պարագայում նրանք հանդես կգան որպես «բանալի» մասնագետներ, ովքեր ուղղակիորեն կաշխատեն նման դեպքերի հետ, սակայն բավականին ժամանակ կպահանջվի մինչեւ նրանք անհրաժեշտ կոմպետենտություն ձեռք կբերեն: Ինչ-որ ընթացք երեք կառույցները՝ ԽՀՀ, ԸԿԵԻՊԲ եւ ՍԱՏԳ/Բ պետք է աշխատեն զուգահեռ եւ համագործակցաբար մինչեւ գործառույթների վերջնական վերաբաշխումը:

Ստորեւ քննարկենք բռնությունից երեխաների պաշտպանությունը կարգավորող ՀՀ իրավական հիմքերը (համապատասխան օրենքներ եւ նորմատիվ իրավական ակտեր):

1989 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց «Երեխայի իրավունքների մասին» հռչակագիրը, որը, հիմք ընդունելով այն, որ երեխայի իրավունքները պահանջում են հատուկ պաշտպանություն եւ երեխաների դրության մշտական բարելավում ողջ աշխարհում, ամրագրեց երեխայի իրավունքներն ու ազատությունները կենսագործունեության տարբեր ոլորտներում եւ ներդրեց հռչակագրին միացած եւ այն վավերացրած պետությունների պարտականությունների հստակ շարք, որպեսզի այդ իրավունքները հնարավոր լինի իրագործել:

Երեխայի իրավունքների հռչակագիրը երեխա է համարում տասնութ տարեկանից ցածր յուրաքանչյուր անձի եւ երեխային ճանաչում է որպես մարդու իրավունքների լիիրավ կրող: Այն բովանդակում է երեխայի իրավունքների վերաբերյալ 54 հոդված, որոնք կարելի է բաժանել հետեւյալ երեք խմբերի.

- ✓ *Պաշտպանություն.* Այսպիսի ուղղվածություն ունեցող հոդվածներն երաշխավորում են երեխաների անվտանգությունը եւ անդրադառնում այնպիսի առանձնահատուկ հարցերի, ինչպիսիք են, օրինակ՝ երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը, անտեսումը, շահագործումը եւ այդ երեւույթներից երեխաների պաշտպանության ձեւերը
- ✓ *Ապահովում.* Նմանատիպ բովանդակություն ունեցող հոդվածներն անդրադառնում են երեխաների աճի ու զարգացման հատուկ կարիքներին, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, սպորտը եւ այլն
- ✓ *Մասնակցություն.* Նման համատեքստ ունեցող հոդվածները ճանաչում են երեխայի որոշումներ կայացնելու զարգացող կարողությունը եւ հասարակական կյանքի մասնակցության իրավունքը՝ ըստ նրա զարգացման առանձնահատկությունների

Երեխայի իրավունքների հռչակագիրը հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա, որոնք արտացոլված են նաեւ Հռչակագրում ամրագրված իրավունքների էության մեջ: Դրանք են.

1. Խտրականության բացառում՝ բոլոր իրավունքներն անխտիր վերաբերում են բոլոր երեխաներին: Պետությունը պարտավորություն է կրում պաշտպանելու երեխաներին խտրականության, դաժանության ցանկացած դրսեւորումից:
2. Երեխայի շահերի (լավագույն շահի) գերակայություն՝ որեւէ երեխային առնչվող բոլոր գործողություններում կողմնորոշիչ գործոն պետք է լինի երեխայի շահը: Բոլոր դեպքերում երեխայի շահերը գերակայություն ունեն երեխայի շրջապատի բոլոր չափահաս անձանց (օրինակ՝ ծնողներ, ուսուցիչներ, խնամակալներ) շահերի նկատմամբ:
3. Կյանքի, գոյատեւման ու զարգացման իրավունքները՝ երեխայի կյանքի իրավունքը կարեւորագույններից է, իսկ երեխայի գոյատեւման ու զարգացման ապահովումը պետության պարտավորությունն է: Սա, առաջին հերթին, նշանակում է, որ երեխաները չեն կարող ենթարկվել մահապատժի կամ զրկվել կյանքից:
4. Հարգանք երեխայի կարծիքի նկատմամբ. երեխան իրավունք ունի արտահայտել իր կարծիքը եւ *պահանջել,* որ այն հաշվի առնվի իրեն վերաբերող յուրաքանչյուր հարցում:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագիրը, այդպիսով, ամրագրում է յուրաքանչյուր երեխայի՝ կրթական, առողջապահական, մշակութային, տնտեսական, բավարար կենսապայմաններ ունենալու, ազգային ինքնությունը պահպանելու, ընտանիքում մեծանալու եւ ընտանիքի հետ ապրելու, երեխայի՝ բռնությունից պաշտպան լինելու եւ մի շարք այլ իրավունքներ ու ազատություններ, ինչպես նաեւ հռչակագիրը վավերացրած պետությունների պատասխանատվությունը, որպեսզի նրանք իրագործեն այդ իրավունքները եւ ազատությունները: Հռչակագրին միացած պետություններին նաեւ պահանջ է ներկայացվում առաջնորդվել երեխայի լավագույն շահով եւ նպաստել, որ ընտանիքի, համայնքի եւ պետության համար երեխայի իրավունքները դառնան մշտական հոգածության առարկա (ավելի մանրամասն տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագիր):

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքները ներկայացված են ՀՀ Սահմանադրությունում, միջազգային համաձայնագրերում, համապատասխան օրենքներում եւ նորմատիվ իրավական ակտերում (կառավարության որոշումներ, հրամաններ եւ այլն): Անդրադառնանք, երեխաների իրավունքների պաշտպանությանը, **երեխային բռնությունից պաշտպանելու իրավունքի** համատեքստում:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեբանական եւ այլն) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առեւտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից եւ նրա իրավունքների եւ օրինական շահերի այլ ոտնահարումից: Երեխաների առողջության դեմ ուղղված հանցագործություններն առանձնացված չեն ՀՀ Քր. օր.-ում եւ դիտարկվում են առողջության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր համատեքստում կամ առանձին ծանրացնող հանգամանքի տեսքով, իսկ սեռական բռնություններն ու երեխաների թրաֆիքինգը կամ շահագործումը առանձին հոդվածներով ամրագրված են: Երեխաների դեմ սեռական հանցագործությունների վերաբերյալ օրենսդրությունն էապես բարելավել է 2013թ.-ի դեկտեմբերի 23-ին ընդունված որոշումների արդյունքում: Երեխաները պաշտպանված են նաեւ շահագործումից: Մասնավորապես, ՀՀ Քր. օր.-ի 132.2 -րդ հոդվածի համաձայն՝ երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ծանր հանցագործություն: Ի տարբերություն չափահասների թրաֆիքինգի, այստեղ նշված չեն հանցագործության կատարման եղանակները, հետեւաբար երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ավարտված, անկախ այն հանգամանքից թե երեխայի նկատմամբ կիրառվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, դրա սպառնալիքը, խաբերությունը, թե այլ եղանակ:

Ինչ վերաբերվում է երեխային վիրավորանքից, հոգատարության բացակայությունից, անտեսումից կամ կոպիտ վերաբերմունքից զերծ պահելուն, ապա այս ոլորտի վերաբերյալ օրենսդրությունը հստակ չէ: Մասնավորաբար, այս երեւույթների նկարագրման ու դրանց դեմ պայքարի փորձ է իրականացվել «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը դեռ լրամշակման փուլում է գտնվում: Իսկ այլ՝ հատուկ ոլորտային իրավական ակտ ՀՀ-ում գոյություն չունի:

Փաստացի իրավիճակը. Հարկ է նշել, որ ՀՀ-ում բռնության ոչ բոլոր դրսեւորումներն են քրեորեն պատժելի, հետեւաբար հրապարակվող պաշտոնական վիճակագրությունն արտացոլում է միայն այն հատվածը, որը վերաբերում է բռնության հանցավոր դրսեւորումներին, մինչդեռ՝ ՀՀ-ում առավել հաճախ հանդիպում են երեխաների նկատմամբ բռնության՝ քրեորեն չպատժվող դրսեւորումները (անտեսում, մեկ հարված, հոգեբանական բռնության դրսեւորումներ եւ այլն): Երեխաների նկատմամբ բռնության դրսեւորումները պայմանավորված են ընտանիքի եւ հասարակության կողմից երեխային որպես անհատ չընկալելու կամ մասնակի ընկալելու հանգամանքով: Ավելին, եթե ծնողը փորձում է դաստիարակել երեխային իր չիրականացված երազանքներին հասցնելու նպատակով, ապա երեխայի անհատականությունն «անհետանում է» ընտանիքի ու ընտանիքի անդամների պահանջների մեջ, ինչը կարող է հանգեցնել երեխայի ինքնության դեֆորմացիայի կամ հետագայում ինքնուրույն որոշում կայացնելու անկարողության: Ցավոք, ՀՀ-ում երեխայի նկատմամբ ծեծը, ֆիզիկական այլ բռնությունը, հոգեբանական բռնությունը որպես դաստիարակչական մեթոդներ դեռ կիրառվում են:

Ինչ վերաբերում է երեխաների նկատմամբ քրեորեն պատժելի բռնության դեպքերի, ըստ վիճակագրության՝ երեխաների նկատմամբ իրականացվում են ՀՀ Քր. Օր.-ի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ (առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը), 119-րդ հոդվածով (խոշտանգումը), 131-րդ հոդվածով (առեւանգումը), սեռական հանցագործությունները (հանցագործություններից ամենատարածված խումբը) եւ այլն: Ընդհանուր առմամբ, 2004-2014թթ. ընթացքում երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործություններով հարուցվել է մոտ 140 քրեական գործ, որից 7 գործով հանցագործը նույնպես անչափահաս է եղել: Տարեց տարի Հայաստանում ավելանում են երեխաների պոռնկության եւ մուրացկանության շահագործման դեպքերը: 2011թ.-ից առ այսօր գրանցվել է երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման 11 դեպք: Մուրացկանության շահագործման բոլոր դեպքերն իրականացվել են տղա երեխաների նկատմամբ, միայն մեկ քրեական գործով տուժողն անչափահաս աղջիկ է եղել, ով շահագործվել է մոր փաստացի ամուսնու կողմից: Սեռական շահագործման բոլոր դեպքերով զոհերն աղջիկներ են եղել: Չնայած երեխայի նկատմամբ բռնության ու քրեորեն պատժելի դրսեւորումների պետությունն իրականացնում է պայքարի հստակ մեթոդներ, միեւնույն է դրանք բավարար չեն երեխային բռնությունից պաշտպանելու համար, քանի որ քրեորեն չպատժելի դեպքերը, իսկ երբեմն նաեւ մասնավոր մեղադրանքի դեպքերը (ծեծ, դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը եւ այլն) մնում են առանց պատշաճ քննության:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային քաղաքականությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014 թ. -ի փետրվարի 27-ի N-303-ն ՀՀ Կառավարության որոշման 53-րդ կետի համաձայն՝ պետք է մշակել երեխայի հանդեպ բռնության երեւույթի դեմ պայքարի հայեցակարգը եւ միջոցառումների ծրագիրը: Այդ գործողությունը նախատեսված է կատարել ՀՀ ԱՍՀՆ-ի եւ ՀՀ Ոստիկանության կողմից միասնական համապարփակ փաստաթուղթ ներկայացնելով:

Երեխայի պաշտպանությամբ զբաղվող կառույցներում չկան անձնակազմի համար մշակված հատուկ կանոնակարգեր, որոնք կկարգավորեին երեխաների հետ հարաբերությունները երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով: Բռնություններից պաշտպան լինելու համապատասխան «Ազգային ուղղորդման ընթացակարգի» բացակայությունը նույնպես նպաստում է ստեղծված անցանկալի իրավիճակին: Երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում գործնականում մասնագետները հիմնականում դիմում են սաստելու, ենթարկելու, ավտորիտար կառավարման այլ միջոցների: Արտահայտությունները եւ ձեւակերպումները, որոնք անձնակազմի մի մասը գործածում է երեխաներին եւ նրանց ծնողներին որակելիս, ուղղակի խախտում է նշանակում էթիկական եւ մասնագիտական տեսանկյուններից: Վերոնշյալ կառույցներում պատժաձեւերի «զամբյուղը» բավականին բազմազան է: Ի լրումն լայնորեն տարածված «անկյուն կանգնեցնել», «բղավել», «ծեծել» ձեւերին՝ կարելի է հանդիպել նաեւ «հայհոյանք», «մութ տեղում պահել» եւ այլ ձեւերի, ինչպես նաեւ այլ, ոչ ստանդարտ ձեւեր՝ երեխաներին անտեսելը, հոգեբանի մոտ գնալուց զրկելը, բարեւին չպատասխանելը, ճաշից զրկելը եւ այլն: Հատկանշական է, որ երեխաների մեծ մասը ներշնչված է վերը թվարկված պատժաձեւերը արդար համարելով:

Անդրադառնանք նաեւ, **երեխայի բռնություններից պաշտպանության գործընթացի կազմակերպմանը**, որը հավասարապես վերաբերում է թե՛ ընտանեկան բռնություններին, թե՛

երեխայի խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղի ունեցող դեպքերին: Երկու դեպքում էլ հատուկ ուշադրության խնդիր է հանդիսանում երեխային մարմնական պատիժ հասցնելը:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված են երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափարոշիչները: Որոշման մեջ ներկայացված «Երեխայի իրավունքների պաշտպանությունը» թիվ 2 Չափորոշիչի 6-րդ կետում ամրագրված է, երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է երեխայի պաշտպանությունը՝

- ✓ հոգեբանական եւ ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից ու այլասերումից
- ✓ դաժան վերաբերմունքից
- ✓ հանցագործություններից
- ✓ անուշադրությունից ու անարդարությունից
- ✓ առողջությունը վտանգող նյութերից եւ կյանքը վտանգող պայմաններից

Հարկ է նշել հետեւյալը՝ վերը նշված խնամքի հաստատություններում երեխաների հանդեպ մարմնական պատժի բոլոր ձեւերը խիստ արգելված են նաեւ գործող կանոնադրությամբ:

Բռնություններից երեխայի պաշտպանությանն ուղղված քայլերի շրջանակում պետք է նաեւ նշել «Երեխայի հանդեպ բռնության երեւույթի դեմ պայքարի հայեցակարգի» ընդունումը ՀՀ կառավարության կողմից, որի նպատակն է սահմանել երեխայի հանդեպ բռնության երեւույթի վերացմանը, կանխարգելմանը եւ բռնության ենթարկված երեխայի, ինչպես նաեւ բռնություն գործադրող անձի վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Ներկայումս քննարկվում է նաեւ բռնություններից պաշտպանության մասին օրենքի ընդունման հարցը:

Ընդհանուր առմամբ, պետությունը ձեռնարկել է որոշակի օրենսդրական քայլեր երեխաներին ու, առհասարակ, ողջ բնակչությանը դաժան վերաբերմունքից ու շահագործումից պաշտպանելու համար: Մասնավորապես, հակաթրաֆիքինգի ուղղությամբ պետությունը մշակել է քաղաքականություն, ինչպես նաեւ սատարում է այն ՀԿ-ների գործունեությունը, որոնց նպատակն է հակաթրաֆիքինգային գործունեությունը: Սակայն երեխաների խնդիրներն այդ ծրագրերում դեռեւս հատուկ շեշտադրումներ չեն ստացել:

Կոնկրետ իրավիճակների պարագայում օգնության կազմակերպման գործընթացը պատկերված է Գծապատկեր 1-ում: Պետք է նկատի ունենալ, որ սխեման վերաբերում է բարձր ռիսկի կամ դրա կասկածի դեպքերին: Միջին եւ ցածր ռիսկերի պարագայում (երբեմն էլ նաեւ՝ բարձր) երեխային ընտանիքից դուրս բերելու կարիքի առկայության պարագայում գլխավոր դերակատարները ԵԻՊԲՆ եւ ոստիկանությունն են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում դեռեւս սահմանված չեն ուղղորդման ընթացակարգերը, առավել եւս կարեւոր է, որ կազմակերպությունը ներքին հստակ ընթացակարգեր ունենա՝ պաշտպանելու համար երեխաներին հնարավոր բռնարարքներից եւ անգործության հետեւանքով հասցվող վնասից:

Որպես ոչ պետական կառույց՝ «Հայկական Կարիտաս»-ը ներկա դրությամբ կարող է ստանձնել «կարիտասյան» միջավայրում երեխային վնաս հասցնող գործողությունները, բռնարարքները չեզոքացնելու եւ նվազագույնի հասցնելու դերը: Իսկ կազմակերպությունից դուրս

բռնությունների հասցեագրման, արձագանքման համար ներկա դրությամբ գործնական քայլ կարող է համարվել ԵՊ կառույցներին ահազանգելը, համագործակցային մեթոդով խնդիրներին լուծումներ որոնելը։

Գծապատկեր 1. Բարձր ռիսկի ներքո գտնվող երեխաների «հետագիծը[5]»



[5] ՀՀ-ում դեռեւս չի գործում բռնարարին միջավայրից հեռացնելու պրակտիկան, այդ իսկ պատճառով պետք է նկատի ունենալ, որ այն դեպքերում, երբ երեխան ծնողներից որեւէ մեկի, մասնավորապես մոր հետ պետք է հեռացվի բռնության միջավայրից, ապա այդ դեպքում պետք է դիմել հետեւյալ կենտրոնների աջակցությանը՝

- «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
  Թեժ գիծ ծառայություն՝ **099 88 78 08**
- «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն
  Թեժ գիծ վստահության ծառայությունը՝ **010 54 28 28, 0 800 80 850**

Տարատեսակ բռնությունների ենթարկված երեխաների հայտնաբերման բարդությունները հնարավորություն չեն տալիս ադյունավետ կազմակերպելու նրանց համարժեք օգնության տրամադրումը: Գրեթե բոլոր հաստատություններում գտնվող երեխաների զգալի մասն ընտանիքներում անցել են բռնության տարբեր փորձառության միջով եւ որպես միջամտության ձեւ՝ տեղավորվել հաստատություններում: Բռնությունների ենթարկված երեխաների մեծ մասը, որպես կանոն, չեն ստանում համապատասխան ծառայություններ:

Բռնության երեւույթի քրեական տեսանկյունից ապացուցման բարդությունների պատճառով եւ ընտանիքում առկա ռիսկայնությունը հաշվի առնելով՝ երեխաներին տեղափոխում են ընտանիքներից, մինչդեռ բռնարարը շարունակում է ապրել ընտանիքում: Այս խնդիրը հատկապես ակտուալ է սեռական բռնությունների ենթարկված երեխաների պարագայում:

Ինչպես արդեն նշել ենք, ԵՊ Մարզային բաժինները ՀՀ-ում երեխաների պաշտպանության հիմնական ագենտն են: Բաժիններն ունեն կանոնադրական պարտավորվածություն արձագանքելու երեխաների պաշտպանությանը վերաբերող բոլոր հայտերին եւ համակարգելու աշխատանքը: Նրանք ունեն պատասխանատվություն՝ աշխատելու յուրաքանչյուր դեպքի հետ եւ տրամադրելու դրան վերաբերող ցանկացած ինֆորմացիա: Երեխայի պաշտպանության դեպքերը կարող են բացահայտել երեխաների հետ կապված լրացուցիչ խնդիրներ, ինչը նշանակում է նոր գնահատումներ, որոնց իրականացման համար կարեւոր է բազմամասնագիտական թիմի յուրաքանչյուր անդամի ներդրումը, իսկ թիմի մեջ մտնում են կոնկրետ դեպքի հետ առնչվող բոլոր կառույցների ներկայացուցիչները՝ դպրոց, բուժհիմնարկ, ոստիկանություն, խմբակ, խնամակալության հանձնաժողով, ՀԿ-ներ եւ այլն:

Ինֆորմացիայի արդյունավետ փոխանակումն օգնում է ապահովել խոցելի երեխաներին ուղղված համակարգված աշխատանքը: Հետազոտությունները եւ փորձը ցույց են տալիս, որ միայն այն դեպքում, երբ ինֆորմացիան տարբեր աղբյուրներից է տրամադրվում, հնարավոր է լինում լիարժեք գնահատել, թե արդյոք երեխան ռիսկի կամ բռնության է ենթարկվում:

Յուրաքանչյուր ոք կարող է հանդիպել կամ լսել բռնության ենթարկվող երեխայի կամ բռնություն գործադրող ծնողի մասին: Դա կարող է տեղի ունենալ ամենուր եւ ցանկացած պահի: Ինչ էլ որ լինի, հիշենք, որ երեխայի պաշտպանությունը յուրաքանչյուրի պարտականությունն է: Նվազագույնը, որ կարող են անել մասնագետները տեղերում, դա.

- ✓ աչալուրջ լինել բռնության եւ անտեսման պոտենցիալ գործոնների նկատմամբ
- ✓ աչալուրջ լինել այն ռիսկերի նկատմամբ, որոնք կարող են առաջացնել երեխաների հանդեպ բռնություն գործադրող եւ նրանց կարիքները անտեսող խնամողները
- ✓ փոխանակել ինֆորմացիան, վերլուծել այն այնպես, որ երեխաների կարիքների եւ իրավիճակի գնահատումը հնարավոր լինի իրականացնել
- ✓ աջակցել այն գործողություններին, որոնք անհրաժեշտ են երեխաներին պաշտպանելու համար
- ✓ պարբերաբար վերանայել երեխաների խնդիրների լուծման ուղղությամբ արված քայլերի արդյունքները

- ✓ համագործակցել ծնողների հետ, քանի որ հակառակ դեպքում աշխատանքը չի ապահովի ցանկալի արդյունքներ

Եթե իրավիճակն այնպիսինն է, որ անհապաղ պաշտպանության կամ շտապ բժշկական միջամտության կարիք կա, ապա անհրաժեշտ է.

- ✓ անհապաղ կապվել ԵԻՊԲ-ի, ոստիկանության եւ համապատասխան բժշկական ծառայության հետ
- ✓ քննարկել իրավիճակը ծնողի/խնամակալի եւ երեխայի հետ, եթե դա անհարմար կամ վտանգավոր չէ (որոշ դեպքերում դա կարող է երեխային ավելի մեծ ռիսկի տակ դնել)
- ✓ մանրամասն փաստաթղթավորել դեպքը եւ ձեռնարկված գործողությունները
- ✓ ինֆորմացիան փոխանակել այն մասնագետների հետ, ովքեր ծանոթ են երեխային/ընտանիքին (դպրոց, մանկապարտեզ եւ այլն)

Եթե իրավիճակը վտանգավոր չէ , ապա.

- ✓ քննարկել իրավիճակը ծնողի/խնամակալի հետ, եթե դա անհարմար կամ վտանգավոր չէ (երեխայի նկատմամբ սեռական բռնության առկայության դեպքում դա կարող է խոչընդոտ հանդիսանալ եւ վտանգել երեխային)
- ✓ լսել երեխային եւ հասկանալ նրա զգացմունքները
- ✓ ստուգել երեխայի/ընտանիքի մասին առկա այլ տեղեկությունները
- ✓ անհրաժեշտության դեպքում խորհուրդ հարցնել որոշում կայացնող կամ ծառայություն մատուցող մասնագետներից մեկից կամ այլ փորձառու անձից
- ✓ քննարկել հարցն այն գործընկերների հետ, ովքեր կարող են տեղյակ լինել երեխայի/ընտանիքի իրավիճակին, ինչպիսիք են սոցիալական աշխատողը, ընտանեկան բժիշկը կամ ուսուցիչը
- ✓ մանրամասն փաստաթղթավորել դեպքը եւ ձեռնարկված գործողությունները
- ✓ որոշել երեխային պաշտպանության կառույցներին եւ համապատասխան ծառայություն ուղղորդելու անհրաժեշտությունը

Խնդրի միջամտության մասնագիտական համատեքստը. համաձայն երեխաներին բռնությունից պաշտպանության հայեցակարգային մոտեցումների բոլոր կասկածելի իրավիճակներն անհրաժեշտ է քննարկել երեխայի պաշտպանության բաժինների, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ ոստիկանության հետ:

Երեխաների պաշտպանությունն ու բռնության կանխարգելումը հնարավոր է, եթե ծնողները/խնամակալները բավականաչափ համագործակցեն ծառայությունների եւ կառույցների հետ: Երեխայի հետագան երաշխավորված է, եթե ծնողը մասնակցում է նրա պաշտպանության բոլոր փուլերին, որպես հիմնական դերակատար եւ քննադատության չի ենթարկվում:

Երեխայի տարիքին համապատասխան անհրաժեշտ է գտնել ձեւեր եւ մեթոդներ՝ բացատրելու համար երեխաներին, թե ինչու է անհրաժեշտ, օրինակ, երեխային տեղափոխել ընտանիքից: Երեխան իրավունք եւ կարիք ունի հասկանալու իր իսկ պաշտպանության խնդիրները: Նրա տեսակետներն ու զգացմունքները պետք է հաշվի առնել՝ իրեն վերաբերյալ կայացվող բոլոր որոշումներում եւ գործողություններում, բավարար ժամանակ տրամադրել

նրան բացատրելու եւ տեղեկացնելու դրանց մասին: Կարիքները գնահատելիս եւ բավարարելիս՝ պետք է լինել զգայուն եւ ուշադիր երեխայի ընտանիքի, ավանդույթների, տարբերվող մշակույթի եւ կրոնի պարագայում: Համագործակցության նպատակն է աշխատել միասին՝ պաշտպանելու եւ ապահովելու երեխայի բարեկեցությունը:

Կլինեն բացառություններ, երբ հնարավոր չի լինի համագործակցել ծնողի/խնամակալի հետ մասնագիտական առումով, որովհետեւ ծնողը հասանելի չէ կամ այլ պատճառներով: Անկախ պատճառի տեսակից, անհրաժեշտ է երեխաների կարիքների նկատմամբ պատշաճ վերաբերմունք ցուցաբերել: Ցանկացած ուշացում կարող է վտանգել երեխայի ապահովությունը եւ ավելի մեծ ռիսկի ենթարկել նրան:

Ծնողին երեխայի խնամքի եւ զարգացման կարիքների մասին «ուսուցանումը» երբեք հեշտ չի լինի եւ միշտ չէ, որ կընդունվի նրա կողմից: Այնուամենայնիվ, երբեք պետք չէ համաձայնել ծնողների հետ, որ շարունակեն երեխային խնամել այնպիսի պայմաններում, որոնք կարող են վտանգավոր լինել երեխայի կյանքի ու առողջության համար:

Շատ ծնողներ ստում են՝ բռնությունը թաքցնելու համար, մյուսները փնտրում են «ըմբռնում» ու ակնկալում մասնագետների ուշադրությունը, աջակցությունը՝ սեփական կարիքները բավարարելու համար: Ինչպիսին էլ որ լինեն պատճառները, պետք է ուշադրություն դարձնել՝ արդյոք ծնողի համագործակցելու ձգտումը երեխայի համար ինչ-որ արդյունքի է բերում, թե ոչ:

Յուրաքանչյուր դեպք պետք է դիտարկել անհատականորեն եւ երեխայի ու ընտանիքի մասին ունեցած ողջ ինֆորմացիայի հիման վրա: Կարեւոր է նաեւ համագործակցությունն այլ կազմակերպությունների հետ:

Համագործակցություն առնչվող կառույցների եւ մասնագետների միջեւ. անհրաժեշտ է, որպեսզի բոլոր մասնագետները եւ կառույցների ներկայացուցիչները համատեղ եւ համակարգված աշխատեն երեխայի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Երեխաների պաշտպանության արդյունավետությունը միայն այն դեպքում է հնարավոր, երբ առողջապահության, կրթության եւ սոցիալական ոլորտի աշխատողները համագործակցելով աշխատում են՝ որպես բազմամասնագիտական թիմի անդամներ:

Յուրաքանչյուրը պետք է ճշգրտորեն իմանա իր դերը եւ հասկանա մյուս կազմակերպություններում գործող գործընկերների դերերը: Գործընկերների միջեւ ինֆորմացիայի փոխանակումն ակնհայտորեն նպաստում է աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը: Երբեմն կարող են ծագել լուրջ խնդիրներ նույն երեւույթի տարըմբռնումների, դերերի եւ պատասխանատվությունների ոչ հստակ սահմանման պատճառով:

Երեխայի դեպքի քննարկումը ֆորմալ հանդիպում է երեխային առնչվող կառույցների եւ կազմակերպությունների ներկայացուցիչների միջև: Դա մասնագետների եւ ընտանիքի միջեւ քննարկումն է, որը կենտրոնանում է ռիսկի ենթակա երեխայի վերաբեյալ ինֆորմացիայի փոխանակման վրա: Դեպքի քննարկման նպատակն է վերլուծել ու գնահատել ընտանիքում երեխայի համար ռիսկի մակարդակը: Դեպքի քննարկումը ներառում է նաեւ ծնողներին կամ խնամակալներին, կամ էլ նրանց ներկայացուցիչներին:

Քննարկումներում սովորաբար ներառում են նաեւ երեխաներին՝ կախված նրանց տարիքից ու գիտակցության մակարդակից: Ի լրումն, հարկ է նկատի ունենալ նաեւ երեխայի կրած վնասի ազդեցությունը:

Քննարկումն ապահովում է գնահատման եւ պլանավորման բազմաառարկայական բնույթը: Այն մեկ տեղում է հավաքում այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր առնչվում եւ պատասխանատու են երեխայի ու ընտանիքի համար (սոցիալական ծառայություններ, առողջապահական ծառայություններ, ոստիկանություն, կրթություն, հասարակական կազմակերպություններ), ինչպես նաեւ նրանց, ովքեր ունակ են մասնագիտական խորհրդատվություն տալ:

Կան դեպքի 2 տիպի քննարկումներ՝

ա. Նախնական եւ

բ. վերանայող

Նախնական քննարկումը տեղի է ունենում՝ պաշտպանության կազմակերպման կարիքից ելնելով՝ ո՞վ ինչպիսի՞ գործողություններ պետք է անի, ի՞նչ ժամկետներում, ո՞ր ուղղությամբ եւ այլն: Վերանայող քննարկումը կազմակերպվում է նախնականից մոտ 4 ամիս հետո, յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, մինչեւ այն ժամանակ, երբ որոշվում է, որ ռիսկը երեխայի համար վերացել է:

Երեխայի պաշտպանության դեպքի քննարկման մասնակիցները պետք է հետեւեն գաղտնիության կանոններին. քննարկված ամեն ինչ գաղտնի է:

Դեպքի արձանագրում. երբ ռիսկը առկա է, երեխայի դեպքը գրանցվում է ԸԿԵԻՊԲ-ում, որպես պաշտպանության կարիք ունեցող դեպք: Գրառումները պետք է լինեն շարունակական եւ պարզ. ինֆորմացիան պետք է **կանոնավոր** կերպով վերանայվի եւ լինի հեշտ հասանելի, քանի որ այլ մասնագետներ նույնպես պետք է այն կարդան: Եթե երեխան տեղափոխվել է, պետք է ապահովել, որպեսզի նախնական գրառումները հնարավորինս արագ «հետեւեն նրան»: Ծնողները/խնամակալները եւ երեխաները պետք է տեղյակ լինեն գրառումների մասին (նրանք իրավունք ունեն կարդալ այդ գրառումները): Ըստ այդմ, մասնագետները պետք է աչալուրջ լինեն ձեւակերպումների, վերանայումների հարցում: Օրինակ, քանի դեռ խոքսը միայն կասկածի մասին է, չի կարելի օգտագործել «բռնություն է գործադրվել ծնողի կողմից» արտահայտությունը, փոխարենը կարելի է նշել. «երեխան ներկայացնում է ծնողների հետ հարաբերությունների իրավիճակներ, որոնք իրեն անհնազանդություն են պատճառում» եւ այլն:

Այսպիսով այստեղ մենք անդրադարձանք, այն իրավական հիմքերին եւ ընդհանուր մոտեցումներին, որոնք գործում են ՀՀ-ում եւ որոնց շրջանակներում պետք է կառուցվի նաեւ «Հայկական Կարիտաս»-ի երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականությունը:

ԲԱԺԻՆ 2. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

«Հայկական Կարիտաս»-ի առաքելությունն է. «Սիրով եւ սրտացավությամբ ծառայել տարբեր խոցելի խմբերին՝ հարգելով յուրաքանչյուր անհատի արժանապատվությունը»:

«Հայկական Կարիտաս»-ի առաքելությունը դիտվում է Կաթողիկե եկեղեցու ընդհանուր առաքելության, սոցիալական ուսուցման համատեքստում: Ըստ այդմ համարվում է, որ երեխաների խնամքն ու պաշտպանությունը պետք է այնպես իրականացվեն, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը ձեռք բերի իրեն անհրաժեշտ ազատությունը, ծառայի Աստծուն եւ հնարավորություն ստանա իրացնել իրեն շնորհված աստվածատուր ներուժը: Միեւնույն ժամանակ կազմակերպության հիմքում ընկած աստվածաշնչյան սկզբունքներին համաձայն երեխաների ու չափահասների փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխադարձ սիրո, արդարության եւ հարգանքի վրա:

Վերոնշյալ նպատակների իրականացումը պահանջում է երեխաների պաշտպանության ներքին կանոնակարգերի, ուղղորդումների եւ ի վերջո նման քաղաքականության առկայություն: Նման փաստաթղթերի առկայության կարեւորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց թվում են.

1. *Երեխաների անվտանգության ապահովմանն ու պաշտպանությանը վերաբերող խնդիրների գրավոր փաստաթղթի միջոցով ամրագրումը եւ դրա կիրառումը պրակտիկայում հնարավորություն են տալիս նվազեցնել շահառու-երեխաների չարաշահման կամ շահագործման ենթարկվելու ռիսկը:*
2. *Երկրորդ հանգամանքը ծառայության (կազմակերպության) անձնակազմի եւ կամավորների պաշտպանությունն է: Ինչի՞ մասին է խոսքը: Հաշվի առնելով այն, որ երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպության անձնակազմի անդամները, անկախ այն հանգամանքից ուղղակիորեն են ներգրավված երեխաների հետ աշխատանքում, թե ոչ, այնուամենայնիվ նրանց մասին տիրապետում են այնպիսի տեղեկատվության, որի օգտագործման սահմանները պետք է լինեն հստակ, համաձայն գործող էթիկական սկզբունքներին: Նման կանոնների ամրապնդման եղանակներից մեկն էլ երեխաների պաշտպանության քաղաքականությունն է, համապատասխան ուղղորդումներով:*
3. *Որպես վերջին հանգամանք առանձնացվում է կազմակերպության պաշտպանությունը: ԵՊ քաղաքականության, համապատասխան ընթացակարգերի առկայությունը ամրապնդում եւ պաշտպանում են կազմակերպությունը, մի կողմից կանխելով ոչ կոմպետենտ, շահադիտական միտումներ ունեցող անձանց մուտքը կազմակերպություն, մյուս կողմից ավելի արդյունավետ դարձնելով աշխատակիցների իրավունքների,*

շահերի, դիրքորոշումների պաշտպանությունը: Այսպիսով, հնարավոր դարձնելով արդյունավետ պրակտիկայի իրականացման ապահովումը:

Երեխաների պաշտպանության համապատասխան քաղաքականության, ներքին կանոնակարգերի եւ ուղղորդումների առկայությունը, հնարավորություն են տալիս հասնել եռակի դրական արդյունքի, ապահովելով ցանկալի ելք թե՛ շահառուների, թե՛ կազմակերպության եւ, թե՛ վերջինիս աշխատակիցների համար:

Նման մոտեցումը համապատասխանում է նաեւ «Հայկական Կարիտաս»-ի երեխաներին պաշտպանելու ընթացքում հետեւողականությունը պահպանելու ռազմավարական մոտեցմանը: Վերջինիս արդյունավետ կիրառումը, իր հերթին պահանջում է ՀՀ-ում երեխաների պաշտպանությունը կազմակերպելիս կիրառել **մշակութային եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի տեսանկյունից համատեքստային մոտեցումներ**: Դա է պատճառը, որ չնայած «Հայկական Կարիտաս»-ի կողմից մշակված «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականությունը» հիմնված է Կարիտաս Ինթերնեշնլի (Caritas Internationalis) կողմից երեխաների պաշտպանության քաղաքականությանը առաջադրվող սկզբունքների եւ ընդհանուր պահանջների վրա, այնուամենայնիվ, սույն փաստաթղթում արտահայտված դրույթներում հաշվի են առնված տեղական մշակութային եւ իրավիճակային առանձնահատկությունները:

Այսպիսով, ԵՊ ներքին ընթացակարգի ձեւավորումը կարևոր է, քանի որ.

- արդյունավետ քաղաքականությունը պահանջում է տեղայնացված մոտեցումների կիրառում
- ներքին ընթացակարգերի առկայությունը հնարավորություն կստեղծի կանխարգելել ռիսկերը եւ ոչ թե արձագանքել արդեն գոյություն ունեցող դեպքերին
- կապահովվի համընդհանուր մոտեցումների կիրառումը բոլոր աշխատակիցների կողմից
- ոչ ստանդարտ իրավիճակներին արագ եւ հրատապ արձագանքելու հնարավորություն կստեղծվի
- կնպաստի գործընկեր կառույցների եւ շահառուների հետ աշխատանքում հստակ պատկերացնելու գործունեության սահմանները
- երեխաների համար անվտանգ միջավայր կերաշխավորի
- աշխատակիցներին կուղղորդի աշխատանքում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք չեն վնասում երեխային
- կազմակերպությանը կպաշտպանի իր իմիջի վնասման հնարավոր ցանկացած դրսեւորումից (աշխատակիցների գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար կատարած արարքների հետեւանքով):

1. «Հայկական Կարիտաս»-ը «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականություն»-ն ընդունելով երաշխավորում է, որ երեխաների անվտանգության եւ պաշտպանության ապահովման վերաբերյալ կազմակերպության դիրքորոշումն ամրագրված լինի վերջինիս գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերում: «Հայկական Կարիտաս»-ը (այսուհետ՝ կազմակերպություն) հանձն է առնում կիրառել, կանոնավոր կերպով իրականացնել մշտադիտարկում եւ վերանայել սույն փաստաթղթով երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման վերաբերյալ ամրագրված դրույթները:
2. «Հայկական Կարիտաս»-ը իր կողմից իրականացվող ծրագրերում, այդ թվում մատուցվող ծառայությունների շրջանակներում, նպատակ ունի գործել, ելնելով երեխայի առավելագույն շահի սկզբունքից եւ օգտագործել բոլոր հնարավորությունները նպաստելու երեխաների անվտանգության ապահովմանը ընտանիքներում եւ համայնքներում: Այն ներառում է.

   ա. բողոքների եւ դրանց արձագանքման մեխանիզմների մշակում

   բ. երեխաների պաշտպանության ռիսկերի եւ խնդիրների քննարկում գործընկերների (այդ թվում պետական եւ ոչ պետական կառույցներ) հետ

   գ. աջակցել գործընկերներին երեխաների համար առավել անվտանգ կազմակերպական միջավայր ձեւավորելու եւ գործունեություն ծավալելու հարցում

   դ. մանրամասն պլան մշակել երեխաների պաշտպանության ծրագրերի վերանայման համար (նախընտրելի է ծրագրերի վերանայումն իրականացնել տարեկան պարբերականությամբ):
3. Սույն քաղաքականության որդեգրմամբ, կազմակերպությունը նպատակ ունի իր գործունեությամբ դառնալ երեխաներին բռնությունից պաշտպանելու եւ բռնության դեպքերին արձագանքելու լավագույն օրինակներից մեկը հանրապետությունում: Կազմակերպությունն երաշխավորում է, որ բռնության վերաբերյալ ցանկացած կասկածի դեպքում անհապաղ եւ պատշաճ քայլեր են ձեռնարկվում, այդ թվում բռնության զոհերին տրամադրվում է անհրաժեշտ աջակցություն, իսկ բռնություն գործած անձինք ենթարկվում են համապատասխան պատասխանատվության:
4. Կազմակերպությունն երաշխավորում է, որ սույն քաղաքականությունը եւ դրանում ամրագրված դրույթները կիրառվում են կազմակերպության բոլոր այն ծրագրերում եւ ծառայություններում, որոնցում ներգրավված են երեխաներ:
5. Սույն քաղաքականության շրջանակներում սահմանվում են այն բոլոր ընթացակարգերն ու ուղղորդումները, որոնցով պետք է առաջնորդվեն կազմակերպության աշխատակիցներն ու կամավորները՝ բռնության կասկածի առկայության դեպքում:
6. «Հայկական Կարիտաս»-ի անձնակազմն ունի միեւնույն էթիկական եւ իրավական պարտականություններն երեխաների նկատմամբ, ինչ ՀՀ բոլոր քաղաքացիները, այն է՝ ապահովել նրանց պաշտպանությունը ցանկացած տեսակի վնասից տանը, դպրոցներում, խնամքի հաստատություններում, համայնքում եւ այլուր: Սույն քաղաքականությունն անդրադառնում է այն լրացուցիչ պարտականություններին, որոնք անձնակազմը եւ

կամավորները ունեն՝ երաշխավորելու «Հայկական Կարիտաս»-ի, նրա գործընկերների եւ ծրագրերի հետ առնչություն ունեցողների անվտանգությունն երեխաների բարեկեցության տեսանկյունից։

7. «Հայկական Կարիտաս»-ն երաշխավորում է, որ համագործակցում է այնպիսի տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ, որոնք ուղղորդվում են երեխաների պաշտպանության ապահովման սկզբունքներով եւ գործառնում երեխաների անվտանգության տեսանկյունից կոմպետենտ միջավայրում։ «Հայկական Կարիտաս»-ը համատեղում է գործընկերների հետ իր ջանքերը՝ խթանելու ընտանեկան, միջավայրային եւ այլ տեսակի ռիսկերից երեխաների պաշտպանությունը եւ առաջնահերթությունը տալիս այն կազմակերպությունների հետ համագործակցությանը, որոնց հետ ունի երկարատեւ ու կայուն համագործակցության փորձ եւ բացառելով նրանց, ովքեր գնահատվել են որպես ռիսկային՝ երեխաների հետ աշխատանքում։ Գործընկերների հետ համատեղ «Հայկական Կարիտաս»-ը կաշխատի երեխաների չարաշահման դեպքերին արձագանքելու եւ դրանց պատշաճ կերպով միջամտելու ուղղությամբ։
8. «Հայկական Կարիտաս»-ը նախաձեռնում է բոլոր քայլերը՝ գործընկերների հետ փոխհարաբերություններում ապահովելու երեխաների պաշտպանության հարցերի վերաբերյալ փոխադարձ ուսուցման եւ լավագույն պրակտիկայի զարգացման վրա հիմնված միջավայր (համատեղ ուսուցումներ, փորձի փոխանակում, համատեղ քննարկումներ)։ Կազմակերպությունը գործընկերների հետ հարաբերություններում կիրառում է տեղեկատվության փոխանակման ընդհանուր գործիքներ եւ չափանիշներ՝ նախապես համաձայնություն ձեռք բերելով դրանց կիրառման վերաբերյալ։
9. «Հայկական Կարիտաս»-ը նախքան երեխաներին ծառայություններ մատուցող գործընկեր կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը, ծանոթանում է տվյալ կազմակերպությունում երեխաների պաշտպանության ընթացակարգերին եւ մասնագիտական վարքագծի կանոններին՝ խուսափելու համար շահառու-երեխաներին եւ «Հայկական Կարիտաս»-ի հեղինակությանը սպառնացող ռիսկերից։ Վերը նշված փաստաթղթերի բացակայության պարագայում, «Հայկական Կարիտաս»-ը կարող է երեխաների պաշտպանության վերաբերյալ փաստաթղթերի մշակումն ու կիրառումը դնել՝ որպես պայմանագրային հարաբերությունների հաստատման պայման։
10. Կազմակերպությունը սույն քաղաքականությամբ պարտավորություն է ստանձնում ապահովել երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման ընթացակարգերի կիրառումն ու պահպանումը, ինչպես նաեւ դրանց իրականացման նկատմամբ կանոնավոր մշտադիտարկումը։
11. Սույն քաղաքականությունը ենթակա է մշտադիտարկման, հետեւյալ հիմնական քայլերի միջոցով.

    11.1 Բողոքների արձանագրում եւ ԵՊ առնչվող հարցերի վերաբերյալ հաշվետվությունների մշտադիտարկման իրականացում (ցանկալի է 6 ամիսը մեկ)։

    11.2. «Հայկական Կարիտաս»-ի երեխաների պաշտպանությանն ուղղված գործունեության ներքին եւ արտաքին աուդիտ՝ 3 տարին մեկ անգամ պարբերականությամբ։ Վերջինիս արդյունքներն անպայմանորեն ներկայացվում են «Հայկական Կարիտաս»-ի խորհրդի անդամներին։

11.3. Կազմակերպությունն երաշխավորում է, որ սույն քաղաքականությունը պարբերաբար վերանայվելու է (մասնավորապես՝ առնվազն 2 տարին 1 անգամ)՝ կազմակերպության աշխատակիցների եւ կամավորների մասնակցությամբ: Կազմակերպության ԵՊ պատասխանատուն պարտավորվում է իրականացված փոփոխությունների եւ լրամշակումների մասին զեկույց ներկայացնել «Հայկական Կարիտաս»-ի խորհրդին:

12. Սույն փաստաթուղթը վերաբերվում է անձնակազմի բոլոր անդամներին, ինչպես նաեւ կամավորներին: Այն հանդիսանում է «Հայկական Կարիտաս»-ի անձնակազմի անդամների եւ կամավորների հետ ունեցած պայմանագրային հարաբերությունների մաս:
13. Կազմակերպությունում ղեկավար դիրք զբաղեցնող անձինք պատասխանատվություն են կրում իրենց ղեկավարման ներքո գտնվող աշխատակիցներին իրազեկել Քաղաքականության, դրանում կատարվող փոփոխությունների մասին, խորհրդատվություն տրամադրել դրա կիրառման վերաբերյալ, ինչպես նաեւ վերահսկել քաղաքականությամբ սահմանված դրույթների իրականացումը:
14. Սույն փաստաթուղթը կիրառվում է «Հայկական Կարիտաս»-ի այլ ներքին ռազմավարական փաստաթղթերին զուգահեռ:
15. «Հայկական Կարիտաս»-ի ԵՊ քաղաքականությունը հասանելի է նաեւ գործընկեր, դոնոր կազմակերպությունների եւ երեխաների պաշտպանությամբ զբաղվող բոլոր այն միավորների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ կողմերի համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ երեխաներին ուղղված «Հայկական Կարիտաս»-ի գործունեության առանձնահատկություններին: «Հայկական Կարիտաս»-ը կհամագործակցի եւ կօժանդակի գործընկերներին երեխաների պաշտպանության համապատասխան պարտավորությունների ստանձնման եւ քաղաքականության, պրակտիկայի եւ վերջինիս իրագործման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման հարցերում:
16. Սույն քաղաքականության համատեքստում, «երեխաների պաշտպանություն» ասելով նկատի ունենք կազմակերպության՝ երեխաներին բոլոր տեսակի կանխամտածված եւ չկանխամտածված ռիսկերից/վնասից պաշտպանելուն ուղղված գործողությունների եւ միջոցառումների ամբողջությունը, որոնց նպատակն երեխայի բարեկեցության ապահովումն է:

Երեխա. երեխան 18 տարին չլրացած անձն է, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով ավելի վաղ է ճանաչվել գործունակ (համաձայն «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի)։

Երեխայի լավագույն շահ. երեխայի խնամքի որակի գնահատման հիմնական չափանիշն է, որը ներառում է բոլոր այն պայմանների համակցումը, որոնք անհրաժեշտ են երեխայի հիմնարար կարիքների բավարարման համար, սկսած ֆիզիկական պայմաններ ստեղծելուց, մինչեւ դաստիարակություն, պաշտպանություն, երեխայի հիմնական արժեհամակարգի ձեւավորում՝ նրա իրավունքների իրացման եւ տվյալ հասարակության մշակույթի համատեքստում։ Այլ խոսքով, լավագույն շահը բոլոր այն պայմանների, հնարավորությունների եւ գործողությունների համախմբություն է, որը կարող է ապահովել երեխայի պահանջմունքների ադեկվատ բավարարումը, իրավունքների պաշտպանությունը, անձնային աճն ու բնականոն զարգացումը։ Երեխայի լավագույն շահից բխող որոշման կայացման գործընթացում պետք է ընդգրկվի հենց ինքը՝ երեխան, իր տարիքային առանձնահատկություններին եւ հասունության մակարդակին համապատասխան կերպով։[6]

Կյանքի դժվարին իրավիճակ. հաշմանդամության, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու հետեւանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ է, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող (համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի)։

Հատուկ կարիքներով երեխա. հատուկ կարիքներով են համարվում այն երեխաները, ովքեր խնամքի, բուժման, տուժած գործառույթների վերականգնման, հոգեբանական աջակցության, կրթական, զարգացման եւ/կամ սոցիալական շարունակական, տեւական կարիքներ ունեն, որոնք չեն կարող լիարժեք բավարարվել ընդհանուր բնույթի ծառայությունների համակարգում եւ ընդունված միջին չափորոշիչներով, պահանջում են հատուկ ծրագրային մոտեցում, հատուկ առողջապահական, կրթական, սոցիալական եւ հարակից ծառայություններ։

Դեպրիվացիան կենսականորեն կարեւոր պահանջմունքների բավարարման հնարավորության զրկումը կամ սահմանափակումն է[7]։

---

[6] Cantwell, N.; Davidson, J.; Elsley, S.; Milligan, I.; Quinn, N. (2012). Moving Forward: Implementing the 'Guidelines for the Alternative Care of Children'. UK: Centre for Excellence for Looked After Children in Scotland.

[7] Երեխաների պաշտպանություն։ Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար (Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն., Խաչատրյան Ա., Հովհաննիսյան Ա., Սարգսյան Ս.,) , Եր., ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ եւ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ, 2009թ., էջ 316։

Բռնությունը բոլոր տեսակի ֆիզիկական, հոգեբանական բռնարարքների, վնասվածքների, չարաշահումների, անտեսման եւ արհամարհական վերաբերմունքի, սեռական եւ այլ շահագործման դրսեւորումն է («Երեխայի իրավունքների մասին հռչակագիր», Հոդված 9):

Երեխաների հանդեպ բռնություն. երեխաների հանդեպ բռնությունը ֆիզիկական եւ/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական արարքի, անտեսման կամ անտեսող, կոմերցիոն կամ չարաշահող վարքի դրսեւորումն է երեխաների նկատմամբ՝ լիազորության, վստահության եւ դիրքից օգտվելու համատեքստում, ինչն արդյունքում հանգեցնում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը (Առողջության համաշխարհային կազմակերպության «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման խորհուրդի» սահմանում, 1999թ.):

Ֆիզիկական բռնությունը. մասնագիտական գրականության շրջանակներում երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունը սահմանվում է որպես երեխայի նկատմամբ կատարված ցանկացած ֆիզիկական գործողություն, որը պատճառում է կամ կարող է վնաս պատճառել երեխայի առողջությանը, գոյությանը, զարգացմանը եւ արժանապատվությանը, ներառյալ ծեծը, հարվածելը, ցնցելը, նետելը, վախեցնելը, կծելը, խեղդելը, այրելը, կանխամտածված թունավորելը, շնչահեղձ անելը կամ ֆիզիկական վնաս պատճառելու անհաջող փորձը:

Սեռական բռնությունը. Մասնագիտական գրականության շրջանակներում հանդիպում են երեխաների նկատմամբ սեռական բռնության տարբեր սահմանումներ: Ընդհանուր առմամբ, երեխաների նկատմամբ սեռական բռնությունը կարող է սահմանվել որպես երեխային սեռական բնույթի այնպիսի գործողությունների մեջ ներքաշելը, որը նա լիովին չի հասկանում[8]: Երեխաների նկատմամբ սեռական բռնության առավել ընդգրկուն սահմանման համաձայն՝ այն երեխայի նկատմամբ սեռական բնույթի գործողությունների իրականացումն է, որոնք վնասում են վերջինիս ֆիզիկական, հուզական եւ ճանաչողական զարգացումը[9]: Այն ենթադրում է երեխային ստիպողաբար սեռական հարաբերությունների մեջ ներգրավումը՝ առանց հաշվի առնելու՝ արդյոք երեխան տեղյակ է, թե ինչ է տեղի ունենում: Հարաբերությունները կարող են ենթադրել ինչպես ֆիզիկական շփում, այնպես էլ առանց շփման հարաբերություններ: «Սեռական» ասելով, այստեղ նկատի ունենք յուրաքանչյուր գործողություն, որն ուղեկցվում/ հանգեցնում է սեռական գրգռման՝ բռնարարի մոտ:

Հուզական, էմոցիոնալ բռնությունը. հուզական բռնությունը խնամակալի կամ ծնողի կողմից երեխային համապատասխան աջակցող միջավայր ապահովելու պարտականության իրականացման գիտակցված եւ չգիտակցված ձախողումն է: Այն է այնպիսի գործողություններ, որոնք բացասաբար են ազդում երեխայի հուզական առողջության եւ զարգացման վրա:

[8] Berliner, Lucy, and Diana M. Elliott. "Sexual Abuse of Children." In The AP SAC Handbook on Child Maltreatment, edited by John Briere, Lucy Berliner, Josephine A. Bulkley, Carole Jenny, and Theresa Reid. Thousand Oaks, CA: Sage Publications, 1996, pp. 51–71.

[9] Conceptual Framework for Child Sexual Abuse, S M Sgroi; L C Blick; F S Porter, New York, USA, 1982.

Առանձնացվում են ծնողի կամ խնամակալի կողմից իրականացվող որոշակի գործողություններ, որոնք կարող են որակվել որպես երեխայի նկատմամբ հուզական բռնություն: Այդ գործողություններն են՝[10]

✓ **Մերժում**. երբ ծնողը կամ խնամակալը չի ընդունում երեխային որպես մեծագույն արժեք, որին միաժամանակ հատուկ են որոշակի պահանջմունքներ ունենալը:

✓ **Մեկուսացում.** երբ ծնողը կամ խնամակալը մասամբ կամ ամբողջությամբ սահմանափակում է երեխայի սոցիալական շփումները, ստիպում է երեխային ներշնչվել, որ ինքը մենակ է աշխարհում:

✓ **Ահաբեկում.** երբ ծնողը կամ խնամակալը վիրավորում է երեխային, սպառնում, ստեղծում վախի մթնոլորտ:

✓ **Անտեսում.** երբ չեն բավարարվում երեխայի հուզական եւ ինտելեկտուալ զարգացման համար անհրաժեշտ կարիքները (Պետք է տարբերել «անտեսում» ֆիզիկական իմաստով տարբերությունները, երբ գործ ունենք կենսական կարիքների հետ (բարձիթողություն)):

✓ **Մտադրված «փչացում».** երբ ծնողը խրախուսում է, որպեսզի երեխան դրսեւորի ապակառուցողական, հակասոցիալական վարք, այլ կերպ ասած նպաստում է, որպեսզի երեխան դրեւսորի շեղվող վարք՝ անկախ տիպից:

Բարձիթողությունը կամ անտեսումը երեխայի ֆիզիկական եւ հոգեկան կարիքները բավարարելու շարունակական եւ տեւական անտեսումն է՝ երեխայի առողջության ու զարգացման լուրջ վնասներով: Զուրավինի կողմից առաջարկված սահմանումը ներառում է ծնողների կամ խնամողների կողմից երեխայի համար զարգացում ապահովելու ձախողման երեւույթը **ութ ոլորտներում**, որոնք կարող են վնասել երեխայի ֆիզիկական, հուզական, սոցիալական եւ ճանաչողական զարգացումը: Այդ ոլորտներն են[11]՝

1. **Ֆիզիկական առողջության խնամք**, օրինակ, երեխային համապատասխան բժշկական օգնություն կամ բուժում չապահովելը:
2. **Հոգեկան առողջության խնամք**, օրինակ, երեխայի մոտ ակնհայտ դրսեւորվող հոգեկան առողջության կամ զարգացման խնդիրներին ուշադրություն չդարձնելը ծնողների կողմից:
3. **Հետեւողականություն**, որը ենթադրում է տանը եւ դրսում ծնողի կողմից երեխայի վարքի վերահսկմանն ուղղված գործողություններ չիրականացնելը, օրինակ, ծնողը տեղյակ չէ, թե տնից դուրս գտնվելու ժամանակ երեխան ինչով է զբաղվում:
4. **Երեխայի խնամքի անպատասխանատու պատվիրակում**, օրինակ, լքել երեխային, թողնել, որպեսզի երեխան մենակ հոգա սեփական կարիքները, հանձնել երեխային ոչ ադեկվատ խնամողի խնամքին եւ այլն:
5. **«Կենցաղային վտանգները»**, օրինակ, բաց թողնել գազը, տաք ջուրը, կտրող, ծակող գործիքները, դեղորայքը պահել երեխայի համար հասանելի վայրում եւ այլն:

[10] The psychologically battered child, by James Garbarino, Edna Guttman, and Janis Wilson Seeley. San Francisco: Jossey-Bass, 1986, p.286

[11] DePanfilis, D. (2009) 'Using prevention science to reduce the risk of child neglect', *Children Australia*, 34(1), pp. 40–44. doi: 10.1017/S1035077200000523.

6. **Բնակարանում համապատասխան սանիտարական պայմանների բացակայությունը**, օրինակ, հատակը մշտապես կեղտոտ է, բնակարանում առնետներ կան, զուգարանը մաքուր չէ եւ այլն:
7. **Անձնական հիգիենան**, օրինակ, երեխայի հագուստը մշտապես կեղտոտ է, պատառոտված, երեխայի մազերը կեղտոտ են, եղունգները կտրված չեն եւ այլն:
8. **Մնուցում**, որը ենթադրում է երեխայի տարիքին համապատասխան նրան անհրաժեշտ սնունդով չապահովելը:

Երեխայի մասնակցությունը. երեխան իրավունք ունի մասնակցել եւ տեսակետ արտահայտել իրեն, իր համայնքին եւ ավելի լայն հասարակությանը, որտեղ ինքն ապրում է, վերաբերվող որոշումների ընդունման գործընթացներին:

Երեխայի պաշտպանությունը, այն բոլոր քաղաքականությունների, չափորոշիչների, ուղղորդումների, ընթացակարգերի, գործողությունների եւ միջոցառումների ամբողջությունն է, որը միտված է պաշտպանել երեխային կանխամտածված ու միտումնավոր վնասից: Այս համատեքստում, ***երեխայի պաշտպանությունը կազմակերպության («Հայկական Կարիտաս») եւ նրա անձնակազմի պարտականությունն է իրենց ծառայությունների շահառու երեխաների հանդեպ:***

Երեխաների պաշտպանության հարցերով հանձնաժողով. Կազմակերպության ԵՊ պատասխանատուներին միավորող կոլեգիալ մարմին, որը որոշումներ է կայացնում երեխայի պաշտպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ:

Երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատու. Կազմակերպության կողմից նշանակված անձ, ով կանոնակարգում է երեխայի պաշտպանությանն առնչվող խնդիրները կազմակերպությունում:

Երեխայի հետ ուղղակի հաղորդակցություն. Կազմակերպությունում մասնագիտական աշխատանքի շրջանակներում երեխայի հետ կանոնավոր կամ ոչ մշտական, կարճաժամկետ կամ երկարաժամկետ հաղորդակցություն միեւնույն ֆիզիկական միջավայրում:

Երեխայի հետ անուղղակի հաղորդակցություն.

- **Փաստաթղթային.** կազմակերպությունում մասնագիտական աշխատանքի շրջանակներում առնչություն երեխային վերաբերող փաստաթղթերին (երեխայի անուն եւ ազգանուն, լուսանկարներ, անհատական սոցիալական պլան եւ այլն)
- **Կազմակերպության ֆինանսավորում.** չնայած անուղղակիորեն, սակայն ազդեցություն է ունենում երեխաների իրավիճակի վրա, այդ իսկ պատճառով, պետք է համոզված լինել, որ դոնոր կազմակերպությունները բռնությանն առնչվող խնդիրների ադեկվատ ընկալման հանձնառություն ունեն եւ պատրաստ են համագործակցել երեխաների պաշտպանությանը վերաբերվող խնդիրների/ հիմնահարցերի լուծման գործում:

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1.1 Կազմակերպության ծրագրերում եւ ծառայություններում ներգրավված բոլոր աշխատակիցներն ու կամավորները պետք է ունենան երեխայի լավագույն շահի սկզբունքից բխող հասարակայնորեն ընդունելի, ամուր բարոյական արժեքներ եւ սկզբունքներ, ըստ այդմ դրսեւորեն դրանց համապատասխան պատշաճ վարք:

1.2 Թափուր աշխատատեղի վերաբերյալ տրված հայտարարություններում պետք է պարտադիր կերպով հղում տրվի «Հայկական Կարիտաս»-ի «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման վերաբերյալ քաղաքականությանը», իսկ քաղաքականությանը հետեւելը ամրագրված լինի աշխատակցին առաջադրվող պահանջներում:

1.3 Կազմակերպությունն ապահովում է, որ աշխատանքի հայտադիմումների, հարցազրույցների հարցաշարերում անպայմանորեն ներառված լինեն երեխաների պաշտպանության վերաբերյալ հարցեր: Պոտենցիալ թեկնածուների հետ հարցազրույցների ընթացքում պետք է տրվեն հարցեր տվյալ թեկնածուի՝ երեխաների հետ ուղղակի կամ անուղղակի աշխատանքի փորձառության եւ նման աշխատանք կատարելիս անվտանգ գործելու իր մոտեցումների՝ համապատասխանության վերաբերյալ:

1.4 Կազմակերպությունը, կարեւորելով աշխատակիցների կոմպետենտության խնդիրը, թեկնածուների ընտրության ընթացքում հիմնվում է նրանց մասնագիտական որակավորման, երեխաների հետ աշխատանքի փորձառության եւ գիտելիքների վրա:

1.5 Ի լրումն, աշխատանքի ընդունման համար կազմակերպությունում արդեն իսկ ամրագրված պահանջներին, երեխաների հետ ուղղակի կամ անուղղակի աշխատանք իրականացնող մասնագետներին աշխատանքի ընդունելիս պարտադիր է համարվում՝ ինքնակենսագրությունը, անհատական հարցազրույցը, գրավոր երաշխավորագրերը եւ դրանցում առկա տեղեկատվության ստուգումը, բժշկական տեղեկանքը ՀՀ Կառավարության 2003 թ.-ի N-347-Ն որոշման մեջ նշված հիվանդությունները չունենալու մասին եւ, անհրաժեշտության դեպքում, տեղեկանք Ոստիկանությունից՝ դատվածություն չունենալու մասին (նմանատիպ ստուգումները կիրառվում են բոլոր թեկնածուների, այդ թվում մասնագիտական անձնակազմի անդամներ, վարչական անձնակազմի անդամների, ինչպես նաեւ կամավորների եւ պրակտիկանտների համար:): Թեկնածուն նախորդ աշխատատեղերից պետք է ներկայացնի առնվազն 2 երաշխավորող անձի տվյալներ:

1.6 «Հայկական Կարիտաս»-ն աշխատանքի չի ընդունում եւ գործունեություն չի ծավալում այն անձանց հետ, ովքեր նախկինում երեխաների հանդեպ հանցագործության համար դատապարտված են եղել կամ ներկայումս նման կասկածանքով գտնվում են քննության ներքո: Բոլոր թեկնածուները նախապես տեղեկացվում են, որ երեխաների չարաշահման, մանկապղծության կամ նմանատիպ այլ հանցանքների համար դատվածություն հայտնաբերվելու դեպքում դիմորդները չեն ընդունվի աշխատանքի կամ կզրկվեն ծրագրերին մասնակցելուց:

1.7 Երբ վերը նշված խնդիրներն աշխատակցի/ կամավորի հետ առաջացել են «Հայկական Կարիտաս»-ի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (կամավորական գործունեություն իրականացնելու) ժամանակահատվածում, սակայն դրանք առնչություն չունեն «Հայկակա Կարիտաս»-ի հանդեպ նրա ունեցած աշխատանքային պարտականությունների հետ, ապա կարող են ձեռնարկվել հետեւյալ քայլերը.

1.7.1 Եթե անձը «Հայկական Կարիտաս»-ի անձնակազմի անդամ է, ապա հրավիրվում է Կազմակերպության Երեխաների պաշտպանության հանձնաժողովի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվում հետագա անհրաժեշտ քայլերի եւ դրանց հաջորդականության վերաբերյալ՝ ելնելով դեպքի առանձնահատկություններից։

1.7.2 Եթե անձը «Հայկական Կարիտաս»-ի կամավոր է, ապա նրան առաջարկվում է ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը կազմակերպությունում, մինչ միջադեպի ամբողջական ուսումնասիրությունն ու համապատասխան որոշման կայացումը։

1.8 Կազմակերպությունում աշխատակցի ընդունման մասին որոշումը կայացվում է համապատասխան ընտրող հանձնաժողովի կողմից։ Ընտրող հանձնաժողովի կազմը հաստատվում է կազմակերպության ներքին կանոնակարգով։

1.9 Աշխատանքի համար ընտրված թեկնածուները պետք է անցնեն փորձաշրջան (1-3 ամիս ժամկետով), որի շրջանակներում պետք է ստանան համապատասխան աջակցություն, այդ թվում սուպերվիզիա ավելի փորձառու մասնագետի կողմից աշխատանքային թիմում ինտեգրվելու համար (այդ թվում ծանոթացում աշխատանքային միջավայրին, ներքին փաստաթղթերին, աշխատանքային պլանների կազմման գործընթացներին, շահառուների խնդիրների առանձնահատկություններին եւ այլն)։

1.10 Կազմակերպության կամավորների ընտրության դեպքում, եթե նրանց պարտականություններն ենթադրում են անմիջական աշխատանք կազմակերպության շահառու-երեխաների հետ, ապա պետք է կամավորական գործունեության անցնելիս ընտրվեն նույնատիպ ընթացակարգով, ինչպիսին նախատեսված է աշխատակիցների ընտրության դեպքում։

1.11 Կազմակերպության բոլոր աշխատակիցները (այդ թվում փորձաշրջանի մեջ գտնվող անձինք) եւ կամավորները պարտավորվում են պարտադիր կերպով ծանոթանալ սույն քաղաքականությանը, դրանից բխող այլ նորմերին, մասնագիտական վարքագծի կանոններին/էթիկայի կոդեքսին եւ համապատասխան պարտավորագրեր ստորագրել դրանց ծանոթ լինելու եւ պահպանելու վերաբերյալ։ Յուրաքանչյուր աշխատակից եւ կամավոր ներքին ընթացակարգի սեփական օրինակն ունենալու իրավունք ունի։

1.12 Անձնակազմի բոլոր անդամները (այդ թվում փորձաշրջանի մեջ գտնվող անձինք) եւ կամավորները պետք է որոշակի պարբերականությամբ մասնակցեն սույն քաղաքականության վերաբերյալ քննարկումներին՝ ամրագրված դրույթներին ծանոթանալու եւ դրանց մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով։

1.13 Կազմակերպության աշխատակիցներին (այդ թվում փորձաշրջանի մեջ գտնվող անձինք) եւ կամավորներին առաջադրված աշխատանքային պարտականություններում պետք է ներառված լինեն նաեւ երեխաների հետ աշխատանքի կանոններն ու սահմանափակումները։ Կազմակերպությունը պետք է երաշխավորի, որ աշխատակիցներին եւ կամավորներին տրված հանձնարարականներն ամբողջությամբ

արտացոլում են սույն քաղաքականությամբ սահմանված ընդհանուր եւ մասնավոր դրույթները։

1.14 Սույն ընթացակարգը հավասարապես գործում է թե մասնագետների արտաքին՝ «դրսից» ընտրության, թե ներքին ընտրության պարագայում, երբ աշխատակիցը մի պաշտոնից անցնում է մյուսի։

1.15 Աշխատակիցների եւ կամավորների ներգրավումը կազմակերպության աշխատանքում չի ավարտվում աշխատակցի եւ կազմակերպության միջեւ պայմանագրի, իսկ կամավորների դեպքում՝ համաձայնագրի կնքմամբ։ Կազմակերպության աշխատակիցները, կամավորները, այդ թվում փորձաշրջանի մեջ գտնվող անձինք, ի լրումն ավելի ավագ աշխատակիցների կողմից ուղղորդմանը (սուպերվիզիա, մենթորություն, քոուչինգ), նաեւ պարբերաբար վերապատրաստումներ են անցնում՝ ապահովելու Քաղաքականության միատեսակ կիրառումը կազմակերպության տարբեր մակարդակներում, ինչպես նաեւ կազմակերպության տարբեր աշխատակիցների կողմից։

2. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2.1 Նպատակ ունենալով երաշխավորել եւ վերահաստատել երեխաներին պաշտպանելու «Հայկական Կարիտաս»-ի առաքելությունը, կազմակերպության հետ նույնականացվող յուրաքանչյուր անդամ պետք է հստակ պատկերացնի պատասխանատվության այն ծավալը եւ ակնկալիքները, որոնք կազմակերպությունն ունի իրենից։ Կազմակերպությունը հանձն է առնում ստեղծել «իրազեկ միջավայր», որտեղ անձնակազմի յուրաքանչյուր անդամ, կամավոր եւ այլ ներկայացուցիչ իր ներդրումը կունենա երեխաների պաշտպանության եւ նրանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների եւ չարաշահման դեպքերի կանխարգելման գործում։ Վերջինիս իրագործման պայման է համարվում բարձր մասնագիտական ներուժ եւ համապատասխան կոմպետենտություն ունեցող անձնակազմը, ինչը հնարավոր կլինի ապահովել պարբերական եւ հասցեական վերապատրաստումների միջոցով՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ ադմինիստրատիվ եւ օժանդակ անձնակազմի ու կամավորների մասնակցությամբ։

2.2 Կազմակերպությունը (որպես բռնության դրսեւորման ռիսկի նվազեցման ու կանխարգելման միջոց), երաշխավորում է երեխաների անվտանգության ապահովման, ներառյալ երեխայի նկատմամբ բռնության, շահագործման եւ դրանցից պաշտպանության թեմաներով պարբերական հանդիպումների, վերապատրաստումների եւ քննարկումների կազմակերպումն ինչպես անձնակազմի անդամների, այնպես էլ կամավորների համար։

2.3 Կազմակերպության ողջ անձնակազմը եւ կամավորները պարտավորվում են ամբողջական պատկերացում ունենալ «Երեխաների պաշտպանության քաղաքականության» եւ դրանում սահմանված ուղղորդումների կիրառման վերաբերյալ։ Կազմակերպության ղեկավարը եւ երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատու մարմինը պարտավորվում են համապատասխան փոփոխությունների մասին հնարավորինս կարճ ժամանակահատվածում տեղեկացնել անձնակազմի անդամներին եւ կամավորներին։

2.4 Կազմակերպության անձնակազմի այն անդամները, կամավորները, ովքեր անմիջականորեն երեխաների հետ են աշխատում պետք է տեղյակ լինեն բռնության ռիսկ պարունակող իրավիճակների եւ դրանց կառավարման մեխանիզմների վերաբերյալ։

2.5 Կազմակերպությունում ղեկավար դիրք զբաղեցնող մասնագետները (ծրագրի համակարգողը, ծրագրի ղեկավարը, կենտրոնի տնօրենը կամ այլ իրավասու անձ) պատասխանատվություն են կրում ապահովել, որ գործող ծառայություններում պարբերաբար իրականացվեն բռնության/շահագործման ռիսկերի գնահատում, որի արդյունքների հիման վրա էլ համապատասխան քայլեր են ձեռնարկվում ի հայտ եկած բռնության ռիսկերի նվազեցման ուղղությամբ։

2.6 Կազմակերպությունը՝ ելնելով երեխաների համար անվտանգ միջավայր ապահովելու սկզբունքից, պարտավորվում է առնվազն երկու տարի մեկ անգամ ատեստացիա իրականացնել իր աշխատակիցների շրջանում՝ պարզելու նրանց որակավորման համապատասխանությունն իրենց կողմից կատարվող աշխատանքին։ Ատեստացիայի

արդյունքների հիման վրա կազմակերպությունում համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն մասնագետների որակավորման բարձրացման ուղղությամբ։

2.7 Կազմակերպությունում ղեկավար դիրք զբաղեցնող մասնագետները (ծրագրի համակարգողը, ծրագրի ղեկավարը, կենտրոնի տնօրենը կամ այլ իրավասու անձ) պատասխանատվություն են կրում կատարել իրենց ղեկավարման ներքո աշխատող մասնագետների վերապատրաստման կարիքների գնահատում՝ բռնություններից զերծ մասնագիտական աշխատանքի միջավայր երաշխավորելու նպատակով։ Գնահատման արդյունքների հիման վրա ղեկավարները ծրագրի հնարավորությունների շրջանակում կազմակերպում են վերապատրաստումներ եւ սուպերվիզիոն համապատասխան միջամտություններ (կրթական, աջակցային, մենթորություն, քոուչինգ եւ այլն)։

2.8 Կազմակերպությունն երաշխավորում է իր աշխատակիցների շարունակական կրթությունը՝ այլ (կազմակերպությանը պատկանող տարբեր ծառայություններ, գործընկեր կազմակերպություններ եւ այլն) կազմակերպություններ ուսուցողական այցեր կազմակերպելու, փորձի փոխանակման, վերապատրաստումների հնարավորություններ ընձեռելու միջոցով։

2.9 Կազմակերպությունն երաշխավորում է ստեղծել եւ ապահովել այնպիսի աշխատանքային ներքին միջավայր, որտեղ հարգվում է մասնագետների տեսակետը, խրախուսվում են նորարարական գաղափարներն ու նախաձեռնությունները։ Կազմակերպությունում խրախուսվում է աշխատակիցների մասնակցությունը ընթացիկ գործընթացներին եւ ապահովվում է նրանց ներգրավվածությունը նոր աշխատանքային/ծրագրային փաստաթղթերի, ծրագրային փաթեթների մշակման կամ լրամշակման աշխատանքներում։ Միեւնույն ժամանակ խրախուսվում է նաեւ կազմակերպության աշխատակիցների կողմից ավելի բարձր դիրք զբաղեցնող պաշտոնյաների մոտ նախաձեռնություններով եւ առաջարկություններով հանդես գալը։

2.10 Կազմակերպության ղեկավար կազմը պարբերաբար կազմակերպում հանդիպումների, քննարկումների շարք իր աշխատակիցների հետ՝ առկա մտահոգությունները, առարկությունները եւ առաջարկությունները քննարկելու նպատակով։

2.11 Կազմակերպության ղեկավար կազմը պարբերաբար ներքին եւ արտաքին սուպերվիզիա է կազմակերպում իր աշխատակիցների համար՝

- նպաստելու մասնագետի կողմից իրականացվող աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ նրա գիտելիքների ու հմտությունների, մասնագիտական ինքնավերլուծության կարողությունների զարգացման միջոցով
- երաշխավորելու մասնագետի բարձր պատասխանատվությունն իր աշխատանքային գործառույթների կատարման նկատմամբ
- աշխատակցի մեջ զարգացնելու, «սոցիալականացնելու» մասնագետին՝ համապատասխան մշակույթի եւ էթիկայի նորմերի համատեքստում

2.12 Անձնակազմի կրթության, ուսուցման գործընթացի մաս է հանդիսանում կազմակերպված քննարկումների, կլոր-սեղանների, վերապատրաստումների արդյունքում աշխատակիցների ձեռք բերած գիտելիքների գնահատումն ու դրա հիման վրա աշխատակիցների ատեստավորման պահանջների վերանայումը։

3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3.1 Կազմակերպությունում երեխաների անվտանգության եւ պաշտպանության ապահովման հիմնական պատասխանատուն եւ երաշխավորը՝ երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատուն է (այսուհետ՝ ԵՊ պատասխանատու)։

3.2 Երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատուն.

3.2.1 Կազմակերպությունում երեխաների պաշտպանության հարցերով գլխավոր պատասխանատուն հանդիսանում է կազմակերպության ծրագրերի բաժնի ղեկավարը, իսկ կազմակերպության ծառայություններում եւ կենտրոններում՝ յուրաքանչյուր ծրագրի ղեկավարը կամ կենտրոնի տնօրենը։

3.2.2 ԵՊ պատասխանատուի, իսկ նրա բացակայության դեպքում նաեւ նրան փոխարինող անձի կոնտակտային տվյալները (անուն-ազգանունը, հեռախոսահամարը, էլ. փոստը) պետք է հասանելի լինեն կազմակերպության բոլոր այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են անմիջապես երեխաների հետ (այն ամրագրված է աշխատակազմի կողմից ստորագրված պայմանագրին՝ կից հուշաթերթում)։

3.2.3 ԵՊ պատասխանատուի, իսկ նրա բացակայության դեպքում նաեւ նրան փոխարինող անձի կոնտակտային տվյալները (անուն-ազգանունը, հեռախոսահամարը, էլ. փոստը) պետք է հասանելի լինեն կազմակերպության շահառու-երեխաներին ու նրանց խնամակալ/ծնողներին (այն պետք է ամրագրված լինի ծնողի/խնամակալի եւ կազմակերպության միջեւ կնքված համաձայնագրում)։ Ի լրումն, կազմակերպության մասնագետներն երեխաների հետ պարբերաբար քննարկումներեւև հանդիպումներ են կազմակերպում, որի ընթացքում ներկայացվում է ԵՊ պատասխանատուի դերը կազմակերպությունում, նրա գործառույթները, ինչպես նաեւ կոնտակտային տվյալները։ Կոնտակտային տվյալները պետք է ամրացված լինեն «Հայկական Կարիտաս»-ի կենտրոններում՝ բոլորին տեսանելի վայրում։

3.2.4 ԵՊ պատասխանատուն համաձայն սույն քաղաքականությամբ սահմանված դրույթներին բռնության կասկածի մասին զեկույցներ ստանալու եւ տեղեկացվելու պարագայում պետք է ձեռնարկի համապատասխան միջոցառումներ, այդ թվում ներքին հետաքննություն բռնության դեպքի վերաբերյալ, վերջինիս առիթով կապի հաստատում, բանավոր ու գրավոր զեկույցների տրամադրում համապատասխան պաշտոնական մարմիններին։

3.2.5 ԵՊ պատասխանատուն պատասխանատվություն է կրում քաջալերել/խրախուսել երեխաների/երիտասարդների եւ այլ խոցելի շահառուների հետ աշխատանքում անվտանգ մեթոդների կիրառումը։

3.2.6 ԵՊ պատասխանատուն կանոնավոր կերպով այցեր է իրականացնում կազմակերպության՝ երեխաներին սոցիալական ծառայություններ մատուցող կառույցներ եւ դիտարկում դրանց կողմից իրականացվող աշխատանքը։ Դիտարկման արդյունքում ԵՊ պատասխանատուն կազմում է համապատասխան զեկույց, որը ենթակա է քննարկման՝ դիտարկված կառույցի ղեկավար կազմի եւ աշխատակիցների հետ։

3.2.7 ԵՊ պատասխանատուն ներգրավվում եւ ակտիվորեն մասնակցում է երեխաների հետ աշխատող մասնագետների եւ կամավորների ընտրության գործընթացներին։

3.3 Երեխաների պաշտպանության հանձնաժողովը.

3.3.1 ԵՊ հանձնաժողովը կազմակերպության ԵՊ պատասխանատուներին միավորող մարմին է։ Հանձնաժողովի նախագահը կազմակերպության գլխավոր ԵՊ պատասխանատուն է։ Հանձնաժողովն իր անդամներից ընտրում է նաեւ քարտուղարի։

3.3.2 ԵՊ հանձնաժողովը բռնության կամ շահագործման դեպքերի վերաբերյալ հետաքննություն իրականացնելու եւ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող հիմնական մարմինն է կազմակերպությունում։ Հանձնաժողովում որոշումները կայացվում են կոլեգիալ սկզբունքով։

3.3.3 ԵՊ հանձնաժողովը նիստ է հրավիրում առնվազն տարին երեք անգամ, որի ընթացքում կազմակերպության ծառայությունների, կենտրոնների եւ ծրագրերի ԵՊ պատասխանատուները ներկայացնում են զեկույցներ իրենց կառույցներում ԵՊ իրավիճակի վերաբերյալ։ Կազմակերպության ԵՊ պատասխանատուի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել Հանձնաժողովի արտահերթ նիստ։ Հանձնաժողովն արտահերթ նիստ է հրավիրում նաեւ այն դեպքերում, երբ Կազմակերպությունում բռնության դեպք է տեղի ունենում։ Հանձնաժողովի նիստերի ավարտին կազմվում են համապատասխան արձանագրություններ։

3.3.4 Յուրաքանչյուր տարի ԵՊ հանձնաժողովն իր գործունեության եւ կազմակերպությունում երեխաների պաշտպանվածության իրավիճակի վերաբերյալ զեկույց է ներկայացնում Կազմակերպության խորհրդին։

3.3.5 ԵՊ հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է բռնության/ շահագործման միջադեպին առնչվող մասնագետներին եւս հրավիրել հանձնաժողովի նիստերին։

3.4 Կազմակերպությունն ունի հատուկ գրանցամատյան, որտեղ պարտադիր կերպով գրանցվում են երեխաների նկատմամբ բռնության բոլոր միջադեպերը։

3.5 Կազմակերպության շահառու-երեխաների նկատմամբ բռնության միջադեպի վերաբերյալ պետք է տեղեկացվեն նաեւ երեխայի ծնողները/խնամակալները, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի ծնողը/խնամակալը հենց բռնարարն է կամ մասնակից է բռնությանը։

3.6 Կազմակերպության ցանկացած աշխատակից երեխայի նկատմամբ բռնության կիրառման կամ դրա սպառնալիքի վերաբերյալ կասկածի առկայության պարագայում անմիջապես հայտնում է իր ծառայության ԵՊ պատասխանատուին, ապա դեպքի վերաբերյալ կազմում համապատասխան արձանագրություն (արձանագրությունը կազմելիս պահպանել սույն բաժնի 3.8.8 կետում ամրագրված դրույթը)։

3.7 **Եթե բռնության դեպքի մասին տեղեկատվությունը ստացվում է երեխայից**, աշխատակիցը պարտադիր պետք է պահպանի ներքոնշյալ կանոնները.

3.7.1 բռնության վերաբերյալ երեխայի հայտնած տեղեկատվությանը վերաբերվել լրջությամբ եւ չանտեսել այն

3.7.2 լսել եւ ընդունել երեխայի ասածը

3.7.3 չհետաքննել, հարցեր չտեղալ եւ խուսափել բռնության ենթարկված անձին հակադրվելուց, թույլ տալ նրան արտահայտել անձնական վախերը, անօգտակարության զգացողությունը

3.7.4 երեխային թույլ տալ ազատ արտահայտել սեփական մտքերը

3.7.5 երեխային վստահեցնել, որ այդ մասին Ձեզ պատմելով, նա ճիշտ է գործել

3.7.6 տեղյակ պահել երեխային, որ իր պատմածի մասին այլ պատասխանատու եւ մտահոգ անձանց պատմելու կարիք կա: Չխոստանալ երեխային, որ ապահովելու եք նրա կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը, քանի որ դեպքի լրջությունից է կախված գործողությունների հետագա ընթացքը

3.7.7 տեղեկացնել երեխային հետագա քայլերի, այդ թվում այն մասին, որ նրան կտեղեկացվի իրականացվելիք աշխատանքների հետագա ընթացքի մասին

3.7.8 երեխայից ստացված տեղեկատվությունն արձանագրել անմիջապես խոսակցությունից հետո՝ ապահովելու համար դրա ամբողջականությունը: Արձանագրության մեջ անպայմանորեն նշել խոսակցության տեղն ու ժամանակը, ինչպես նաե դրա հետ առնչվող ցանկացած իրադարձություն:

3.8 **Եթե բռնության մասին տեղեկատվությունը ստացվել է մեկ այլ անձից (ոչ երեխայից),** ապա պետք է իրականացվեն հետեւյալ քայլերը.

3.8.1 Կազմակերպության աշխատակիցն երեխայի նկատմամբ բռնության միջադեպի հետ կապված կասկածի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է կառույցի/ծրագրի/ծառայության ԵՊ պատասխանատուին: Կառույցի/ծրագրի/ ծառայության ԵՊ պատասխանատուն մասնագիտական անձնակազմի անդամներից (սոցիալական աշխատող, հոգեբան, մանկավարժ) որեւէ մեկին (կախված երեխայի հետ մասնագետի ունեցած փոխհարաբերություններից) հանձնարարում է զրուցել[12] երեխայի հետ՝ նախնական տեղեկատվության ճշտման նպատակով:

3.8.2 Մասնագետն երեխայի հետ աշխատելուց անմիջապես հետո դեպքի վերաբերյալ կազմում է գրավոր արձանագրություն եւ այն ներկայացնում կառույցի/ծրագրի/ծառայության ԵՊ պատասխանատուին:

3.9 Բռնության դեպքի վերաբերյալ կասկածի դեպքում[13]՝

3.9.1 Մասնագիտական անձնակազմին Ծրագրի համակարգողի/ղեկավարի կողմից հանձնարարվում է անմիջապես քայլեր ձեռնարկել երեխայի անվտանգության ապահովման ուղղությամբ, այդ թվում նրան տրամադրելով մասնագիտական աջակցություն՝ սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավաբանական եւ այլն:

3.9.2 Ծրագրի համակարգողի/ղեկավարի գլխավորությամբ կատարվում է նախնական գնահատում երեխայի նկատմամբ բռնության դեպքի վերաբերյալ (այդ թվում հարցազրույց երեխայի, վերջինիս ծնողների/խնամակալների, երեխայի հետ առնչություն ունեցող այլ անձանց հետ, տունայց եւ այլն):

---

[12] *Երեխայի հետ զրույցի ընթացքում մասնագետը պարտավորվում է պահպանել սույն ենթաբաժնի 3.7 կետով սահմանված դրույթները:*

[13] Բռնության դեպքերին արձագանքման մեխանիզմների սխեմաները տե՛ս Հավելված 6-ում:

3.9.3 Ծրագրի համակարգողը/ղեկավարը նախնական գնահատման վերաբերյալ արձանագրությունը ներկայացնում է կազմակերպության ԵՊ պատասխանատուին՝ իր եւ արձանագրությունը կազմած մասնագետի ստորագրությամբ։

3.9.4 Եթե երեխայի նկատմամբ բռնության դեպքը տեղի է ունեցել կազմակերպության տարածքից դուրս, ոչ նրա կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում, ապա ԵՊ պատասխանատուն պարտավորվում է անմիջապես զեկույց կազմել եւ այդ մասին տեղեկացնել համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ)՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր։

3.9.5 Եթե երեխայի նկատմամբ բռնության մեջ կասկածվում է կազմակերպության անձնակազմի անդամը/ կամավորը կամ շահառուն, իսկ դեպքը տեղի է ունեցել կազմակերպության տարածքում կամ դրա կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակում, ապա կազմակերպության ղեկավար մարմինները, մասնավորապես ԵՊ պատասխանատուն, պարտավորվում են իրականացնել **հետեւյալ գործողությունները.**

3.9.5.1.1 Երեխայի նկատմամբ բռնության մեջ կասկածվող անձնակազմի անդամը/կամավորը ժամանակավորապես դադարեցնում է իր պարտականությունների կատարումը, իսկ շահառուի դեպքում ժամանակավորապես դադարեցվում է մատուցվող ծառայությունների տրամադրումը։ Բոլոր դեպքերում, պետք է երաշխավորվի անմեղության կանխավարկածը։

3.9.5.1.2 Կազմակերպության ԵՊ պատասխանատուի գլխավորությամբ դեպքի առնչությամբ իրականացվում է ներքին հետաքննություն։

3.9.5.1.3 Կազմակերպությունն երաշխավորում է հետաքննության վարման ողջ ընթացքում ապահովել երեխայի անվտանգությունը, մասնավորապես, իր կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում աջակցել բռնության զոհերին, ինչպես նաեւ բռնարարքի մեջ կասկածվող անձին։ Կազմակերպությունը երաշխավորում է, որ միջադեպի ուսումնասիրության եւ հետաքննության ողջ ընթացքում կշարունակի իր կողմից շահառուին տրամադրվող ծառայությունների մատուցումը, իսկ անհրաժեշտության դեպքում կապահովի նաեւ 3.9.1 կետում նշված մասնագիտական ծառայությունների մատուցումը։

3.9.5.1.4 Բռնության վերաբերյալ կասկածի հետաքննման արդյունքում, եթե բռնություն կատարելու մասին կասկածը հաստատվում է, առ այն, որ այն կատարվել է անձնակազմի անդամի/կամավորի/շահառուի կողմից կազմակերպության տարածքում կամ վերջինիս կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում, ապա կազմակերպությունը պատասխանատվություն է կրում՝ ի դեմս Կազմակերպության ԵՊ պատասխանատուի, այդ մասին անմիջապես տեղեկացնել համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ)։

3.9.5.1.5 Կազմակերպությունը բռնության միջադեպի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ) հաղորդում է միաժամանակ եւ՝

բանավոր, եւ գրավոր զեկույցով։ Եթե կազմակերպության ծառայությունը, ծրագիրը կամ կենտրոնը գտնվում է մարզկենտրոնում, ապա նախընտրելի է ի սկզբանե կապվել ԸԿԵԻՊԲ մարմինների հետ, որոնք երեխաների նկատմամբ բռնության հարցերում մյուս մարմինների համեմատությամբ ավելի մասնագիտացված են։ Մյուս դեպքերում, պետք է ուղղորդվել այն սկզբունքով, թե նշված մարմիններից, որոնց հետ են հարաբերություններն ավելի համագործակցային։

3.9.5.1.6 Հետագա աշխատանքը կազմակերպվում է համաձայն ՀՀ-ում գործող ընդհանուր ընթացակարգի։

3.9.5.1.7 Եթե հաստատվում է կազմակերպության աշխատակցի բռնության մեջ ներգրավված լինելու փաստը, ապա համապատասխան աշխատակիցն ենթարկվում է կարգապահական տույժերի, այդ թվում պաշտոնի իջեցում, աշխատանքից հեռացում եւ այլն։ Եթե բռնության մեջ մեղադրվողը կազմակերպության կամավոր է, ապա կամավորական գործունեությունն անմիջապես դադարեցվում է։ Եթե բռնության մեջ մեղադրվողը կազմակերպության շահառուն է, ապա կախված կատարված գործողության ծանրության աստիճանից, կարող է որոշում կայացվել ինչպես մատուցվող ծառայությունների դադարեցման, այնպես էլ դրանց կազմակերպման եղանակի փոփոխման վերաբերյալ (օրինակ՝ հոգեբանական ծառայությունների արտագնա մատուցում)։

3.9.5.1.8 Եթե կազմակերպության աշխատակցի/կամավորի/շահառուի կողմից բռնություն գործադրելու փաստը հերքվում է կամ չի հաստատվում, ապա աշխատակիցը/կամավորը պարտադիր կերպով վերականգնվում է իր աշխատանքում։ Ի լրումն աշխատանքներ են իրականացվում նրան կոլեկտիվում վերաինտեգրելու ուղղությամբ։

3.9.6 Բռնության կասկածի հաստատման պարագայում, կազմակերպությունում ԵՊ պատասխանատուի նախաձեռնությամբ իրականացվում է երեխաների նկատմամբ բռնության գործադրման նախադեպային ռիսկերի գնահատում։

3.9.7 Իրականացված հետաքննության արդյունքները, ինչպես նաեւ դեպքին առնչվող այլ փաստաթղթերը գրանցվում են բռնության դեպքերի արձանագրման գրանցամատյանում եւ պահպանվում առանձին ֆայլերով։ Կազմակերպությունը երաշխավորում է վերոնշյալ տվյալների գաղտնիությունը եւ սահմանափակում դրանց հասանելիությունը։

3.10 Կազմակերպության ԵՊ պատասխանատուն եւ բռնության ենթարկված երեխայի հետ անմիջականորեն աշխատող մասնագետը կարող են ներգրավվել եւ մասնակցություն ունենալ երեխայի դեպքի վերաբերյալ պաշտոնապես զբաղվող կառույցների կողմից կազմակերպված քննարկումներին եւ ծավալվող աշխատանքներին։

3.11 Եթե դեպքի քննարկումների ընթացքում, դեպքը փոխանցելու հարց է առաջանում, ապա ելնելով երեխայի անվտանգության ապահովման նորմերից՝ կազմակերպությունն ապահովում է ողջ գործընթացի պատշաճ իրականացումը եւ ամրագրում դրանք փաստաթղթերով։

3.12 Բռնության դեպքերի հետ աշխատանքի ավարտին, դեպքի ուսումնասիրմանը կցված մասնագետը պարտավորվում է կազմել համապատասխան արձանագրություն դեպքի փակման մասին՝ հիմնավորելով այն պայմանավորող գործոններն ու հանգամանքները։

3.13 Եթե որոշում է կայացվում երեխային իր միջավայրում թողնելու մասին, ապա կազմակերպությունը.

3.13.1 Կազմում/վերանայում է երեխայի հետ աշխատանքի անհատական ծրագիրը՝ ապահովելով դրա համապատասխանությունը բռնության ենթարկված երեխայի հետ աշխատանքի սկզբունքներին։

3.13.2 Շարունակում է համագործակցել ծնողի/խնամակալի հետ (եթե նա չէ բռնարարը)՝ ամրապնդելով նրա՝ երեխայի անվտանգությունն ապահովելու հմտությունները, ունակությունները։

3.13.3 Կազմակերպության աշխատակիցը շարունակում է հետևել երեխային՝ կենտրոնում/ծառայությունում գտնվելու ընթացքում, մասնավորապես, նկատի ունենալով Հավելված 4.-ում բերված բռնության նշանները։

3.14 Երեխաների պաշտպանության հանձնաժողովում ներգրավված մասնագետները պարտավորվում են նիստ գումարել բոլոր այն դեպքերում, երբ երեխայի նկատմամբ բռնության կիրառման վերաբերյալ կասկած կամ ռիսկ կա։ Ինչպես նաեւ, եթե դեպքի առնչությամբ ծագել են նոր փաստեր, որոնք լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացման կամ աշխատանքային պլանի փոփոխման անհրաժեշտություն են առաջացրել։

3.15 Կազմակերպությունը պարտավորվում է համագործակցել ԵՊ հարցերով պետական պատասխանատու պաշտոնական կառույցների հետ (ԸԿԵԻՊԲ, Ոստիկանություն, ԽՀՀ, ՍԱՏԲ/Գ) այդ թվում բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել, ապահովել դեպքի մշտադիտարկումը, մասնակցել եւ հրավիրել քննարկումներ եւ այլն)։

3.16 Կազմակերպությունը երաշխավորում է ապահովել երեխայի դեպքի մշտադիտարկումը՝ երեխայի իր շահառուն լինելու ողջ ընթացքում։

3.17 Կազմակերպությունը երաշխավորում է, որ կարձագանքի բռնության բոլոր դեպքերին եւ ընտրողական մոտեցում չի ցուցաբերի դրանց նկատմամբ։

3.18 Բռնության կասկածի վերաբերյալ իրականացվող հետաքննության գործընթացում ներգրավված բոլոր մասնագետները պարտավորվում են պահպանել դեպքի քննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիությունը։ Արգելվում է բռնության ենթարկված երեխայի եւ հանցագործության այլ ասպեկտների վերաբերյալ մանրամասների/ տեղեկատվության հրապարակումը առանց բռնության ենթարկված երեխայի եւ նրա ծնողների/խնամակալների համաձայնության (իսկ հրապարակման դեպքում պետք է անպայմանորեն պահպանվեն՝ երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը մեդիա նյութերում ներկայացնելու կանոնները[14])։

3.19 «Հայկական Կարիտաս»-ը պատշաճորեն պահպանելով երեխաների պաշտպանության վտանգ պարունակող միջադեպերում ներգրված անձանց տվյալների եւ դեպքին վերաբերվող տեղեկատվության գաղտնիությունը, կարող է հրապարակել միջադեպերի մասին ընդհանուր տեղեկություններ՝ նպատակ ունենալով օժանդակել դրանցից դասեր

[14] Ավելի մանրամասն տե՛ս «Արտաքին եւ ներքին հաղորդակցության ապահովում» բաժնում։

քաղելուն, հետագա միջադեպերի կանխարգելմանը՝ համաձայն տեղական օրենսդրությամբ սահմանված պահանջներին: «Հայկական Կարիտաս»-ը կարող է դեպքերի մասին տեղեկություններն օգտագործել նաեւ ուսուցողակեւ ժամանակ, տրամադրվող տեղեկատվությունն այնպիսին պետք է լինի, որպեսզի բացառվի այն կոնկրետ անձի հետ նույնականացնելու հնարավորությունը:

3.20 Կազմակերպության բոլոր աշխատակիցները եւ կամավորները բռնության վերաբերյալ կասկածի առկայության պարագայում պետք է գործեն համաձայն սույն փաստաթղթում ամրագրված դրույթների: Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ու կամավորները պետք է գործեն, պահպանելով երեխայի լավագույն շահի սկզբունքը՝ անկախ սեփական նախապաշարմունքներից եւ համոզմունքներից:

4. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1 Կազմակերպությունից դուրս գտնվող անձանց (դոնորներ, լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր, այլ ՀԿ-ներ) մուտքը կազմակերպություն եւ հաղորդակցության կազմակերպումը.

- Ծառայության շահառու երեխայի պատմությունը, լուսանկարների թղթապանակները պահպանվում են փակ եւ անվտանգ վայրերում, որոնց հասանելիություն ունեն միայն սահմանափակ թվով անձինք։
- Հովանավորների կապը երեխայի հետ մշտադիտարկվում է բացառելու անընդունելի առաջարկություն պարունակող մեկնաբանությունների, առաջարկությունների դեպքերը։ Նման դեպքերի բացահայտման պարագայում, կազմակերպությունը ունի հովանավորչությունից հրաժարվելու, փոխհարաբերությունները խզելու իրավունք։
- Կազմակերպության հովանավորներին պետք է խորհրդատվություն տրամադրվի առ այն, որ կազմակերպության քաղաքականությունն արգելում է առանց տեղեկացնելու շահառուներին տունայցեր կատարելը։
- Կազմակերպության ծրագրերում ներգրավված շահառուները տեղեկացված են տունայցերի իրականացման վերաբերյալ կազմակերպության ընթացակարգերին։ Նրանց խրախուսվում է անմիջապես զեկուցել կազմակերպության անձնակազմի անդամի, կամավորի կամ հովանավորի կողմից ցանկացած այցի մասին, որի ընթացքում ընտանիքին որեւէ տիպի առաջարկություն է արվել։
- Հովանավորվող երեխաներին կատարվող այցերը պետք է ուղեկցվեն կազմակերպության համապատասխան սոցիալական աշխատողի կողմից։ Նախընտրելի է հանդիպումը կազմակերպել կազմակերպության գրասենյակի տարածքում։
- Յուրաքանչյուր հովանավոր պետք է համաձայնագիր ստորագրի[15], որ ծանոթ է եւ ամբողջությամբ հասկացել է երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականության դրույթները։
- Ծառայություններում հյուրերի շրջայցերը պետք է ուղեկցվեն կազմակերպության/ծառայության աշխատակիցների կողմից, հնարավորինս բացառելով կազմակերպության շահառուներին եւ այցելուներին միասին մենակ թողնելու հնարավորությունը։
- Անձնակազմը պետք է զգուշությամբ տեղեկատվություն տրամադրի շահառուների մասին, խուսափելով այնպիսի տեղեկատվության տրամադրումից, որը նույնականացնում է հովանավորյալ ընտանիքներին կամ երեխաներին, հասանելի դարձնելով նրանց լայն հանրությանը։ Ընդ որում, շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը չի կարող տրամադրվել այլ անձանց առանց ընտանիքի, անհրաժեշտության դեպքում նաեւ երեխայի համաձայնության (գրավոր կամ բանավոր)։

---

[15] *Հաճախ դա մեր մշակույթի պայմաններում կարող է թվալ էթիկական տեսակետից անընդունելի, ցանկալի է հետեւել, որ դա տեղի ունենա բոլոր հնարավոր դեպքերում, իսկ եթե դա հնարավոր չէ՝ հովանավորների համար պատրաստել բանավոր տեքստ, որ եթե երեխան ունի հոգեկան առողջության կամ այլ խնդիրներ, հնարավոր բարդություններից խուսափելու համար կազմակերպվող հանդիպումը պետք է ուղեկցվի աշխատակցի կողմից։*

4.2 Երեխայի վերաբերյալ տեղեկատվության տարածումը.

- Երեխայի վերաբերյալ լուսաբանվող տեղեկատվությունը չպետք է պարունակի այնպիսի դրույթներ, որոնք վնասում են երեխայի արժանապատվությունը եւ խախտում իրավունքները։

- Երեխայի հետ հարցազրույցի կամ նրա մասին հոդված գրելու պարագայում հատուկ ուշադրություն պետք է դարձվի երեխայի՝ իր մասին հաղորդվող տվյալների/տեղեկատվության գաղտնիության պահպանման իրավունքին։ Ըստ այդմ երեխայի տեսակետը պետք է լսված լինի, իսկ հրապարակվող տեղեկատվությունը պետք է այնպիսին լինի, որ պաշտպանի երեխային ցանկացած տեսակի վնասից եւ պատժից, ներառյալ դրանց ենթարկվելու ռիսկից։
- Երեխայի պատմությունը եւ լուսանկարը պետք է ներկայացնել համապատասխան համատեքստում։ Երեխայի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ պարունակվող դրույթներում պետք է խուսափել ցանկացած տիպի պիտակավորում, կատեգորիականացում ենթադրող բառերի, արտահայտությունների օգտագործումից։
- Այն անձինք, ովքեր լավագույնս են տեղյակ երեխայի իրավիճակին եւ կարող են գնահատել այն, պետք է հետեւեն, որպեսզի երեխայի վերաբերյալ պատրաստվող ռեպորտաժներում, հոդվածներում պահպանվեն բոլոր էթիկական չափանիշները։
- Պետք է խուսափել այնպիսի պատմությունների կամ լուսանկարների լուսաբանումից, որոնք կարող են վտանգի/ռիսկի ենթարկել երեխային, նրա քույր-եղբայրներին կամ հասակակիցներին, եթե անգամ այնտեղ փոխված են երեխային նույնականացնող տվյալները։
- Երաշխավորեք, որ երեխան եւ նրա խնամակալը տեղեկացված լինեն իրենց հետ անցկացվող հարցազրույցի, իրենց մասին պատրաստվող ռեպորտաժի կամ այլ մեդիանյութի նպատակի եւ դրա օգտագործման եղանակների վերաբերյալ։

4.3 Երեխայի վերաբերյալ տեղեկատվություն տարածելիս պետք է օգտագործվեն այնպիսի լուսանկարներ, որոնցում պաշտպանված է երեխայի արժանապատվությունը եւ նրանք չեն ներկայացվում որպես զոհեր։ Սա նշանակում է, որ.

- երեխայի վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է լինի չափազանցված, էմոցիոնալ եւ ոչ կառուցողական
- պետք է ներկայացված լինի երեխաների անհատականությունը՝ իրենց սեփական ու պատմություններով
- պետք է չօգտագործվեն երեխաների մերկ կամ կիսամերկ վիճակում պատկերող լուսանկարներ
- պետք է հաշվի առնված լինեն որոշ երեխաների լրացուցիչ պաշտպանության կարիքները, օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր երեխաները

- Կազմակերպության կայքերում չեն կարող օգտագործվել երեխաների սկանավորված նկարները առանց կազմակերպության այն ծառայության/ծրագրի պաշտոնական թույլտվության, որում ներգրավված է երեխան եւ երեխայի ծնողները/խնամակալները։ Թույլտվությունը պետք է լինի գրավոր եւ ներառված լինի երեխայի անձնական գործում՝ ծնողի հետ ծառայությունների տրամադրման վերաբերյալ ստորագրված պայմանագրին կից։

- Կազմակերպության կայքերում կամ երեխայի վերաբերյալ տեղեկատվության փոխանցման ցանկացած աղբյուրում/միջոցում երեխայի վերաբերյալ անձնական տեղեկատվությունը պետք է այնպիսին լինի, որպեսզի հնարավոր չլինի նույնականացնել երեխայի գտնվելու վայրը, ինքնությունը:

4.4 Երեխաների վերաբերյալ հաղորդակցությունը սոցիալական ցանցերի եւ թվային տեխնոլոգիաների միջոցով պետք է իրականացվի, ելնելով հետեւյալ սկզբունքներից.

- *Արժանապատվություն.* հաղորդակցության ցանկացած ձեւի մեջ երեխաներին պետք է վերաբերել եւ ներկայացնել արժանապատվորեն, այլ ոչ որպես անօգնական զոհերի կամ անպատշաճ, ակնարկներ պարունակող սեռականացված վարքին բնորոշ դիրքերում:
- *Համաձայնություն.* այն երեխաները, ում մասին «Հայկական Կարիտաս»-ի աշխատողները, որպես ուղղակի սուբյեկտ, հավաքում են ֆոտո/տեսա կամ տեքստային նյութեր, պետք է դրանց վերաբերյալ տեղեկացված համաձայնություն տան: Տեղեկացված համաձայնություն նշանակում է՝ սուբյեկտն ունի ընդհանուր պատկերացում իր մասին գրվող կամ նկարահանվող նյութի նպատակի մասին եւ բանավոր կամ գրավոր կերպով (նախընտրելի է գրավոր) տալիս է իր համաձայնությունը: Ստորեւ բերված դեպքերում ծնողից, խնամակալից կամ լիազորված այլ անձից, երեխայից (կախված տարիքից) վերցվում է գրավոր համաձայնություն, եթե.
  - պատրաստվող նյութի միջոցով հնարավոր է նույնականացնել երեխայի անձը
  - երեխայի անձի կամ իրավիճակի գաղտնիության բացահայտումը կարող է վնաս հասցնել երեխայի անձնական կյանքին, արժանապատվությանը, անվտանգությանը կամ հեղինակությանը
- *Կրթում.* «Հայկական Կարիտաս»-ն ակտիվորեն կրթում է երեխաներին, նրանց ծնողներին/խնամակալներին եւ հովանավորներին/դոնորներին այնպիսի հարցերում, թե, օրինակ, ինչպես կարելի է անվտանգ եւ պատշաճորեն օգտագործել սոցիալական ցանցերը եւ թվային տեխնոլոգիաները՝ միեւնույն ժամանակ խուսափելով ռիսկերից եւ դիմագրավելով սպառնալիքները:

4.5 **Հաղորդակցության ընթացքում վնասի կանխարգելում.** «Հայկական Կարիտաս»-ը կձեռնարկի հետեւյալ քայլերը, որպեսզի կանխարգելի հաղորդակցության, սոցիալական ցանցերի, թվային տեխնոլոգիաների օգտագործումից եկող վնասները (լուսանկարներ, տեսագրություններ, հոլովակներ, պատմություններ, հոդվածներ կամ այլ նյութեր).

- սոցիալական ցանցերում կամ թվային տեխնոլոգիաներում տեղադրված նյութերում պետք է խուսափել երեխայի ամբողջական անուն-ազգանունի, երեխայի գտնվելու վայրի կամ հասցեի վերաբերյալ տվյալների ներառումից
- նկարահանող սարքերում աշխարհագրական վայրը նշող պիտակի գործառույթը պետք է լինի անջատված: Այս դրույթը հանդիսանում է նաեւ հովանավորների այցելությունների ընթացակարգի մաս
- էլեկտրոնային փոստով երեխայի վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու դեպքում՝ էլեկտրոնային նամակների խորագրերը պետք է լինեն անվնաս, չուղղորդող, իսկ հաղորդագրությունները պետք է ընդգծվեն որպես կոնֆիդենցիալ (գաղտնի):

- առանց Կազմակերպության իմացության չի թույլատրվում ուղղակի, չօժանդակված, չհիմնավորված հաղորդակցությունը սոցիալական ցանցերում հետեւյալ կողմերի միջեւ. Հովանավոր /դոնոր/ այցելու եւ գրանցված ու չգրանցված երեխաներ, նաեւ անձնակազմի, կամավորների, «Հայկական Կարիտաս»-ի այլ ներկայացուցիչների ու գրանցված եւ չգրանցված երեխաների միջեւ: Այն դեպքում, երբ թե երեխան, թե հովանավորը ցանկանում են հաղորդակցվել սոցիալական ցանցերի միջոցով, ապա հարցաթերթիկի օգնությամբ գնահատվում է երեխայի համացանցից անվտանգ օգտվելու ըմբռնումը եւ գիտելիքները, ինչպես նաեւ, հնարավորության դեպքում, հաղորդակցության այլընտրանքային տարբերակներ են ապահովվում, որտեղ հաղորդակցությունը երկու կողմերի միջեւ կարող է տեղի ունենալ համապատասխան մասնագետի վերսկողության ներքո:

4.6 **Հաղորդակցության, սոցիալական ցանցերի եւ թվային տեխնոլոգիաների ստանդարտների խախտումների մասին զեկուցումը:** Այս ստանդարտների բոլոր խախտումները պետք է զեկուցվեն Ծրագրի համակարգողին/ղեկավարին եւ համապատասխանաբար, ԵՊ պատասխանատուին՝ կախված խախտման ազդեցությունից:

4.7 **Երեխայի մասնակցության ապահովումը.**

- Կազմակերպությունը հանձն է առնում չափել երեխաների մասնակցության աստիճանն իրենց աշխատանքում, հաշվի առնելով «Երեխաների իրավունքների պաշտպանության» ՄԱԿ-ի կոնվենցիայի ազատ արատահայտման իրավունքը՝ հոդված 13, մտքի, դավանանքի եւ համոզմունքների ազատության իրավունք՝ հոդված 14, միավորումների եւ հավաքների ազատության իրավունքը՝ հոդված 15, երեխայի տեղեկատվության հասանելիության իրավունքը՝ հոդված 17[16]:
- «Հայկական Կարիտաս»-ը ապահովում եւ նպաստում է երեխաների մասնակցությանն իր կողմից իրականացվող ծրագրերում եւ մատուցվող ծառայություններում: Մեծացնելով երեխաների մասնակցությունն իրենց աշխատանքում, «Հայկական Կարիտաս»-ը ձգտում է.

4.7..1 մեծացնել երեխաների՝ որպես հիմնական շահառուների նկատմամբ հաշվետվողականությունը

4.7..2 խթանել, որպեսզի երեխաների ձայնը լսված լինի իրենց համայնքներում եւ իրենց վերաբերող հարցերի շուրջ կայացվող որոշումներում

4.7..3 խթանել, որպեսզի երեխաների ձայնն ազդեցություն ունենա Կազմակերպության կողմից մշակվող ծրագրերի նախագծման, իրականացման եւ մշտադիտարկումների վրա

4.7..4 երաշխավորել, որ երեխաները կարող են մեկնաբանել եւ ազդեցություն գործել Կազմակերպության ռազմավարության, սույն քաղաքականության եւ դրանց վերաբերող որոշումների կայացման վրա:

[16] Երեխաների մասնակցությանը եւ դրա չափման վերաբերող մանրամասն նյութ, տե՛ս Հավելված 5:

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ / ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍԸ

Սույն մասնագիտական էթիկայի կոդեքսի նպատակն է՝ երեխաների հետ աշխատանքում ապահովել անվտանգ միջավայր եւ նվազեցնել բռնությունների դրսեւորման ցանկացած ռիսկ։ «Հայկական Կարիտաս»-ն իր անձնակազմից ու կամավորներից ակնկալում է գործել համաձայն սույն մասնագիտական էթիկայի կոդեքսով սահմանված դրույթների։

5.1 «Հայկական Կարիտաս»-ի ծրագրերի աշխատակիցը, կամավորը կամ այցելուն հարգանքով է վերաբերվում երեխաներին, անկախ տարիքից, լեզվից, կրոնից, ազգային/էթնիկ պատկանելիությունից, սոցիալական ծագումից, տնտեսական դիրքից, սահմանափակ հնարավորություններից կամ այլ կարգավիճակից։

5.2 «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցը կամ կամավորը կատարում է իր պարտականությունները եւ հոգում է կազմակերպության բարի համբավի/հեղինակության մասին։ Աշխատանքը կազմակերպությունում ընկալվում է որպես առաքելություն, իսկ աշխատակիցներն ակտիվորեն ներգրավվում են բարեգործական եւ կամավորական գործունեությունում։

5.3 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը, այցելուն կամ գործընթացում ներգրավված ցանկացած անձ հարգում է եւ պահպանում ներպետական օրենքները։ Նրա վարքը բնութագրվում է ազնվությամբ, գործողությունների թափանցիկությամբ, անշահախնդրությամբ, արդարության եւ սիրո սկզբունքների պահպանման նկատմամբ հարգանքով։

5.4 Կազմակերպության աշխատակիցը, կամավորն ինքն անձամբ ներգրավված չէ սեռական շահագործման, ֆիզիկական կամ հոգեբանական սպառնալիքի կամ բռնության որեւէ դրսեւորում ենթադրող գործողություններում եւ սահմանափակում ու կանխարգելում է այն անձանց մուտքը եւ գործունեությունը կազմակերպության շրջանակներում, ովքեր ունեն բռնություն կատարելու անցյալ կամ ներկա փորձառություն։

5.5 «Հայկական Կարիտաս»-ի անձնակազմն ու կամավորները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը խուսափելու այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են վնասել կազմակերպությանը, նրա աշխատակիցներին, կամավորներին, շահառուներին եւ համագործակցող մյուս կողմերին։

5.6 Երեխաների ներգրավմամբ «Հայկական Կարիտաս»-ում տեղի ունեցող որեւէ միջոցառում կամ գործունեություն ենթադրում է նաեւ երեխաների ծնողների, ուսուցիչների, նրանց հետ աշխատող այլ մասնագետների ներգրավում։

5.7 Կազմակերպության աշխատակիցները տեղյակ են բոլոր այն իրավիճակներին եւ դրանց կառավարման մեխանիզմներին, որոնք բռնության ռիսկ են պարունակում։

5.8 Կազմակերպությունում երեխաների հետ աշխատանքը պլանավորվում եւ կազմակերպվում է՝ հիմք ընդունելով հնարավոր ռիսկերը նվազագույնի հասցնելու սկզբունքը։

5.9 Երեխաների հետ փոխհարաբերություններում, համատեղ գործողություններում կազմակերպության աշխատակիցը, կամավորը կամ գործընթացում ներգրավված ցանկացած անձ ապահովում են յուրաքանչյուր երեխայի անձի նկատմամբ հարգալից

մոտեցումը, խուսափում են այնպիսի վարքային դրեւորումներից, որոնք կարող են մեկնաբանությունների տեղիք տալ կամ ուշադրություն գրավել։

5.10 Կազմակերպության աշխատակիցները երեխաների հետ աշխատանքում կիրառում են միասնական մոտեցում, խուսափում որեւէ մեկի հանդեպ հովանավորչություն դրսեւորելուց։

5.11 Կազմակերպության աշխատակիցներն երեխաների հետ հաղորդակցման ընթացքում այնպիսի արտահայտություններ են օգտագործում, որոնք չեն պիտակավորում կամ ակնարկ պարունակում երեխայի կամ նրա ծնողների ծագման, որեւէ խմբի պատկանելիության մասին։

5.12 Կազմակերպության աշխատակիցներն երեխաների հետ աշխատանքում ապահովում են այնպիսի միջավայր, որտեղ երեխաներն ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետը, դիրքորոշումները եւ մտահոգությունները։ Միեւնույն ժամանակ, կազմակերպության աշխատակիցները կանխարգելում են երեխաների կողմից մեկը մյուսի նկատմամբ ծաղրական, դիտավորություն պարունակող գործողությունները եւ չարաշահումը՝ իր բոլոր դրսեւորումներով։

5.13 «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցը ուշադիր է իր արտաքին տեսքի նկատմամբ՝ կրելով պատշաճ հագուստ, դիմահարդարում եւ զարդեղեն (հղում կազմակերպության ներքին կանոնադրությանը)։

5.14 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը, ինչպես նաեւ գործընթացում ներգրավված ցանկացած անձ ներդնում է բոլոր ջանքերը այլ աշխատակիցների, կամավորների հետ համագործակցելու համար։

5.15 Կազմակերպության բոլոր աշխատակիցները հանձնառություն եւ պատասխանատվություն ունեն տեղեկացնել ԵՊ պատասխանատուին երեխաների նկատմամբ բռնության ցանկացած դրսեւորման մասին՝ խուսափելով դրանց մեկնաբանությունից կամ առկա փաստերը չափազանցնելուց (առանց հորիզոնական մակարդակում քննարկումներ ծավալելու)։

5.16 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը կամ այցելուն կիրառում է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի երեխաներին բռնության բոլոր ձեւերից, մարդկային արժանապատվության նվաստացումից, անձնական նպատակներով երեխային որոշակի գործողություններում ներգրավվելուց։

5.17 Կազմակերպության աշխատակիցը չպետք է որեւէ տեսակի վճար ընդունի տրամադրվող ծառայությունների դիմաց բացառությամբ, եթե այդ առնչությամբ կան պաշտոնապես սահմանված ընթացակարգեր։

5.18 Հնարավոր կոնֆլիկտների լուծումը.

5.18.1 եթե կազմակերպության աշխատակցի մոտ շահերի կոնֆլիկտ է առաջանում, ապա դրանք լուծելիս, մասնագետը պետք է առաջնորդվի հետեւյալ դրույթներով.

- կազմակերպության աշխատակիցը ոչ մի պարագայում չի օգտագործում կազմակերպության հնարավորությունները, աշխատանքային-ծառայողական կապերը՝ անձնական շահի հասնելու համար

- ծրագրի աշխատակիցը/կամավորը լուծում է կոնֆլիկտային իրավիճակները, ելնելով քրիստոնեության սկզբունքներից, հիմնվելով կոլեկտիվի ամբողջականության եւ կազմակերպության համընդհանուր բարօրության վրա
- արձագանքում է անարդարության եւ բարձիթողության դեպքերին, այդ մասին տեղեկացնելով իր ղեկավարությանը

5.19 «Հայկական Կարիտաս»-ի սեփականության, գույքի եւ միջոցների պաշտպանությունը.

5.19.1 Երաշխավորել, որ «Հայկական Կարիտաս»-ի գույքային ձեռքբերումները, սեփականությունը չեն թերօգտագործվում կամ պաշտպան են գողություններից, խաբեությունից կամ վնասից: Կազմակերպությունը հոգ է տանում, որ անձնակազմի բոլոր անդամները տեղեկացված լինեն դրա պրակտիկ կիրառման վերաբերյալ:

5.19.2 Երաշխավորել, որ «Հայկական Կարիտաս»-ի ինտելեկտուալ սեփականությունը չի թերօգտագործվում, պաշտպանված է յուրացումից, իսկ անձնակազմի անդամները տեղեկացված են դրա կիրառմանն առաջադրվող պահանջներին: Օրինակ, կազմակերպության շրջանակներում իրականացված հետազոտությունների, դեպքերի ուսումնասիրությունների արդյունքները, դրանց վերլուծությունները չեն կարող օգտագործվել, առանց կազմակերպության համաձայնության:

5.19.3 Կազմակերպության աշխատանքում սահմանել եւ ապահովել մասնագիտական ազնվության, այդ թվում նաեւ աշխատանքի շրջանակներում ֆինանսական պատասխանատվությունից բխող հաշվետվողականության սկզբունքները:

5.20 Կազմակերպության անվտանգության նպատակով սահմանափակումներ.

5.20.1 Արգելվում է զենքի տեղափոխումը դեպի կազմակերպության սեփականության ներքո գտնվող տարածքներ (սեփական կամ վարձու) ներառյալ բնակարան, գրասենյակ, մեքենաներ եւ այլն, կամ այն տարածքները, որտեղ կազմակերպությունը միջոցառումներ է իրականացնում:

5.20.2 Արգելվում են թմրանյութերի կամ ալկոհոլային խմիչքների օգտագործումը աշխատանքային ժամերի ընթացքում[17]:

5.20.3 Արգելվում է կազմակերպության, նրա կողմից տրամադրվող ծառայությունների եւ կազմակերպվող միջոցառումների ընթացքում բռնություն քարոզող նյութերի, արգելված տեսանյութերի եւ նկարների ցուցադրությունը: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ նման նյութերը օգտագործվում են կազմակերպության աշխատակիցների ուսուցման նպատակով:

«Հայկական Կարիտաս»-ի ղեկավարությունը պատասխանատու է երաշխավորելու, որ անձնակազմի անդամները տեղեկացված են էթիկայի կոդեքսին եւ հանձնառու են դրա կատարման համար:

Սույն փաստաթղթի մաս են համարվում նաեւ կից հավելվածները, բացառությամբ Հավելված 1-ի, որը քաղաքականության/ ներքին ընթացակարգերի համառոտ տարբերակն է նախատեսված կազմակերպության աշխատակիցների եւ կամավորների համար

---

[17] *Եթե նշվում է տոն, տարեդարձ, ծառայության որեւէ ամյակ եւ այլն, ապա պետք է հոգ տանել, որ ալկոհոլը լինի սիմվոլիկ, նախապես քննարկվի երեխաների հետ եւ ներկայացվի նրանց դրա գործածման նպատակահարմարությունը:*

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

«Հայկական Կարիտաս». ակնարկ կազմակերպության մասին (պատմությունը, առաքելություն)

Հիմնական հասկացություններ

Երեխա. երեխան 18 տարին չլրացած անձն է, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով ավելի վաղ է ճանաչվել գործունակ (Համաձայն «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի):

Երեխայի լավագույն շահ. երեխայի խնամքի որակի գնահատման հիմնական չափանիշն է, որը ներառում է բոլոր այն պայմանների համակցումը, որոնք անհրաժեշտ են երեխայի հիմնարար կարիքների բավարարման համար, սկսած ֆիզիկական պայմաններ ստեղծելուց, մինչեւ դաստիարակություն, պաշտպանություն, երեխայի հիմնական արժեհամակարգի ձեւավորում՝ նրա իրավունքների իրացման եւ տվյալ հասարակության մշակույթի համատեքստում: Այլ խոսքով, լավագույն շահը դա այն բոլոր պայմանների, հնարավորությունների եւ գործողությունների համախմբություն է, որը կարող է ապահովել երեխայի պահանջմունքների ադեկվատ բավարարումը, իրավունքների պաշտպանությունը, անձնային աճն ու բնականոն զարգացումը: Երեխայի լավագույն շահից բխող որոշման կայացման գործընթացում պետք է ընդգրկվի հենց ինքը՝ երեխան, իր տարիքային առանձնահատկություններին եւ հասունության մակարդակին համապատասխան կերպով:[18]

Կյանքի դժվարին իրավիճակ. հաշմանդամության, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու հետեւանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ է, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող (Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի):

Հատուկ կարիքներով երեխա. հատուկ կարիքներով են համարվում այն երեխաները, ովքեր խնամքի, բուժման, տուժած գործառույթների վերականգնման, հոգեբանական աջակցության, կրթական, զարգացման եւ/կամ սոցիալական շարունակական, տեւական կարիքներ ունեն, որոնք չեն կարող լիարժեք բավարարվել ընդհանուր բնույթի ծառայությունների համակարգում եւ ընդունված միջին չափորոշիչներով, պահանջում են հատուկ ծրագրային մոտեցում, հատուկ առողջապահական, կրթական, սոցիալական եւ հարակից ծառայություններ:

Դեպրիվացիան կենսականորեն կարեւոր պահանջմունքների բավարարման հնարավորության զրկումը կամ սահմանափակումն է[19]:

Բռնությունը բոլոր տեսակի ֆիզիկական, հոգեբանական բռնարարքների, վնասվածքների, չարաշահումների, անտեսման եւ արհամարհական վերաբերմունքի, սեռական եւ այլ շահագործման դրսեւորումն է («Երեխայի իրավունքների մասին հռչակագիր», Հոդված 9):

---

[18] Cantwell, N.; Davidson, J.; Elsley, S.; Milligan, I.; Quinn, N. (2012). Moving Forward: Implementing the 'Guidelines for the Alternative Care of Children'. UK: Centre for Excellence for Looked After Children in Scotland.

[19] Երեխաների պաշտպանություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար (Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն., Խաչատրյան Ա., Հովհաննիսյան Ա., Սարգսյան Ս.,) , Եր., ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ եւ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ, 2009թ., էջ 316:

Երեխաների հանդեպ բռնություն. երեխաների հանդեպ բռնությունը ֆիզիկական եւ/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական արարքի, անտեսման կամ անտեսող, կոմերցիոն կամ չարաշահող վարքի դրսեւորումն է երեխաների նկատմամբ՝ լիազորության, վստահության եւ դիրքից օգտվելու համատեքստում, ինչն արդյունքում հանգեցնում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը (Առողջության համաշխարհային կազմակերպության «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման խորհուրդի» սահմանում, 1999թ.):

Ֆիզիկական բռնությունը. մասնագիտական գրականության շրջանակներում երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունը սահմանվում է որպես երեխայի նկատմամբ կատարված ցանկացած ֆիզիկական գործողություն, որը պատճառում է կամ կարող է վնաս պատճառել երեխայի առողջությանը, գոյությանը, զարգացմանը եւ արժանապատվությանը ներառյալ ծեծը, հարվածելը, ցնցելը, նետելը, վախեցնելը, կծելը, խեղդելը, այրելը, կանխամտածված թունավորելը, շնչահեղձ անելը կամ ֆիզիկական վնաս պատճառելու անհաջող փորձը:

Սեռական բռնությունը. Մասնագիտական գրականության շրջանակներում հանդիպում են երեխաների նկատմամբ սեռական բռնության տարբեր սահմանումներ: Ընդհանուր առմամբ, երեխաների նկատմամբ սեռական բռնությունը կարող է սահմանվել որպես երեխային սեռական բնույթի այնպիսի գործողությունների մեջ ներքաշելը, որը նա լիովին չի հասկանում[20]: Երեխաների նկատմամբ սեռական բռնության առավել ընդգրկուն սահմանման համաձայն՝ այն երեխայի նկատմամբ սեռական բնույթի գործողությունների իրականացումն է, որոնք վնասում են վերջինիս ֆիզիկական, հուզական եւ ճանաչողական զարգացումը[21]: Այն ենթադրում է երեխային ստիպողաբար սեռական հարաբերությունների մեջ ներգրավումը՝ առանց հաշվի առնելու՝ արդյոք երեխան տեղյակ է, թե ինչ է տեղի ունենում: Հարաբերությունները կարող են ենթադրել ինչպես ֆիզիկական շփում, այնպես էլ առանց շփման հարաբերություններ: «Սեռական» ասելով, այստեղ նկատի ունենք յուրաքանչյուր գործողություն, որն ուղեկցվում/ հանգեցնում է սեռական գրգռման՝ բռնարարի մոտ:

Հուզական, էմոցիոնալ բռնությունը. հուզական բռնությունը խնամակալի կամ ծնողի կողմից երեխային համապատասխան աջակցող միջավայր ապահովելու պարտականության իրականացման գիտակցված եւ չգիտակցված ձախողումն է: Այն է այնպիսի գործողություններ, որոնք բացասաբար են ազդում երեխայի հուզական առողջության եւ զարգացման վրա:

Առանձնացվում են ծնողի կամ խնամակալի կողմից իրականացվող որոշակի գործողություններ, որոնք կարող են որակվել որպես երեխայի նկատմամբ հուզական բռնություն: Այդ **գործողություններն** են՝[22]

---

[20] Berliner, Lucy, and Diana M. Elliott. “Sexual Abuse of Children.” In The AP SAC Handbook on Child Maltreatment, edited by John Briere, Lucy Berliner, Josephine A. Bulkley, Carole Jenny, and Theresa Reid. Thousand Oaks, CA: Sage Publications, 1996, pp. 51–71.

[21] Conceptual Framework for Child Sexual Abuse, S M Sgroi; L C Blick ; F S Porter, New York, USA, 1982.

[22] The psychologically battered child, by James Garbarino, Edna Guttman, and Janis Wilson Seeley. San Francisco: Jossey-Bass, 1986, p.286

✓ **Մերժում**. երբ ծնողը կամ խնամակալը չի ընդունում երեխային որպես մեծագույն արժեք, որին միաժամանակ հատուկ են որոշակի պահանջմունքներ ունենալը

✓ **Մեկուսացում.** երբ ծնողը կամ խնամակալը մասամբ կամ ամբողջությամբ սահմանափակում է երեխայի սոցիալական շփումները, ստիպում է երեխային ներշնչվել, որ ինքը մենակ է աշխարհում

✓ **Ահաբեկում.** երբ ծնողը կամ խնամակալը վիրավորում է երեխային, սպառնում, ստեղծում վախի մթնոլորտ

✓ **Անտեսում.** երբ չեն բավարարվում երեխայի հուզական եւ ինտելեկտուալ զարգացման համար անհրաժեշտ կարիքները (պետք է տարբերել «անտեսում» ֆիզիկական իմաստով տարբերությունները, երբ գործ ունենք կենսական կարիքների հետ (բարձիթողություն))

✓ **Մտադրված «փչացում».** երբ ծնողը խրախուսում է, որպեսզի երեխան դրսեւորի ապակառուցողական, հակասոցիալական վարք, այլ կերպ ասած նպաստում է, որպեսզի երեխան դրեւսորի շեղվող վարք՝ անկախ տիպից

Բարձիթողությունը կամ անտեսումը երեխայի ֆիզիկական եւ հոգեկան կարիքները բավարարելու շարունակական եւ տեւական անտեսումն է՝ երեխայի առողջության եւ զարգացման լուրջ վնասներով: Զուրավինի կողմից առաջարկված սահմանումը ներառում է ծնողների կամ խնամողների կողմից երեխայի համար զարգացում ապահովելու ձախողման երեւույթը **ութ ոլորտներում**, որոնք կարող են վնասել երեխայի ֆիզիկական, հուզական, սոցիալական եւ ճանաչողական զարգացումը: Այդ ոլորտներն են[23]՝

1. **ֆիզիկական առողջության խնամք,** օրինակ, երեխային համապատասխան բժշկական օգնություն կամ բուժում չապահովելը
2. **հոգեկան առողջության խնամք,** օրինակ, երեխայի մոտ ակնհայտ դրսեւորվող հոգեկան առողջության կամ զարգացման խնդիրներին ուշադրություն չդարձնելը ծնողների կողմից
3. **հետեւողականություն,** որը ենթադրում է տանը եւ դրսում ծնողի կողմից երեխայի վարքի վերահսկմանն ուղղված գործողություններ չիրականացնելը, օրինակ, ծնողը տեղյակ չէ, թե տնից դուրս գտնվելու ժամանակ երեխան ինչով է զբաղվում
4. **երեխայի խնամքի անպատասխանատու պատվիրակում,** օրինակ, լքել երեխային, թողնել, որպեսզի երեխան մենակ հոգա սեփական կարիքները, հանձնել երեխային ոչ ադեկվատ խնամողի խնամքին եւ այլն
5. **«կենցաղային վտանգները»,** օրինակ, բաց թողնել գազը, տաք ջուրը, կտրող, ծակող գործիքները, դեղորայքը պահել երեխայի համար հասանելի վայրում եւ այլն:
6. **բնակարանում համապատասխան սանիտարական պայմանների բացակայությունը,** օրինակ, հատակը մշտապես կեղտոտ է, բնակարանում առնետներ կան, զուգարանը մաքուր չէ եւ այլն
7. **անձնական հիգիենան,** օրինակ, երեխայի հագուստը մշտապես կեղտոտ է, պատառոտված, երեխայի մազերը կեղտոտ են, եղունգները կտրված չեն եւ այլն

[23] DePanfilis, D. (2009) 'Using prevention science to reduce the risk of child neglect', *Children Australia*, 34(1), pp. 40–44. doi: 10.1017/S1035077200000523.

8. **սնուցում,** որը ենթադրում է երեխայի տարիքին համապատասխան նրան անհրաժեշտ սնունդով չապահովելը

Երեխայի մասնակցությունը. երեխան իրավունք ունի մասնակցել եւ տեսակետ արտահայտել իրեն, իր համայնքին եւ ավելի լայն հասարակությանը, որտեղ ինքն ապրում է, վերաբերվող որոշումների ընդունման գործընթացներին:

Երեխայի պաշտպանությունը, այն բոլոր քաղաքականությունների, չափորոշիչների, ուղղորդումների եւ ընթացակարգերի ամբողջությունն է, որը միտված է պաշտպանել երեխային կանխամտածված եւ միտումնավոր վնասից: Այս համատեքստում, ***երեխայի պաշտպանությունը կազմակերպության («Հայկական Կարիտաս») եւ նրա անձնակազմի պարտականությունն է իրենց ծառայությունների շահառու երեխաների հանդեպ:***

Երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատու. Կազմակերպության կողմից նշանակված անձ, ով կանոնակարգում է երեխայի պաշտպանությանն առնչվող խնդիրները կազմակերպությունում:

Երեխաների պաշտպանության հարցերով հանձնաժողով. Կազմակերպության ԵՊ պատասխանատուներին միավորող կոլեգիալ մարմին, որը որոշումներ է կայացնում երեխայի պաշտպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ:

Երեխայի հետ ուղղակի հաղորդակցություն. Կազմակերպությունում մասնագիտական աշխատանքի շրջանակներում երեխայի հետ կանոնավոր կամ ոչ մշտական, կարճաժամկետ կամ երկարաժամկետ հաղորդակցություն միեւնույն ֆիզիկական միջավայրում:

Երեխայի հետ անուղղակի հաղորդակցություն.

- **Փաստաթղթային.** Կազմակերպությունում մասնագիտական աշխատանքի շրջանակներում առնչություն երեխային վերաբերող փաստաթղթերին (երեխայի անուն եւ ազգանուն, լուսանկարներ, անհատական սոցիալական պլան եւ այլն)
- **Կազմակերպության ֆինանսավորում.** չնայած անուղղակիորեն, սակայն ազդեցություն է ունենում երեխաների իրավիճակի վրա, այդ իսկ պատճառով, պետք է համոզված լինել, որ դոնոր կազմակերպությունները բռնությանն առնչվող խնդիրների ադեկվատ ընկալման հանձնառություն ունեն եւ պատրաստ են համագործակցել երեխաների պաշտպանությանը վերաբերվող խնդիրների/ հիմնահարցերի լուծման գործում:

1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1.1 Կազմակերպությունում երեխաների անվտանգության եւ պաշտպանության ապահովման հիմնական պատասխանատուն ու երաշխավորն երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատուն է (այսուհետ՝ ԵՊ պատասխանատու)։

1.2 Երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատուն.

1.2.1 Կազմակերպությունում երեխաների պաշտպանության հարցերով գլխավոր պատասխանատուն հանդիսանում է Կազմակերպության ծրագրերի բաժնի ղեկավարը, իսկ կազմակերպության ծառայություններում եւ կենտրոններում՝ յուրաքանչյուր ծրագրի ղեկավարը կամ կենտրոնի տնօրենը։

1.2.2 ԵՊ պատասխանատուի, իսկ նրա բացակայության դեպքում նաեւ նրան փոխարինող անձի կոնտակտային տվյալները (անուն-ազգանունը, հեռախոսահամարը, էլ. փոստը) պետք է հասանելի լինեն Կազմակերպության բոլոր այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են անմիջապես երեխաների հետ (այն ամրագրված է աշխատակազմի կողմից ստորագրված պայմանագրին՝ կից հուշաթերթում)։

1.2.3 ԵՊ պատասխանատուի, իսկ նրա բացակայության դեպքում նաեւ նրան փոխարինող անձի կոնտակտային տվյալները (անուն-ազգանունը, հեռախոսահամարը, էլ. փոստը) պետք է հասանելի լինեն Կազմակերպության շահառու-երեխաներին եւ նրանց խնամակալ/ծնողներին (այն պետք է ամրագրված լինի ծնողի/խնամակալի եւ Կազմակերպության միջեւ կնքված համաձայնագրում)։ Ի լրումն, Կազմակերպության մասնագետները երեխաների հետ պարբերաբար քննարկումներ եւ հանդիպումներ են կազմակերպում, որի ընթացքում ներկայացվում է ԵՊ պատասխանատուի դերը Կազմակերպությունում, նրա գործառույթները, ինչպես նաեւ կոնտակտային տվյալները։

1.2.4 ԵՊ պատասխանատուն համաձայն սույն քաղաքականությամբ սահմանված դրույթներին բռնության կասկածի մասին զեկույցներ ստանալու եւ տեղեկացվելու պարագայում պետք է ձեռնարկի համապատասխան միջոցառումներ, այդ թվում ներքին հետաքննություն բռնության դեպքի վերաբերյալ, վերջինիս առիթով կապի հաստատում, բանավոր եւ գրավոր զեկույցների տրամադրում համապատասխան պաշտոնական մարմիններին։

1.2.5 ԵՊ պատասխանատուն պատասխանատվություն է կրում քաջալերել/խրախուսել երեխաների/երիտասարդների եւ այլ խոցելի շահառուների հետ աշխատանքում անվտանգ մեթոդների կիրառումը։

1.2.6 ԵՊ պատասխանատուն կանոնավոր կերպով այցեր է իրականացնում կազմակերպության՝ երեխաներին սոցիալական ծառայություններ մատուցող կառույցներ եւ դիտարկում դրանց կողմից իրականացվող աշխատանքը։ Դիտարկման արդյունքում ԵՊ պատասխանատուն կազմում է համապատասխան զեկույց, որը ենթակա է քննարկման՝ դիտարկված կառույցի ղեկավար կազմի եւ աշխատակիցների հետ։

1.2.7 ԵՊ պատասխանատուն ներգրավվում եւ ակտիվորեն մասնակցում է երեխաների հետ աշխատող մասնագետների եւ կամավորների ընտրության գործընթացներին։

1.3 Երեխաների պաշտպանության հանձնաժողովը.

1.3.1 ԵՊ հանձնաժողովը կազմակերպության ԵՊ պատասխանատուներին միավորող մարմին է: Հանձնաժողովի նախագահը կազմակերպության գլխավոր ԵՊ պատասխանատուն է: Հանձնաժողովն իր անդամներից ընտրում է նաեւ քարտուղարի:

1.3.2 ԵՊ հանձնաժողովը բռնության կամ շահագործման դեպքերի վերաբերյալ հետաքննություն իրականացնելու եւ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող հիմնական մարմինն է կազմակերպությունում: Հանձնաժողովում որոշումները կայացվում են կոլեգիալ սկզբունքով:

1.3.3 ԵՊ հանձնաժողովը նիստ է հրավիրումը առնվազն տարին երեք անգամ, որի ընթացքում կազմակերպության ծառայությունների, կենտրոնների եւ ծրագրերի ԵՊ պատասխանատուները ներկայացնում են զեկույցներ իրենց կառույցներում ԵՊ իրավիճակի վերաբերյալ: Կազմակերպության ԵՊ պատասխանատուի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել Հանձնաժողովի արտահերթ նիստ: Հանձնաժողովն արտահերթ նիստ է հրավիրում նաեւ այն դեպքերում, երբ Կազմակերպությունում բռնության դեպք է տեղի ունենում: Հանձնաժողովի նիստերի ավարտին կազմվում են համապատասխան արձանագրություններ:

1.3.4 Յուրաքանչյուր տարի ԵՊ հանձնաժողովն իր գործունեության եւ կազմակերպությունում երեխաների պաշտպանվածության իրավիճակի վերաբերյալ զեկույց է ներկայացնում Կազմակերպության խորհրդին:

1.3.5 ԵՊ հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է բռնության/ շահագործման միջադեպին առնչվող մասնագետներին եւս հրավիրել հանձնաժողովի նիստերին:

1.4 Կազմակերպությունը ունի հատուկ գրանցամատյան, որտեղ պարտադիր կերպով գրանցվում են երեխաների նկատմամբ բռնության բոլոր միջադեպերը:

1.5 Կազմակերպության շահառու-երեխաների նկատմամբ բռնության միջադեպի վերաբերյալ պետք է տեղեկացվեն նաեւ երեխայի ծնողները/խնամակալները, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի ծնողը/խնամակալը հենց բռնարարն է կամ մասնակից է բռնությանը:

1.6 Կազմակերպության ցանկացած աշխատակից երեխայի նկատմամբ բռնության կիրառման կամ դրա սպառնալիքի վերաբերյալ կասկածի առկայության պարագայում անմիջապես հայտնում է իր ծառայության ԵՊ պատասխանատուին, ապա դեպքի վերաբերյալ կազմում համապատասխան արձանագրություն (արձանագրությունը կազմելիս պահպանել սույն բաժնի 3.8.8 կետում ամրագրված դրույթը):

1.7 **Եթե բռնության դեպքի մասին տեղեկատվությունը ստացվում է երեխայից**, աշխատակիցը պարտադիր պետք է պահպանի ներքոնշյալ կանոնները.

1.7.1 բռնության վերաբերյալ երեխայի հայտնած տեղեկատվությանը վերաբերվել լրջությամբ եւ չանտեսել այն

1.7.2 լսել և ընդունել երեխայի ասածը

1.7.3 չհետաքննել, հարցեր չտեղալ եւ խուսափել բռնության ենթարկված անձին հակադրվելուց, թույլ տալ նրան արտահայտել անձնական վախերը, անօգտակարության զգացողությունը

1.7.4 երեխային թույլ տալ ազատ արտահայտել սեփական մտքերը

1.7.5 երեխային վստահեցնել, որ այդ մասին Ձեզ պատմելով, նա ճիշտ է գործել

1.7.6 տեղյակ պահել երեխային, որ իր պատմածի մասին այլ պատասխանատու եւ մտահոգ անձանց պատմելու կարիք կա։ Չխոստանալ երեխային, որ ապահովելու եք նրա կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը, քանի որ դեպքի լրջությունից է կախված գործողությունների հետագա ընթացքը։

1.7.7 տեղեկացնել երեխային հետագա քայլերի, այդ թվում այն մասին, որ նրան կտեղեկացվի իրականացվելիք աշխատանքների հետագա ընթացքի մասին։

1.7.8 երեխայից ստացված տեղեկատվությունը արձանագրել անմիջապես խոսակցությունից հետո՝ ապահովելու համար դրա ամբողջականությունը։ Արձանագրության մեջ անպայմանորեն նշել խոսակցության տեղն ու ժամանակը, ինչպես նաեւ դրա հետ առնչվող ցանկացած իրադարձություն։

1.8 **Եթե բռնության մասին տեղեկատվությունը ստացվել է մեկ այլ անձից (ոչ երեխայից),** ապա պետք է իրականացվեն հետեւյալ քայլերը.

1.8.1 Կազմակերպության աշխատակիցը երեխայի նկատմամբ բռնության միջադեպի հետ կապված կասկածի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է կառույցի/ծրագրի/ծառայության ԵՊ պատասխանատուին։ Կառույցի/ծրագրի/ ծառայության ԵՊ պատասխանատուն մասնագիտական անձնակազմի անդամներից (սոցիալական աշխատող, հոգեբան, մանկավարժ) որեւէ մեկին (կախված երեխայի հետ մասնագետի ունեցած փոխհարաբերություններից) հանձնարարում է զրուցել[24] երեխայի հետ՝ նախնական տեղեկատվության ճշտման նպատակով։

1.8.2 Մասնագետը երեխայի հետ աշխատելուց անմիջապես հետո կազմում է գրավոր արձանագրություն դեպքի վերաբերյալ եւ այն ներկայացնում կառույցի/ծրագրի/ծառայության ԵՊ պատասխանատուին։

1.9 Բռնության դեպքի վերաբերյալ կասկածի դեպքում[25]՝

1.9.1 Մասնագիտական անձնակազմին Ծրագրի համակարգողի/ղեկավարի կողմից հանձնարարվում է անմիջապես քայլեր ձեռնարկել երեխայի անվտանգության ապահովման ուղղությամբ, այդ թվում նրան տրամադրելով մասնագիտական աջակցություն՝ սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավաբանական եւ այլն։

1.9.2 Ծրագրի համակարգողի/ղեկավարի գլխավորությամբ կատարվում է նախնական գնահատում երեխայի նկատմամբ բռնության դեպքի վերաբերյալ (այդ թվում հարցազրույց երեխայի, վերջինիս ծնողների/խնամակալների, երեխայի հետ առնչություն ունեցող այլ անձանց հետ, տունայց եւ այլն)։

1.9.3 Ծրագրի համակարգողը/ղեկավարը նախնական գնահատման վերաբերյալ արձանագրությունը ներկայացնում է կազմակերպության ԵՊ պատասխանատուին՝ իր եւ արձանագրությունը կազմած մասնագետի ստորագրությամբ։

1.9.4 Եթե երեխայի նկատմամբ բռնության դեպքը տեղի է ունեցել կազմակերպության տարածքից դուրս, ոչ նրա կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում, ապա ԵՊ պատասխանատուն պարտավորվում է անմիջապես զեկույց կազմել եւ այդ

---

[24] *Երեխայի հետ զրույցի ընթացքում մասնագետը պարտավորվում է պահպանել սույն ենթաբաժնի 3.7 կետով սահմանված դրույթները։*

[25] Բռնության դեպքերին արձագանքման մեխանիզմների սխեմաները տե՛ս Հավելված 6-ում։

մասին տեղեկացնել համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ)՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր։

1.9.5 Եթե երեխայի նկատմամբ բռնության մեջ կասկածվում է կազմակերպության անձնակազմի անդամը/ կամավորը կամ շահառուն, իսկ դեպքը տեղի է ունեցել կազմակերպության տարածքում կամ դրա կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակում, ապա կազմակերպության ղեկավար մարմինները, մասնավորապես ԵՊ պատասխանատուն, պարտավորվում են իրականացնել հետեւյալ գործողությունները.

1.9.5.1 Երեխայի նկատմամբ բռնության մեջ կասկածվող անձնակազմի անդամը/կամավորը ժամանակավորապես դադարեցնում է իր պարտականությունների կատարումը, իսկ շահառուի դեպքում ժամանակավորապես դադարեցվում է մատուցվող ծառայությունների տրամադրումը։ Բոլոր դեպքերում, պետք է երաշխավորվի անմեղության կանխավարկածը։

1.9.5.2 Կազմակերպության ԵՊ պատասխանատուի գլխավորությամբ դեպքի առնչությամբ իրականացվում է ներքին հետաքննություն։

1.9.5.3 Կազմակերպությունը երաշխավորում է հետաքննության վարման ողջ ընթացքում ապահովել երեխայի անվտանգությունը, մասնավորապես, իր կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում աջակցել բռնության զոհերին, ինչպես նաեւ բռնարարքի մեջ կասկածվող անձին։ Կազմակերպությունը երաշխավորում է, որ միջադեպի ուսումնասիրության եւ հետաքննության ողջ ընթացքում կշարունակի իր կողմից շահառուին տրամադրվող ծառայությունների մատուցումը, իսկ անհրաժեշտության դեպքում կապահովի նաեւ 3.9.1 կետում նշված մասնագիտական ծառայությունների մատուցումը։

1.9.5.4 Բռնության վերաբերյալ կասկածի հետաքննման արդյունքում, եթե բռնություն կատարելու մասին կասկածը հաստատվում է, առ այն, որ այն կատարվել է անձնակազմի անդամի/կամավորի/շահառուի կողմից կազմակերպության տարածքում կամ վերջինիս կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում, ապա կազմակերպությունը պատասխանատվություն է կրում՝ ի դեմս Կազմակերպության ԵՊ պատասխանատուի, այդ մասին անմիջապես տեղեկացնել համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ)։

1.9.5.5 Կազմակերպությունը բռնության միջադեպի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան պաշտոնական մարմիններին (ԽՀՀ, Ոստիկանություն, ԸԿԵԻՊԲ, ՍԱՏԲ/Գ) հաղորդում է միաժամանակ եւ՛ բանավոր, եւ գրավոր զեկույցով։ Եթե կազմակերպության ծառայությունը, ծրագիրը կամ կենտրոնը գտնվում է մարզկենտրոնում, ապա նախընտրելի է ի սկզբանե կապվել ԸԿԵԻՊԲ մարմինների հետ, որոնք երեխաների նկատմամբ բռնության հարցերում մյուս մարմինների համեմատությամբ ավելի մասնագիտացված են։ Մյուս դեպքերում, պետք է ուղղորդվել այն սկզբունքով, թե նշված մարմիններից, որոնց հետ են հարաբերություններն ավելի համագործակցային։

1.9.5.6 Հետագա աշխատանքը կազմակերպվում է համաձայն ՀՀ-ում գործող ընդհանուր ընթացակարգի։

1.9.5.7 Եթե հաստատվում է Կազմակերպության աշխատակցի բռնության մեջ ներգրավված լինելու փաստը, ապա համապատասխան աշխատակիցը ենթարկվում է կարգապահական տույժերի, այդ թվում պաշտոնի իջեցում, աշխատանքից հեռացում եւ այլն։ Եթե բռնության մեջ մեղադրվողը կազմակերպության կամավոր է, ապա կամավորական գործունեությունն անմիջապես դադարեցվում է։ Եթե բռնության մեջ մեղադրվողը կազմակերպության շահառուն է, ապա կախված կատարված գործողության ծանրության աստիճանից, կարող է որոշում կայացվել ինչպես մատուցվող ծառայությունների դադարեցման, այնպես էլ դրանց կազմակերպման եղանակի փոփոխման վերաբերյալ (օրինակ՝ հոգեբանական ծառայությունների արտագնա մատուցում)։

1.9.5.8 Եթե կազմակերպության աշխատակցի/կամավորի/շահառուի կողմից բռնություն գործադրելու փաստը հերքվում է կամ չի հաստատվում, ապա աշխատակիցը/կամավորը պարտադիր կերպով վերականգնվում է իր աշխատանքում։ Ի լրումն աշխատանքներ են իրականացվում նրան կոլեկտիվում վերաինտեգրելու ուղղությամբ։

1.9.6 Բռնության կասկածի հաստատման պարագայում, Կազմակերպությունում ԵՊ պատասխանատուի նախաձեռնությամբ իրականացվում է երեխաների նկատմամբ բռնության գործադրման նախադեպային ռիսկերի գնահատում։

1.9.7 Իրականացված հետաքննության արդյունքները, ինչպես նաեւ դեպքին առնչվող այլ փաստաթղթերը գրանցվում են բռնության դեպքերի արձանագրման գրանցամատյանում եւ պահպանվում առանձին ֆայլերով։ Կազմակերպությունը երաշխավորում է վերոնշյալ տվյալների գաղտնիությունը եւ սահմանափակում դրանց հասանելիությունը։

1.10 Կազմակերպության ԵՊ պատասխանատուն եւ բռնության ենթարկված երեխայի հետ անմիջականորեն աշխատող մասնագետը կարող են ներգրավվել եւ մասնակցություն ունենալ երեխայի դեպքի վերաբերյալ պաշտոնապես զբաղվող կառույցների կողմից կազմակերպված քննարկումներին եւ ծավալվող աշխատանքներին։

1.11 Եթե դեպքի քննարկումների ընթացքում, դեպքը փոխանցելու հարց է առաջանում, ապա ելնելով երեխայի անվտանգության ապահովման նորմերից՝ կազմակերպությունն ապահովում է ողջ գործընթացի պատշաճ իրականացումը եւ ամրագրում դրանք փաստաթղթերով։

1.12 Բռնության դեպքերի հետ աշխատանքի ավարտին, դեպքի ուսումնասիրմանը կցված մասնագետը պարտավորվում է կազմել համապատասխան արձանագրություն դեպքի փակման մասին՝ հիմնավորելով այն պայմանավորող գործոններն ու հանգամանքները։

1.13 Եթե որոշում է կայացվում երեխային իր միջավայրում թողնելու մասին, ապա կազմակերպությունը.

1.13.1 Կազմում/վերանայում է երեխայի հետ աշխատանքի անհատական ծրագիրը՝ ապահովելով դրա համապատասխանությունը բռնության ենթարկված երեխայի հետ աշխատանքի սկզբունքներին։

1.13.2 Շարունակում է համագործակցել ծնողի/խնամակալի հետ (եթե նա չէ բռնարարը)՝ ամրապնդելով նրա՝ երեխայի անվտանգությունն ապահովելու հմտությունները, ունակությունները։

1.13.3 Կազմակերպության աշխատակիցը շարունակում է հետեւել երեխային՝ կենտրոնում/ծառայությունում գտնվելու ընթացքում, մասնավորապես, նկատի ունենալով Հավելված 4.-ում բերված բռնության նշանները։

1.14 Երեխաների պաշտպանության հանձնաժողովում ներգրավված մասնագետները պարտավորվում են նիստ գումարել բոլոր այն դեպքերում, երբ երեխայի նկատմամբ բռնության կիրառման վերաբերյալ կասկած կամ ռիսկ կա։ Ինչպես նաեւ, եթե դեպքի առնչությամբ ծագել են նոր փաստեր, որոնք լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացման կամ աշխատանքային պլանի փոփոխման անհրաժեշտություն են առաջացրել։

1.15 Կազմակերպությունը պարտավորվում է համագործակցել ԵՊ հարցերով պետական պատասխանատու պաշտոնական կառույցների հետ (ԸԿԵԻՊԲ, Ոստիկանություն, ԽՀՀ, ՍԱՏԲ/Գ) այդ թվում բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել, ապահովել դեպքի մշտադիտարկումը, մասնակցել եւ հրավիրել քննարկումներ եւ այլն)։

1.16 Կազմակերպությունը երաշխավորում է ապահովել երեխայի դեպքի մշտադիտարկումը՝ երեխայի իր շահառուն լինելու ողջ ընթացքում։

1.17 Կազմակերպությունը երաշխավորում է, որ կարձագանքի բռնության բոլոր դեպքերին եւ ընտրողական մոտեցում չի ցուցաբերի դրանց նկատմամբ։

1.18 Բռնության կասկածի վերաբերյալ իրականացվող հետաքննության գործընթացում ներգրավված բոլոր մասնագետները պարտավորվում են պահպանել դեպքի քննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիությունը։ Արգելվում է բռնության ենթարկված երեխայի եւ հանցագործության այլ ասպեկտների վերաբերյալ մանրամասների/ տեղեկատվության հրապարակումը առանց բռնության ենթարկված երեխայի եւ նրա ծնողների/խնամակալների համաձայնության (իսկ հրապարակման դեպքում պետք է անպայմանորեն պահպանվեն՝ երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը մեդիա նյութերում ներկայացնելու կանոնները[26])։

1.19 «Հայկական Կարիտաս»-ը պատշաճորեն պահպանելով երեխաների պաշտպանության վտանգ պարունակող միջադեպերում ներգրաված անձանց տվյալների եւ դեպքին վերաբերվող տեղեկատվության գաղտնիությունը, կարող է հրապարակել միջադեպերի մասին ընդհանուր տեղեկություններ՝ նպատակ ունենալով օժանդակել դրանցից դասեր քաղելուն, հետագա միջադեպերի կանխարգելմանը՝ համաձայն տեղական օրենսդրությամբ սահմանված պահանջներին։ «Հայկական Կարիտաս»-ը կարող է դեպքերի մասին տեղեկություններն օգտագործել նաեւ ուսուցողական նպատակներով, մասնավորապես, վերապատրաստումների ընթացքում։ Միեւնույն ժամանակ, տրամադրվող տեղեկատվությունն այնպիսին պետք է լինի, որպեսզի բացառվի այն կոնկրետ անձի հետ նույնականացնելու հնարավորությունը։

1.20 Կազմակերպության բոլոր աշխատակիցները եւ կամավորները բռնության վերաբերյալ կասկածի առկայության պարագայում պետք է գործեն համաձայն սույն փաստաթղթում

[26] Ավելի մանրամասն տե՛ս «Արտաքին եւ ներքին հաղորդակցության ապահովում» բաժնում։

ամրագրված դրույթների։ Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ու կամավորները պետք է գործեն պահպանելով երեխայի լավագույն շահի սկզբունքը՝ անկախ սեփական նախապաշարմունքներից եւ համոզմունքներից։

2. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1 Կազմակերպությունից դուրս գտնվող անձանց (դոնորներ, լրատվական միջոցներ, սոցիալական ցանցեր, այլ ՀԿ-ներ) մուտքը կազմակերպություն եւ հաղորդակցության կազմակերպումը.

2.1.1 Ծառայության շահառու երեխայի պատմությունը, լուսանկարների թղթապանակները պահպանվում են փակ եւ անվտանգ վայրերում, որոնց հասանելիություն ունեն միայն սահմանափակ թվով անձինք։

2.1.2 Հովանավորների կապը երեխայի հետ մշտադիտարկվում է բացառելու անընդունելի առաջարկություն պարունակող մեկնաբանությունների, առաջարկությունների դեպքերը։ Նման դեպքերի բացահայտման պարագայում, կազմակերպությունը ունի հովանավորչությունից հրաժարվելու, փոխհարաբերությունները խզելու իրավունք։

2.1.3 Կազմակերպության հովանավորներին պետք է խորհրդատվություն տրամադրվի առ այն, որ կազմակերպության քաղաքականությունն արգելում է առանց տեղեկացնելու շահառուներին տունայցեր կատարելը։

2.1.4 Կազմակերպության ծրագրերում ներգրավված շահառուները տեղեկացված են տունայցերի իրականացման վերաբերյալ կազմակերպության ընթացակարգերին։ Նրանց խրախուսվում է անմիջապես զեկուցել կազմակերպության անձնակազմի անդամի, կամավորի կամ հովանավորի կողմից ցանկացած այցի մասին, որի ընթացքում ընտանիքին որեւէ տիպի առաջարկություն է արվել։

2.1.5 Հովանավորվող երեխաներին կատարվող այցերը պետք է ուղեկցվեն կազմակերպության համապատասխան սոցիալական աշխատողի կողմից։ Նախընտրելի է հանդիպումը կազմակերպել կազմակերպության գրասենյակի տարածքում։

2.1.6 Յուրաքանչյուր հովանավոր պետք է համաձայնագիր ստորագրի[27], որ ծանոթ է եւ ամբողջությամբ հասկացել է երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականության դրույթները։

2.1.7 Ծառայություններում հյուրերի շրջայցերը պետք է ուղեկցվեն կազմակերպության/ծառայության աշխատակիցների կողմից, հնարավորինս բացառելով կազմակերպության շահառուներին և այցելուներին միասին մենակ թողնելու հնարավորությունը։

2.1.8 Անձնակազմը պետք է զգուշությամբ տեղեկատվություն տրամադրի շահառուների մասին, խուսափելով այնպիսի տեղեկատվության տրամադրումից, որը նույնականացնում է հովանավորյալ ընտանիքներին կամ երեխաներին, հասանելի դարձնելով նրանց լայն հանրությանը։ Ընդ որում, շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը չի կարող տրամադրվել այլ անձանց առանց ընտանիքի, անհրաժեշտության դեպքում նաեւ երեխայի համաձայնության (գրավոր կամ բանավոր)։

2.2 Երեխայի վերաբերյալ տեղեկատվության տարածումը.

---

[27] *Հաճախ դա մեր մշակույթի պայմաններում կարող է թվալ էթիկայի տեսակետից անընդունելի, ցանկալի է հետեւել, որ դա տեղի ունենա բոլոր հնարավոր դեպքերում, իսկ եթե դա հնարավոր չէ՝ հովանավորների համար պատրաստել բանավոր տեքստ, որ եթե երեխան ունի հոգեկան առողջության կամ այլ խնդիրներ, հնարավոր բարդություններից խուսափելու համար կազմակերպվող հանդիպումը պետք է ուղեկցվի աշխատակցի կողմից։*

2.2.1 Երեխայի վերաբերյալ լուսաբանվող տեղեկատվությունը չպետք է պարունակի այնպիսի դրույթներ, որոնք վնասում են երեխայի արժանապատվությունը եւ խախտում իրավունքները։

2.2.2 Երեխայի հետ հարցազրույցի կամ նրա մասին հոդված գրելու պարագայում հատուկ ուշադրություն պետք է դարձվի երեխայի՝ իր մասին հաղորդվող տվյալների/տեղեկատվության գաղտնիության պահպանման իրավունքին։ Ըստ այդմ երեխայի տեսակետը պետք է լսված լինի, իսկ հրապարակվող տեղեկատվությունը պետք է այնպիսին լինի, որ պաշտպանի երեխային ցանկացած տեսակի վնասից եւ պատժից, ներառյալ դրանց ենթարկվելու ռիսկից։

2.2.3 Երեխայի պատմությունը եւ լուսանկարը պետք է ներկայացնել համապատասխան համատեքստում։ Երեխայի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ պարունակվող դրույթներում պետք է խուսափել ցանկացած տիպի պիտակավորում, կատեգորիականացում ենթադրող բառերի, արտահայտությունների օգտագործումից։

2.2.4 Այն անձինք, ովքեր լավագույնս են տեղյակ երեխայի իրավիճակին եւ կարող են գնահատել այն, պետք է հետեւեն, որպեսզի երեխայի վերաբերյալ պատրաստվող ռեպորտաժներում, հոդվածներում պահպանվեն բոլոր էթիկական չափանիշները։

2.2.5 Պետք է խուսափել այնպիսի պատմությունների կամ լուսանկարների լուսաբանումից, որոնք կարող են վտանգի/ռիսկի ենթարկել երեխային, նրա քույր-եղբայրներին կամ հասակակիցներին, եթե անգամ այնտեղ փոխված են երեխային նույնականացնող տվյալները։

2.2.6 Երաշխավորեք, որ երեխան եւ նրա խնամակալը տեղեկացված լինեն իրենց հետ անցկացվող հարցազրույցի, իրենց մասին պատրաստվող ռեպորտաժի կամ այլ մեդիանյութի նպատակի եւ դրա օգտագործման եղանակների վերաբերյալ։

2.3 Երեխայի վերաբերյալ տեղեկատվություն տարածելիս պետք է օգտագործվեն այնպիսի լուսանկարներ, որոնցում պաշտպանված է երեխայի արժանապատվությունը եւ նրանք չեն ներկայացվում որպես զոհեր։ Սա նշանակում է, որ.

- երեխայի վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է լինի չափազանցված, էմոցիոնալ եւ ոչ կառուցողական
- պետք է ներկայացված լինի երեխաների անհատականությունը՝ իրենց սեփական դիրքորոշումներով եւ պատմություններով
- պետք է չօգտագործվեն երեխաների մերկ կամ կիսամերկ վիճակում պատկերող լուսանկարներ
- պետք է հաշվի առնված լինեն որոշ երեխաների լրացուցիչ պաշտպանության կարիքները, օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր երեխաները

2.3.1 Կազմակերպության կայքերում չեն կարող օգտագործվել երեխաների սկանավորված նկարներն առանց Կազմակերպության այն ծառայության/ծրագրի պաշտոնական թույլտվության, որում ներգրավված է երեխան եւ երեխայի ծնողները/խնամակալները։ Թույլտվությունը պետք է լինի գրավոր եւ ներառված լինի երեխայի անձնական գործում՝ ծնողի հետ ծառայությունների տրամադրման վերաբերյալ ստորագրված պայմանագրին կից։

2.3.2 Կազմակերպության կայքերում կամ երեխայի վերաբերյալ տեղեկատվության փոխանցման ցանկացած աղբյուրում/միջոցում երեխայի վերաբերյալ անձնական տեղեկատվությունը պետք է այնպիսին լինի, որպեսզի հնարավոր չլինի նույնականացնել երեխայի գտնվելու վայրը, ինքնությունը:

2.4 Երեխաների վերաբերյալ հաղորդակցությունը սոցիալական ցանցերի եւ թվային տեխնոլոգիաների միջոցով, պետք է իրականացվի ելնելով հետեւյալ սկզբունքներից.

2.4.1 *Արժանապատվություն.* հաղորդակցության ցանկացած ձեւի մեջ երեխաներին պետք է վերաբերել եւ ներկայացնել արժանապատվորեն, այլ ոչ որպես անօգնական զոհերի կամ անպատշաճ, ակնարկներ պարունակող սեռականացված վարքին բնորոշ դիրքերում:

2.4.2 *Համաձայնություն.* այն երեխաները, ում մասին «Հայկական Կարիտաս»-ի աշխատողները, որպես ուղղակի սուբյեկտ, հավաքում են ֆոտո/տեսա կամ տեքստային նյութեր, պետք է դրանց վերաբերյալ տեղեկացված համաձայնություն տան: Տեղեկացված համաձայնություն նշանակում է՝ սուբյեկտն ունի ընդհանուր պատկերացում իր մասին գրվող կամ նկարահանվող նյութի նպատակի մասին եւ բանավոր կամ գրավոր կերպով (նախընտրելի է գրավոր) տալիս է իր համաձայնությունը: Ստորեւ բերված դեպքերում ծնողից, խնամակալից կամ լիազորված այլ անձից, երեխայից (կախված տարիքից) վերցվում է գրավոր համաձայնություն, եթե.

- պատրաստվող նյութի միջոցով հնարավոր է նույնականացնել երեխայի անձը
- երեխայի անձի կամ իրավիճակի գաղտնիության բացահայտումը կարող է վնաս հասցնել երեխայի անձնական կյանքին, արժանապատվությանը, անվտանգությանը կամ հեղինակությանը

2.4.3 *Կրթում.* «Հայկական Կարիտաս»-ը ակտիվորեն կրթում է երեխաներին, նրանց ծնողներին/խնամակալներին եւ հովանավորներին/դոնորներին այնպիսի հարցերում, թե, օրինակ, ինչպես կարելի է անվտանգ եւ պատշաճորեն օգտագործել սոցիալական ցանցերը եւ թվային տեխնոլոգիաները՝ միեւնույն ժամանակ խուսափելով ռիսկերից եւ դիմագրավելով սպառնալիքները:

2.5 **Հաղորդակցության ընթացքում վնասի կանխարգելում.** «Հայկական Կարիտաս»-ը կձեռնարկի հետեւյալ քայլերը, որպեսզի կանխարգելի հաղորդակցության, սոցիալական ցանցերի, թվային տեխնոլոգիաների օգտագործումից եկող վնասները (լուսանկարներ, տեսագրություններ, հոլովակներ, պատմություններ, հոդվածներ կամ այլ նյութեր).

- սոցիալական ցանցերում կամ թվային տեխնոլոգիաներում տեղադրված նյութերում պետք է խուսափել երեխայի ամբողջական անուն-ազգանունի, երեխայի գտնվելու վայրի կամ հասցեի վերաբերյալ տվյալների ներառումից
- նկարահանող սարքերում աշխարհագրական վայրը նշող պիտակի գործառույթը պետք է լինի անջատված: Այս դրույթը հանդիսանում է նաև հովանավորների այցելությունների ընթացակարգի մաս
- էլեկտրոնային փոստով երեխայի վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու դեպքում՝ էլեկտրոնային նամակների խորագրերը պետք է լինեն անվնաս, չուղղորդող, իսկ հաղորդագրությունները պետք է ընդգծվեն որպես կոնֆիդենցիալ (գաղտնի)

- առանց Կազմակերպության իմացության չի թույլատրվում ուղղակի, չօժանդակված, չհիմնավորված հաղորդակցությունը սոցիալական ցանցերում հետեւյալ կողմերի միջեւ. հովանավոր/ դոնոր/ այցելու եւ գրանցված ու չգրանցված երեխաներ, նաեւ անձնակազմի, կամավորների, «Հայկական Կարիտաս»-ի այլ ներկայացուցիչների ու գրանցված եւ չգրանցված երեխաների միջեւ: Այն դեպքում, երբ թե երեխան, թե հովանավորը ցանկանում են հաղորդակցվել սոցիալական ցանցերի միջոցով, ապա հարցաթերթիկի օգնությամբ գնահատվում է երեխայի համացանցից անվտանգ օգտվելու ըմբռնումը եւ գիտելիքները, ինչպես նաեւ, հնարավորության դեպքում, հաղորդակցության այլընտրանքային տարբերակներ են ապահովվում, որտեղ հաղորդակցությունը երկու կողմերի միջեւ կարող է տեղի ունենալ համապատասխան մասնագետի վերսկողության ներքո:

2.6 **Հաղորդակցության, սոցիալական ցանցերի եւ թվային տեխնոլոգիաների ստանդարտների խախտումների մասին զեկուցումը:** Այս ստանդարտների բոլոր խախտումները պետք է զեկուցվեն Ծրագրի համակարգողին/ղեկավարին եւ համապատասխանաբար, ԵՊ պատասխանատուին՝ կախված խախտման ազդեցությունից:

2.7 **Երեխայի մասնակցության ապահովումը.**

2.7.1 Կազմակերպությունը հանձն է առնում չափել երեխաների մասնակցության աստիճանն իրենց աշխատանքում, հաշվի առնելով «Երեխաների իրավունքների պաշտպանության» ՄԱԿ-ի կոնվենցիայի ազատ արատահայտման իրավունքը՝ հոդված 13, մտքի, դավանանքի եւ համոզմունքների ազատության իրավունք՝ հոդված 14, միավորումների եւ հավաքների ազատության իրավունքը՝ հոդված 15, երեխայի տեղեկատվության հասանելիության իրավունքը՝ հոդված 17[28]:

2.7.2 «Հայկական Կարիտաս»-ը ապահովում եւ նպաստում է երեխաների մասնակցությանն իր կողմից իրականացվող ծրագրերում եւ մատուցվող ծառայություններում: Մեծացնելով երեխաների մասնակցությունն իրենց աշխատանքում, «Հայկական Կարիտաս»-ը ձգտում է.

2.7.2.1 մեծացնել երեխաների՝ որպես հիմնական շահառուների նկատմամբ հաշվետվողականությունը

2.7.2.2 խթանել, որպեսզի երեխաների ձայնը լսված լինի իրենց համայնքներում եւ իրենց վերաբերող հարցերի շուրջ կայացվող որոշումներում

2.7.2.3 խթանել, որպեսզի երեխաների ձայնն ազդեցություն ունենա Կազմակերպության կողմից մշակվող ծրագրերի նախագծման, իրականացման եւ մշտադիտարկման վրա

2.7.2.4 երաշխավորել, որ երեխաները կարող են մեկնաբանել եւ ազդեցություն գործել Կազմակերպության ռազմավարության, սույն քաղաքականության եւ դրանց վերաբերող որոշումների կայացման վրա:

[28] Երեխաների մասնակցությանը եւ դրա չափման վերաբերող մանրամասն նյութ տե՛ս Հավելված 5:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ / ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍԸ

Սույն մասնագիտական էթիկայի կոդեքսի նպատակն է երեխաների հետ աշխատանքում ապահովել անվտանգ միջավայր եւ նվազեցնել բռնությունների դրսեւորման ցանկացած ռիսկ: «Հայկական Կարիտաս»-ն իր անձնակազմից ու կամավորներից ակնկալում է գործել համաձայն սույն մասնագիտական էթիկայի կոդեքսով սահմանված դրույթների:

3.1 «Հայկական Կարիտաս»-ի ծրագրերի աշխատակիցը, կամավորը կամ այցելուն հարգանքով է վերաբերվում երեխաներին, անկախ տարիքից, լեզվից, կրոնից, ազգային/էթնիկ պատկանելիությունից, սոցիալական ծագումից, տնտեսական դիրքից, սահմանափակ հնարավորություններից կամ այլ կարգավիճակից:

3.2 «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցը կամ կամավորը կատարում է իր պարտականությունները եւ հոգում է Կազմակերպության բարի համբավի/հեղինակության մասին: Աշխատանքը Կազմակերպությունում ընկալվում է որպես առաքելություն, իսկ աշխատակիցներն ակտիվորեն ներգրավվում են բարեգործական եւ կամավորական գործունեությունում:

3.3 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը, այցելուն կամ գործընթացում ներգրավված ցանկացած անձ հարգում է եւ պահպանում ներպետական օրենքները: Նրա վարքը բնութագրվում է ազնվությամբ, գործողությունների թափանցիկությամբ, անշահախնդրությամբ, արդարության եւ սիրո սկզբունքների պահպանման նկատմամբ հարգանքով:

3.4 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը ինքն անձամբ ներգրավված չէ սեռական շահագործման, ֆիզիկական կամ հոգեբանական սպառնալիքի կամ բռնության որեւէ դրսեւորում ենթադրող գործողություններում եւ սահմանափակում ու կանխարգելում է այն անձանց մուտքը եւ գործունեությունը Կազմակերպության շրջանակներում, ովքեր ունեն բռնություն կատարելու անցյալ կամ ներկա փորձառություն:

3.5 «Հայկական Կարիտաս»-ի անձնակազմն ու կամավորները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը խուսափելու այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են վնասել Կազմակերպությանը, նրա աշխատակիցներին, կամավորներին, շահառուներին եւ համագործակցող մյուս կողմերին:

3.6 Երեխաների ներգրավմամբ «Հայկական Կարիտաս»-ում տեղի ունեցող որեւէ միջոցառում կամ գործունեություն ենթադրում է նաեւ երեխաների ծնողների, ուսուցիչների, նրանց հետ աշխատող այլ մասնագետների ներգրավում:

3.7 Կազմակերպության աշխատակիցները տեղյակ են բոլոր այն իրավիճակներին եւ դրանց կառավարման մեխանիզմներին, որոնք բռնության ռիսկ են պարունակում:

3.8 Կազմակերպությունում երեխաների հետ աշխատանքը պլանավորվում եւ կազմակերպվում է՝ հիմք ընդունելով հնարավոր ռիսկերը նվազագույնի հասցնելու սկզբունքը:

3.9 Երեխաների հետ փոխհարաբերություններում, համատեղ գործողություններում կազմակերպության աշխատակիցը, կամավորը կամ գործընթացում ներգրավված ցանկացած անձ ապահովում են յուրաքանչյուր երեխայի անձի նկատմամբ հարգալից

մոտեցումը, խուսափում են այնպիսի վարքային դրսեւորումներից, որոնք կարող են մեկնաբանությունների տեղիք տալ կամ ուշադրություն գրավել։

3.10 Կազմակերպության աշխատակիցները երեխաների հետ աշխատանքում կիրառում են միասնական մոտեցում, խուսափում որեւէ մեկի հանդեպ հովանավորչություն դրսեւորելուց։

3.11 Կազմակերպության աշխատակիցները երեխաների հետ հաղորդակցման ընթացքում այնպիսի արտահայտություններ են օգտագործում, որոնք չեն պիտակավորում կամ ակնարկ պարունակում երեխայի կամ նրա ծնողների ծագման, որեւէ խմբի պատկանելիության մասին։

3.12 Կազմակերպության աշխատակիցները երեխաների հետ աշխատանքում ապահովում են այնպիսի միջավայր, որտեղ երեխաներն ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետը, դիրքորոշումները եւ մտահոգությունները։ Միեւնույն ժամանակ, կազմակերպության աշխատակիցները կանխարգելում են երեխաների կողմից մեկը մյուսի նկատմամբ ծաղրական, դիտավորություն պարունակող գործողությունները եւ չարաշահումը՝ իր բոլոր դրսեւորումներով։

3.13 «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցը ուշադիր է իր արտաքին տեսքի նկատմամբ՝ կրելով պատշաճ հագուստ, դիմահարդարում եւ զարդեղեն (հղում կազմակերպության ներքին կանոնադրությանը)։

3.14 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը, ինչպես նաեւ գործընթացում ներգրավված ցանկացած անձ ներդնում է բոլոր ջանքերն այլ աշխատակիցների, կամավորների հետ համագործակցելու համար։

3.15 Կազմակերպության բոլոր աշխատակիցները հանձնառություն եւ պատասխանատվություն ունեն տեղեկացնել ԵՊ պատասխանատուին երեխաների նկատմամբ բռնության ցանկացած դրսեւորման մասին՝ խուսափելով դրանց տարմեկնաբանությունից կամ առկա փաստերը չափազանցնելուց (առանց հորիզոնական մակարդակում քննարկումներ ծավալելու)։

3.16 Կազմակերպության աշխատակիցը, կամավորը կամ այցելուն կիրառում է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի երեխաներին բռնության բոլոր ձեւերից, մարդկային արժանապատվության նվաստացումից, անձնական նպատակներով երեխային որոշակի գործողություններում ներգրավվելուց։

3.17 Կազմակերպության աշխատակիցը չպետք է որեւէ տեսակի վճար ընդունի տրամադրվող ծառայությունների դիմաց բացառությամբ, եթե այդ առնչությամբ կան պաշտոնապես սահմանված ընթացակարգեր։

3.18 Հնարավոր կոնֆլիկտների լուծումը.

3.18.1 Եթե կազմակերպության աշխատակցի մոտ շահերի կոնֆլիկտ է առաջանում, ապա դրանք լուծելիս, մասնագետը պետք է առաջնորդվի հետևյալ դրույթներով.

3.18.2 Կազմակերպության աշխատակիցը ոչ մի պարագայում չի օգտագործում կազմակերպության հնարավորությունները, աշխատանքային-ծառայողական կապերը՝ անձնական շահի հասնելու համար։

3.18.3 Ծրագրի աշխատակիցը/կամավորը լուծում է կոնֆլիկտային իրավիճակները, ելնելով քրիստոնեության սկզբունքներից, հիմնվելով կոլեկտիվի ամբողջականության եւ կազմակերպության համընդհանուր բարօրության վրա։

Արձագանքում է անարդարության եւ բարձիթողության դեպքերին, այդ մասին տեղեկացնելով իր ղեկավարությանը։

3.19 «Հայկական Կարիտաս»-ի սեփականության, գույքի ու միջոցների պաշտպանությունը.

3.19.1 Երաշխավորել, որ «Հայկական Կարիտաս»-ի գույքային ձեռքբերումները, սեփականությունը չեն թերօգտագործվում կամ պաշտպան են գողություններից, խաբեությունից կամ վնասից։ Կազմակերպությունը հոգ է տանում, որ անձնակազմի բոլոր անդամները տեղեկացված լինեն դրա պրակտիկ կիրառման վերաբերյալ։

3.19.2 Երաշխավորել, որ «Հայկական Կարիտաս»-ի ինտելեկտուալ սեփականությունը չի թերօգտագործվում, պաշտպանված է յուրացումից, իսկ անձնակազմի անդամները տեղեկացված են դրանց կիրառմանն առաջադրվող պահանջներին։ Օրինակ, կազմակերպության շրջանակներում իրականացված հետազոտությունների, դեպքերի ուսումնասիրությունների արդյունքները, դրանց վերլուծությունները չեն կարող օգտագործվել, առանց կազմակերպության համաձայնության։

3.19.3 Կազմակերպության աշխատանքում սահմանել եւ ապահովել մասնագիտական ազնվության, այդ թվում նաեւ աշխատանքի շրջանակներում ֆինանսական պատասխանատվությունից բխող հաշվետվողականության սկզբունքները։

3.20 Կազմակերպության անվտանգության նպատակով սահմանափակումներ.

3.20.1 Արգելվում է զենքի տեղափոխումը դեպի կազմակերպության սեփականության ներքո գտնվող տարածքներ (սեփական կամ վարձու) ներառյալ բնակարան, գրասենյակ, մեքենաներ եւ այլն, կամ այն տարածքները, որտեղ կազմակերպությունը միջոցառումներ է իրականացնում։

3.20.2 Արգելվում են թմրանյութերի կամ ալկոհոլային խմիչքների օգտագործումն աշխատանքային ժամերի ընթացքում[29]։

3.20.3 Արգելվում է կազմակերպության, նրա կողմից տրամադրվող ծառայությունների եւ կազմակերպվող միջոցառումների ընթացքում բռնություն քարոզող նյութերի, արգելված տեսանյութերի եւ նկարների ցուցադրությունը։ Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ նման նյութերն օգտագործվում են կազմակերպության աշխատակիցների ուսուցման նպատակով։

---

[29] Եթե նշվում է տոն, տարեդարձ, ծառայության որեւէ ամյակ եւ այլն, ապա պետք է հոգ տանել, որ ալկոհոլը լինի սիմվոլիկ, նախապես քննարկվի երեխաների հետ եւ ներկայացվի նրանց դրա գործածման նպատակահարմարությունը։

4. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր երեխա առողջ եւ առանց բռնության ենթարկվելու կյանքի իրավունք ունի. այս դրույթը կարծես համընդհանուր համաձայնության առարկա է: Այնուամենայնիվ, աշխարհում յուրաքանչյուր տարի միլիոնավոր երեխաներ դառնում են ֆիզիկական, սեռական եւ էմոցիոնալ բռնությունների զոհ, տառապում այդ եեւնույթի, շատ հաճախ, անուղղելի հետեւանքներից:

Իսկ ի՞նչ է երեխաների հանդեպ բռնությունը: 1999թ-ին Առողջության համաշխարհային կազմակերպության «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման խորհուրդի» կողմից տրված սահմանման համաձայն. «երեխաների հանդեպ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հասցնող ֆիզիկական եւ/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից եւ չարաշահելով երեխայի վստահությունը»:

Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից գործածվող սահմանումը բռնություն է համարում նպատակադրվածության փաստի պարագայում տեղի ունեցած գործողությունները: Պատահական դեպքերի հետեւանքները ինչպիսիք են ճանապարհային երթեւեկության ժամանակ դժբախտ պատահարները, այրվածքները եւ այլն, չեն համարվում բռնություն: Որոշ փորձագետներ, սակայն բռնության ենթարկված են համարում նաեւ այն երեխաներին, ովքեր պատահաբար վնասվել են ծնողների գործողությունների կամ անգործության պատճառով:

Բռնությունը սակայն պարզապես կանխամտածված եւ/կամ չկանխամտածված գործողությունների շարք չէ, այն անպայմանորեն ունի մշակութային ենթատեքստ, հետեւաբար բռնության մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետեւյալ դրույթները.

- չնայած բռնությունը տարանջատվում է այն չկանխամտածված գործողություններից, որոնք հանգեցնում են ֆիզիկական վնասի, այնուամենայնիվ, ուժի նպատակադրված կիրառումն անպայմանորեն չի ենթադրում վնասելու ցանկություն
- հանցագործը կարող է կանխամտածված կատարել որեւէ գործողություն, որն օբյեկտիվ չափանիշների տեսանկյունից համարվում է վտանգավոր առողջության համար, սակայն մշակույթի տեսանկյունից՝ «նորմալ»:

Տարբերում են բռնության հետեւյալ տեսակները՝ ֆիզիկական բռնությունը, հոգեբանական բռնությունը (ներառյալ բանավոր վիրավորանքը), անտեսումը, սեռական բռնությունը եւ շահագործումը[30]: Երեխայի դեմ ոչ մի տեսակի բռնություն ընդունելի չէ, այդ թվում՝ ծնողի կողմից ապտակը, ուսուցչի կողմից գոռգոռոցը կամ այլ երեխաների հետ կոնֆլիկտները:

Ֆիզիկական բռնությունը. լինելով բավականին տարածված երեւույթ, կարող է ամենատարբեր հետեւանքներ ունենալ երեխայի համար՝ սկսած փոքր կապտուկներից մինչեւ

[30] Բռնության տեսակներից յուրաքանչյուրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է տեքստի հաջորդ բաժիններում:

կյանքին վտանգ սպառնացող վնասվածները: Ընդ որում վտանգավորության աստիճանը ուղղակիորեն կապված է երեխայի տարիքի հետ:

Կան բազմաթիվ հասարակություններ, որտեղ խրախուսվում է երեխաներին նկատմամբ ֆիզիկական պատժի՝ որպես դաստիարակության մեթոդի կիրառումը: Պետք է սակայն հիշել, որ ֆիզիկական պատիժն ու բռնությունը նույնական չեն: Միեւնույն ժամանակ բռնության գործադրումը սկսում է հենց պատժի կիրառումից:

Այսպիսով, ֆիզիկական բռնությունը հարվածի, ցնցման, վայր գցելու, թունավորման, այրման, խեղդելու կամ այլ ձեւով երեխային ֆիզիկական վնաս պատճառելն է:

Կարելի է առանձնացնել ֆիզիկական բռնության ենթարկված երեխայի մոտ նկատվող հետեւյալ *նշանները եւ ախտանիշները.*

- վնասվածքների բուժման ժամանակ ի հայտ եկած նախկին վնասվածքների հետքեր, սպիներ
- վնասվածքի որոշակի օրինակներ, ինչպիսիք են կապտուկները, երեխային ծխախոտով վառելը եւ կոտրվածքը
- հաճախակի կրկնվող փոքր վնասվածքները՝ քերծվածքները, ճանկռվածքները (որոնց համար չկա ոչ մի տրամաբանական բացատրություն)
- բռնության մյուս նշանների առկայությունն, ինչպիսին են բարձիթողությունը, անբավարար զարգացումը եւ սեռական բռնությունը
- վնասվածքների տեղերը, որոնք հատկապես հավանական է, որ պատահական չեն, օրինակ գլխի վնասվածքը
- երեխայի հանդեպ բռնություն գործադրելու վերաբերյալ վկայությունները, հաղորդագրությունները
- ուշադրության արժանի են նաեւ այն վնասվածքները, որոնք չեն համապատասխանում երեխայի տված բացատրությունների հետ եւ այն իրավիճակները, երբ երեխային չի ուղեկցում ծնողը կամ խնամակալը կամ թվում է, թե երեխան զգուշանում, վախենում կամ խուսափում է չափահասներից

Սովորաբար որոշակի նշաններ նկատվում են նաեւ ծնողների/խնամակալների մոտ: Դրանց թվում են.

- վնասվածքներ, որոնք չեն համապատասխանում ծնողների կողմից տրված բացատրություններին (այսինքն չափից շատ են, չափից լուրջ, ոչ այն տեղում)
- անսովոր վարք ծնողի/խնամակալի կողմից, ինչպիսիք են թաքցնելը, բժշկական օգնություն ստանալը, հետաձգելը, պասիվ մասնակցությունը երեխայի օգնության գործընթացին, թշնամական կամ «տնավարի» վերաբերմունք մասնագետների նկատմամբ
- ծնող/խնամակալ, ով վնասվածքի պատճառը համարում է երկրորդական եւ հրաժարվում է քննարկել պատճառը
- անբացատրելի վնասվածք, որը նկատվել է մյուսների, ինչպես օրինակ դայակի կամ դպրոցի կողմից. բռնության, բարձիթողության կամ ընտանեկան բռնության վերաբերյալ փաստեր, արձանագրություններ

Վնասվածքների առանձնահատկությունները

Բազմակի կապտուկները կարող են բռնության նշան լինել: Կապտուկների տեղը կարող է նշանակալից լինել. գլխին, աչքերին, ականջներին եւ բերանին առկա վնասվածքները պետք է կասկածանքով դիտարկել: Վզի շրջանում կապտուկները կարող են խեղդելու նշան լինել: Արմունկից եւ ծնկից ներքեւ կապտուկներին ընդհանուր առմամբ ավելի քիչ կարեւորություն է տրվում, քան այն կապտուկներին, որոնք հայտնաբերվել են ազդրերի եւ բազկի վերեւի մասում: Դրանք (որովայնի եւ կրծքավանդակի շրջանում) հիմնականում միտում ունեն ցույց տալու ֆիզիկական բռնություն, որովայնի ներքեւի շրջանում՝ սեռական բռնություն: Հետույքի, մեջքից ներքեւ եւ ազդրերի արտաքին մասի շրջանում կապտուկները հաճախ պատժի հետ են կապված: Ազդրի ներսի եւ սեռական օրգանների շրջանում վնասվածքները սեռական բռնության նշան են:

Կոտրվածքները լուրջ վնասվածքներ են: Դրանք կարող են առաջանալ ընկնելուց եւ ծայրահեղ բռնությունից, եւ կարելի է նկատել մյուս վնասվածքների հետ զուգորդված՝ հատկապես փափուկ հյուսվածքների: Երբ վնասվածքը բռնության հետեւանք է, պատմությունը, որը տվել է ծնողը/խնամակալը, կարող է լինել անորոշ, ոչ համապատասխան կամ անիրական, կամ ծնողը դիմում է այտուցի, ֆունկցիայի խանգարման առիթով, ինչն իրականում հետեւանք է կոտրվածքների:

Այրվածքները երեխայի մոտ սովորական երեւույթ են, մեծ մասամբ շատերը հետեւանք են այնպիսի դեպքերի, որոնք տեղի են ունենում ծնողի կողմից բարձիթողության պատճառով, որոշները այնումանեայնիվ, ներառում են բռնություն: Օրինակ՝ խոր այրվածքները: Բուժման հետաձգումը կամ դրանից խուսափումը, ինչպես նաեւ վնասվածքի ժխտումը բռնության կարեւոր նշաններ են:

Թունավորում. երեխայի պատահական թունավորումը երեխայի առողջության գլխավոր պրոբլեմներից է, հատկապես 2-4 տարեկանի համար: Որքան տարօրինակ է կլինիկական պատկերը, այնքան մեծ է դիտավորյալ թունավորման հավանականությունը:

Ախտորոշում ունենալուն ուղղված հատուկ ջանքեր. իրավիճակ, որի ժամանակ ծնողը/խնամակալը՝ հատկապես մայրը, չափազանցնում կամ կեղծում է ախտանշանները կամ դիտմամբ հիվանդություն է առաջացնում երեխայի մոտ: Օրինակ, երբեմն ծնողը կարող է բժշկի նշանակումից անկախ եւ նրանից գաղտնի դեղեր տալ կամ այլ թունավոր նյութեր կամ անգամ դիտմամբ «աքցանել» երեխայի կոկորդն այնպես, որ երեխայի մոտ առաջ գա հեւոց, նոպա, անգամ կարող է մահը վրա հասնել:

Սեռական բռնություն. **Երեխաների հանդեպ սեռական բռնությունը նրանց սեռական անհանգստություն պատճառելն է չափահասների կամ այլ երեխաների կողմից («սեռական» այստեղ նկատի ունեն յուրաքանչյուր գործողություն, որն ուղեկցվում/ հանգեցնում է սեռական գրգռման՝ բռնարարի մոտ):**

Բռնությունը կարող է տատանվել սեփական անդամների ցուցադրումից մինչեւ սեռական ակտ՝ ստիպելով կամ գայթակղելով երեխային (դեռահասի) մասնակցելու սեռական գործողությանը: Այն կարող է իրականացվել մեկ կամ բազմակի բռնարարների կողմից, մեկ կամ ավելի դեպքերում եւ համակցված լինել բռնության մյուս ձեւերի հետ:

Հիմնական առանձնահատկությունները.

- բռնացողը պատասխանատվություն չի զգում
- բռնության գործադրման նպատակը սեռական բավականություն ստանալն է
- ուժի/տարիքի միջեւ տարբերությունը (նշանակում է, որ երեխան չի կարող մերժել կամ դիմադրել)
- սովորաբար «պայմանավորվածություն» կա բռնացողի եւ երեխայի միջև, որ այն պետք է մնա գաղտնիք
- սովորաբար երեխաներին դա դուր չի գալիս եւ ուզում են դադարեցնել, միեւնույն ժամանակ ֆիզիկական կապվածության եւ ուշադրության կարիքը կարող է երբեմն հանգեցնել նրանց ակնհայտ մասնակցությանը կամ պատրաստակամությանը
- գայթակղություն, ուժ կամ հարկադրանք է կիրառվում

Սովորաբար, սեռական բռնության ենթարկված երեխաների մեծամասնությունն ավելի զգույշ քայլերի զոհեր են, որը ներառում է վախի, կաշառքի կամ էմոցիոնալ մանիպուլյացիայի, գայթակղությունների կիրառումը՝ կախված երեխայի տարիքից ու սոցիալական հասունության աստիճանից:

Բռնության դրսեւորման եւ իրագործման ձեւերը. Դեպքերի մեծամասնության ժամանակ բռնացողը ծանոթ է երեխային, հաճախ ընտանիքի անդամ, սովորաբար տղամարդ է: Ընդ որում, տղաներն ավելի քիչ հավանական է, որ կտեղեկացնեն բռնության մասին, քան աղջիկները:

Երբ բռնությունը պատահում է միջուկային կամ ընդարձակ ընտանիքների ներսում, ապա այն նկարագրվում է որպես «ներընտանեկան»: Երբ այն իրագործում են այն չափահասները, ում երեխաները ծանոթ են, սակայն նրանք չեն հանդիսանում երեխայի ընտանիքի անդամ, ապա բռնությունը կոչվում է «արտաընտանեկան»:

Սեռական բռնությունը տեղի է ունենում այնպիսի իրավիճակներում, երբ բռնացողը խոցելի երեխային մոտենալու ինչ-որ հնարավորություն ունի: Այն սովորաբար գաղտնի գործողություն է. օրինակ՝ ընտանիքում երեխան կարող է վերահսկվել եւ մանիպուլյացիայի ենթարկվել իր լռության համար՝ այդպիսով անհնարին դարձնելով բացահայտումը: Ներընտանեկան բռնությունը կարող է լինել հարաբերությունների այնպիսի ձեւը, երբ սերունդների միջեւ նորմալ սահմաններ պարզապես գոյություն չունեն:

Երբեմն ներընտանեկան եւ արտաընտանեկան բռնությունը համատեղվում է. եթե մեկը առկա է, մյուսը նույնպես կարող է դիտարկվել: Բռնացողը դիտավորյալ թիրախ է ընտրում այն ընտանիքներին, որտեղ նրա կարծիքով բռնությունը չի բացահայտվի: Արտաընտանեկան բռնության ժամանակ չափահասը (որին երեխան սովորաբար ճանաչում է) ձեւավորում է որոշակի հարաբերություն երեխայի հետ, որպեսզի գայթակղի նրան: Երբեմն ի հատուցում, երեխան կարող է ստանալ ուշադրության նշաններ՝ գումար, նվերներ եւ այլն, այդ թվում տարբեր արկածների հնարավորություն՝ տուն չգնալ, զվարճանալ տարբեր ակումբներում, նոր ծանոթություններ, մոդայիկ հագուստ եւ այլն:

Ֆիզիկական ցուցիչներ. Երեխաների հանդեպ սեռական բռնության ֆիզիկական ցուցիչները շատ կարեւոր են, քանի որ դրանք կարող են լինել փոքրիկ մանուկների (որոնք ունակ չեն հաղորդակցման) կամ ընդհանրապես երեխաների նկատմամբ, բռնության միակ նշանները: Այդպիսի նշանները կարող են օգնել բացահայտել ողջ պատմությունը:

Այնուամենայնիվ, շատ երեխաներ, ում սեռական բռնության են ենթարկել, կարող են ոչ մի ֆիզիկական նշան չունենալ:

Վնասվածքները եւ վարակը կարող են լինել երեխայի սեռական օրգանների կամ բերանի հետ ֆիզիկական միջամտության հետեւանք: Վնասվածքի գլխավոր ախտանշաններն են ցավը, վերքը, այտուցը, արյունահոսությունը: Վարակի ախտանշանները ներառում են հեշտոցային վնասվածք եւ բորբոքվածություն: Հղիությունը, սեռական ճանապարհով փոխանցվող որոշ հիվանդությունները եւ սպերմայի (սերմնահեղուկի) առկայությունը հեշտոցի կամ ուղիղ աղիքի մեջ նույնպես նշաններ են:

Վարքային ցուցիչներ. Երեխաները, ովքեր սեռական բռնության են ենթարկվում, հաճախ «վարժեցրած են» այնպես, որ կարծես խրախուսում կամ առաջ են բերում սեռական արձագանք բռնարարի մեջ: Սակայն այս վարքային նշանն ավելի շուտ բռնության հետեւանք է քան դրա պատճառ:

Որոշ ժամանակ բռնությունների ենթարկվելուց հետո երեխաների մոտ կարող են նկատվել հետեւյալ առանձնահատկությունները.

- գաղտնապահություն, ինչը փաստորեն, ապահովում է երեխայի եւ բռնարարի միջեւ համագործակցությունը
- անօգնականություն. գրեթե բոլոր դեպքերում երեխաներն ինքնուրույնաբար ունակ չեն դադարեցնելու բռնությունը
- ինքնամեղադրանք. երեխաներն իրենց են համարում պատասխանատու տեղի ունեցածի համար
- հետաձգել բացահայտումը. շատ երեխաներ երբեք չեն պատմում կամ էլ պատմում են միայն այն ժամանակ, երբ բռնությունն ինչ-որ պատճառով դադարում է
- հրաժարում. հաճախ նման իրավիճակ հանդիպում է այն դեպքերում, երբ երեխան մտածում է, որ հանկարծ իր արարքով չնպաստի ընտանիքի քայքայմանը կամ պիտակավորմանը

Երբեմն լուրջ սեռական բռնության ենթարկված որոշ երեխաներ արտաքուստ ոչ մի նշան կամ ախտանշան չեն ցուցաբերում: Որոշները ցուցաբերում են խանգարված վարքագիծ, ինչպիսին է՝ ոգելից խմիչքի օգտագործումը, փնթիությունը, ինքն իրեն վնաս հասցնելը, փախուստը, ինչպես նաեւ էմոցիոնալ պրոբլեմներ, ինչպիսիք են՝ անհանգստությունը, դեպրեսիան, մեկուսացումը: Նրանք կարող են ունենալ դժվարություններ դպրոցում: Հարաբերությունները մյուս չափահասների հետ եւ նրանց հասակակիցների հետ հավանական է, որ կլինեն խանգարված, որը կարող է արտահայտվել սեռականացված վարքագծով ե՛ւ չափահասների, ե՛ւ մյուս երեխաների նկատմամբ:

Բարձիթողությունը/անտեսումը երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձեւն է: Այն կարելի է բնորոշել որպես բռնության գաղտնի ձեւ, որը երեխայի վրա ազդում է զանազան եղանակներով՝ ներառյալ աճի եւ զարգացման խանգարումը, առողջության վատթարացումը եւ այլն: Բարձիթողությունը/անտեսումը ներառում է նաեւ էմոցիոնալ դեպրիվացիան, ինչպես նաեւ կարող է պարունակել ֆիզիկական եւ սեռական բռնության ռիսկ: Շատ դեպքերում սա նպաստող գործոն է երեխաների մահացության տեսանկյունից, եւ որոշ դեպքերում դա կարող է լինել ուղղակի պատճառը:

Բարձիթողությունը երեխայի ֆիզիկական եւ հոգեկան կարիքները բավարարելու շարունակական եւ տեւական անտեսումն է, որն ուղեկցվում է երեխայի առողջության եւ զարգացման լուրջ վնասներով:

Բարձիթողություն ենք կարող համարել այն դեպքերը, երբ ծնողը/խնամակալը ձախողում է՝

ա) ապահովել համապատասխան սնունդ, ապաստան եւ հագուստ
բ) ձախողում է պաշտպանել երեխային ֆիզիկական վնասից եւ վտանգից
գ) ապահովել բժշկական խնամք եւ բուժում
դ) երեխայի էմոցիոնալ կարիքների բավարարումը

Բարձիթողությունը ուղղակիորեն կապվում է ընտանիքի/երեխայի աղքատ լինելու փաստի հետ: Սակայն սա չի նշանակում, որ բոլոր աղքատ ընտանիքներում երեխաներն անտեսման զոհ են դառնում: Բարձիթողությունը նաեւ բնորոշվում է ծնողական խնամքի բացթողումների, արարքների միջոցով: Երբեմն այն հայտնի է որպես «պասիվ բռնություն», անկարողություն ապահովելու կամ արձագանքելու աճող երեխայի փոփոխվող կարիքներին:

Հազվադեպ է պատահում, որ բարձիթողությունն արտահայտվի մեկ եզակի դեպքի միջոցով, սովորաբար այն քրոնիկ բնույթ է կրում: Ընդ որում դրա դրսեւորումները կարելի է դիտարկել միջսերնդային կտրվածքով: Շատ ծնողներ, ովքեր բարձիթողության են մատնում իրենց երեխաներին, հնարավոր է, որ զգում են հմտությունների, ռեսուրսների եւ մոտիվացիայի պակաս՝ լավ ծնող լինելու համար: Բարձիթողության ենթարկված երեխաները մեծանում են սահմանափակ հմտություններով եւ ունակություններով չափահասների կողքին՝ իրենց հերթին դառնալով ապագա անտարբեր ծնող:

Բարձիթողության հետեւանքները փոփոխվում են՝ կախված երեխայի տարիքից:

	Ֆիզիկական	*Զարգացման*	*Վարքային*
0-2 տարեկան	✓ խանգարումներ զարգացման մեջ ✓ ընթացիկ եւ տեւական փոքր վարակներ ✓ հաճախակի դժբախտ պատահարներ ✓ հաճախակի այցելություններ բժշկին ✓ հաճախակի շտապօգնության կարիք (հոսպիտալացում/ հիվանդանոց)	✓զարգացման որեւէ փուլի ուշացում, օրինակ, խոսքի հմտություններ ✓ոչ մի կամ շատ փոքր առաջընթաց՝ առողջության պահպանման տեսանկյունից, /իմունային համակարգի եւ զարգացման հանկարծակի կասեցում/դադարում/	✓ կապվածության խանգարում ✓ տագնապալի վարք ✓ խուսափում, ✓ սոցիալական արձագանքի պակաս ✓ ինքնախրախուսական վարքագիծ
2-5 տարեկան	✓ խանգարումներ զարգացման մեջ ✓ հիգիենայի անբավարար պայմաններ, ✓ հաճախակի դժբախտ պատահարներ	✓ խոսքի եւ լեզվի դանդաղում/հապաղում ✓սոցիալ-էմոցիոնալ թերհասունություն	✓ գերակտիվություն ✓ ագրեսիվություն եւ իմպուլսիվ ✓ խտրականություն չդնող, օտարների հետ անկանոն ֆիզիկական կապերի փնտրում

5-16 տարեկան	✓ կարճ հասակ ✓ անկայուն քաշ ✓ հիգիենայի ոչ բավարար պայմաններ ✓ առողջական անկայուն վիճակ ✓ փնթի արտաքին տեսք ✓ չափից շատ հյուծվածություն կամ գիրություն	✓ ուսուցման դժվարություններ ✓ ցածր ինքնագնահատական ✓ դիմադրողական աղքատիկ մեխանիզմներ ✓ սոցիալ-էմոցիոնալ անհասունություն ✓ վատ կենտրոնացում	✓ կոնֆլիկտային կամ քիչ հարաբերություններ ✓ ինքնախրախուսական կամ ինքն իրեն վնասող վարքագիծ ✓ ոգելից խմիչքի օգտագործում ✓ շեղվող, ագրեսիվ, քայքայիչ եւ մեկուսացնող վարք ✓ դպրոցի բացթողումները հաճախելիություն ✓ օրինախախտումներ

Հուզական/էմոցիոնալ բռնությունը հավանաբար կարելի է համարել բռնության ամենադժվար սահմանվող եւ դժվար բացահայտվող տեսակը: Այն կարող է հանդես գալ ֆիզիկական բռնության հետ միասին, կամ առանձին:

Երեխայի հանդեպ հուզական բռնության լուրջ հետեւանքը (որը շատ երկար է մնում երեխայի մոտ) էմոցիոնալ ցավն է, որը խանգարում է երեխային դառնալ լիարժեք չափահաս: Պատճառը կարող է պայմանավորված լինել բռնություններով, որոնց ենթարկվել են ծնողներն իրենց մանկության տարիներին:

Երեխաները հաճախ ավելի լավ են կարողանում հաղթահարել այն իրավիճակները, որոնք կապված են կանխատեսելի բռնության հետ: Որոշ երեխաներ նույնիսկ հասկանում են բռնության առաջացման պատճառները եւ պարզապես խուսափում են ծնողների հետ շփումից, բայց, եթե ծնողները կամ խնամողները հանդիսանում են երեխայի միակ մտերիմ անձը եւ միաժամանակ ցավ են պատճառում նրան, ապա վերջինիս մոտ կարող են առաջանալ էմոցիոնալ խանգարումներ:

Ծնողների աջակցությունը եւ գովեստը երեխայի էմոցիոնալ զարգացման տեսանկյունից շատ են կարեւորվում: Այն երեխաները, որոնց միշտ նվաստացնում են եւ վիրավորում, կարող են էմոցիոնալ զարգացում չապրել: Ծնողների անտարբերությունը կարող է ավելի մեծ վնաս հասցնել երեխային, քան մշտական նվաստացումը. երեխայի մոտ կարող է առաջանալ այնպիսի զգացում, որ ինքը ոչ ոքի պետք չէ: Էմոցիոնալ բռնությունը խանգարում է երեխաներին հետագայում դառնալ հասուն մարդ եւ պատճառ դառնում վարքային խանգարումների համար: Պետք է նշել, որ հաճախ դժվար է հստակորեն սահմանել այն հիմնախնդիրը, որը ենթադրաբար առաջացել է էմոցիոնալ բռնության հետեւանքով:

Էմոցիոնալ բռնության բնութագրիչները հեշտ չէ բացահայտել: Կրկնվող նեգատիվ զգացումներն, օրինակ՝ քննադատությունը, վախեցնելը կամ ծաղրանքը երեխաներին «համոզում են», որ նրանք անօգտակար են, չսիրված եւ անցանկալի: Էմոցիոնալ բռնացող վարքի դրսեւորման ձեւեր են՝

- ✓ մերժումը՝ երեխայի չկարեւորելը եւ նրա կարիքները կարեւոր չհամարելը
- ✓ մեկուսացումը՝ երեխային մեկուսացնելը նորմալ սոցիալական փորձից եւ հասակակիցների կամ մեծահասակների հետ շփումից
- ✓ ահաբեկումը՝ երեխային բանավոր վախեցնելը, վախի եւ սարսափի մթնոլորտ ստեղծելը
- ✓ անտեսումը՝ երեխային զրկելը անհրաժեշտ ստիմուլներից եւ էմոցիոնալ «սառեցումը»
- ✓ «փչացնելը»՝ երեխային «հակասոցիալականացնելը», դեստրուկտիվ եւ հակասոցիալական վարքի քաջալերումը

Կախված տարիքից՝ էմոցիոնալ (հուզական) բռնությունը տարբեր կերպ է ազդում երեխայի զարգացման վրա:

0-1	**Քնելու/սնվելու խնդիրներ, նյարդայնություն, ապատիկ, անհանգիստ կամ խուսափողական կապ հիմնական խնամակալի հետ, քաշի աճի կանգ**
1-3	Վերոնշյալին գումարած անտարբերություն, վախ եւ անհանգստություն, ագրեսիվություն, խաղալու ցանկության բացակայություն, ուշացած խոսք
3-6	Վերոնշյալին գումարած հասակակիցների հետ հարաբերություններում դժվարություններ, անուշադրություն, դպրոցում ցածր առաջադիմություն, վատ սոցիալական հմտություններ
6-12	Վերոնշյալին գումարած զարգացող իրավախախտ վարք, փախուստներ, գողություն, ահաբեկչություն
12 եւ ավելին	Վերոնշյալին գումարած դեպրեսիա, ագրեսիա, անհանգստություն, ինքն իրեն վնասելու միտում, հոգեսոմատիկ հիվանդություն, դեղերի չարաշահում, հակահիրավական գործողություններ, անկայուն սեռական կապեր

Բռնության մասին վկայող ցուցիչները եւ դրանց մեկնաբանությունները.

Հետեւյալ էմոցիոնալ եւ վարքային հատկանիշների բացահայտումը մասնագետին թույլ է տալիս ենթադրել, որ երեխան ենթարկվել է բռնության: Դրանք են.

- այն երեխաները, որոնց պահանջմունքները չեն բավարարվում, հետ են մնում զարգացմամբ
- լքված երեխաները, նրանք լռակյաց են, շրջապատի հանդեպ հետաքրքրություն չեն ցուցաբերում
- նրանք չեն ցանկանում փոխհարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ
- լքված երեխաները կարող են սոված եւ հոգնած տեսք ունենալ, նրանք փորձում են սնունդ ձեռք բերել գողության, ողորմության միջոցով
- այսպիսի երեխաները ի վիճակի չեն վերահսկել իրենց վարքը

Կապտուկներ (ենթամաշկային հեմատոմաներ). Սրանք բռնության հիմնական ամենաակնհայտ հետեւանքներն են: Չնայած կապտուկների ապաքինման համար սովորաբար բժշկական միջամտություն անհրաժեշտ չէ, այնուամենայնիվ, դրանք կարող են շատ վտանգավոր լինել հատկապես մարմնի որոշ հատվածներում: Երբ կապտուկները գտնվում են կրծքավանդակի վրա, հնարավոր է, որ ներքին օրգանները վնասված լինեն: Կապտուկներ կարող են առաջանալ նաեւ կոտրվածքներից: Գլխի, վզի, փորի եւ սեռական օրգանների վրա առաջացած կապտուկները հաճախ խոսում են շատ ավելի լուրջ խնդրի առկայության մասին: Կապտուկների որոշակի տեսակներ վկայում են երեխայի հանդեպ կիրառված բռնության մասին.

- հետույքի վրայի կապտուկները հիմնականում խոսում են պատժի համար կիրառված բռնության մասին
- մարմնի փափուկ մասերում գտնվող կապտուկները, օրինակ՝ այտերի, ականջի ծայրի, վերեւի շրթունքի, արմունկների փափուկ հատվածի, ծոծրակի եւ մարմնի ավելի պաշտպան մասերի, օրինակ՝ հետույքի, փորի կամ սեռական օրգանների վնասվածքները հիմնականում առաջանում են բռնության հետեւանքով
- սեռական օրգանների վնասվածքները երբեք պատահական չեն առաջանում. սեռական օրգանների վրա հայտնաբերված կապտուկները կարող են առաջանալ այն դեպքում, երբ երեխաները ունեն զուգարանի հետ կապված խնդիրներ, իսկ ծնողները դրա համար պատժում են նրանց: Բացի այդ, կապտուկների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ սեռական բռնությունը, որի դեպքում պետք է շտապ դիմել բժշկի
- այտերի կամ ականջի կապտուկները կարող են առաջանալ ապտակի հետեւանքով, իսկ մատնահետքերը դեմքի վրա համարվում է ծանր վնասվածք, քանի որ դեմքին կամ գլխին հարվածը կարող է հանգեցնել ուղեղի ծանր վնասվածքների
- երեխաների շրթունքների վնասվածքները կարող են առաջանալ ստիպողաբար կերակրելու կամ լացող երեխային լռեցնելու արդյունքում, ընդ որում այս վնասվածքները չեն կարող առաջանալ երեխայի մեղքով այնքան ժամանակ, քանի դեռ նա չի կարողանում քայլել
- ծոծրակի հատվածում կապտուկները սովորաբար պատահական չեն առաջանում, բայց այս դեպքում կասկած կա, որ բռնություն է կիրառվել երեխայի նկատմամբ
- ատամնահետքերը եւս կարող են հուշել բռնության մասին, սակայն հստակորեն դա կարող է որոշել ատամնաբույժը՝ պարզելով արդյո՞ք դա երեխայի, թ՞ե մեծահասակի ատամնահետքեր են:

Գոյություն ունեն կապտուկների տարբեր տեսակներ մարմնի տարբեր մասերում, սակայն դեպքի հետ աշխատողի գլխավոր խնդիրն է կարողանալ տարբերակել պատահական եւ բռնության հետեւանքով առաջացած վնասվածքները: Ուստի, նախ կարեւոր է տարբերակել այն կապտուկները, որոնք սովորաբար պատահական են առաջանում: Դրանք են.

- պատահական կապտուկների հիմնական տեղերը մարմնի ոսկրային մասերն են, օրինակ՝ ծնկները, արմունկները, կզակը, ճակատը եւ այլն, սակայն ամենից հաճախ հանդիպում են ծնկներինը եւ արմունկներինը, իսկ ճակատի կապտուկները հաճախ առաջանում են շատ փոքր տարիքի երեխաների մոտ, ովքեր նոր են սկսում քայլել, ուստի հաճախ ընկնում են (այս կապտուկները ունեն շրջանի ձեւ)
- մի քանի ամսական հասակում երեխաները շատ հաճախ ճանկռում են իրենց քիթը, այտերը, աչքերը եւ ականջները, ինչը հիմնականում երկար եղունգների արդյունք է, եւ եթե ծնողները կանոնավոր կերպով կտրում են իրենց փոքրիկների եղունգները, այդպիսի խնդիրներ չեն առաջանում
- երբեմն կապտուկներն առաջանում են արյան հետ կապված հիվանդությունների պատճառով, ինչը հնարավոր է ախտորոշել արյան հետազոտությունների միջոցով

Այրվածքներ. Ֆիզիկական բռնությունների մոտավորապես տաս տոկոսը կազմում են այրվածքները: Գոյություն ունեն այրվածք ստանալու տարբեր եղանակներ ու պատճառներ: Դրանք են.

- ամենատարածված ձեւերից մեկը ծխախոտի այրվածքներն են, որոնք ունեն հաստատուն չափեր եւ շրջանաձեւ են, լինում են մակերեսային եւ խորը՝ կախված նրանից, թե որքան ժամանակ է ծխախոտը մնացել մաշկի վրա
- երեխային ստիպողաբար տաք իրերի առջեւ պահելուց առաջացած այրվածքներ, օրինակ, արդուկի, տաք ցանցի կամ ջեռոցի, որոնք թողնում են տիպիկ եւ ճանաչելի

հետքեր (օրինակ՝ երեխան, ով պատահաբար ընկնում է տաք առարկայի վրա, բնականաբար երկար ժամանակ չի մնա այդպիսի դիրքում, մինչդեռ կանխամտածված այրվածք հասցնելու դեպքում այն լուրջ է եւ խորը)

- երեխային նախապես տաքացված առարկայով հարվածելուց հետո առաջացած այրվածքներ, որոնց հետքն ունի այդ առարկայի տեսքը (օրինակ՝ դանակ, բանալի, արդուկ)
- տաք ջրից ստացած այրվածքներ (օրինակ՝ երեխային կարող են ստիպողաբար մտցնել տաք ջրի մեջ՝ մոտեցնելով ծնկները փորին եւ ստիպել երկար ժամանակ այդպես մնալ)
- երեխայի ոտքերի այրվածքներն անվանում են «գուլպայի այրվածք», քանի որ այն նման է գուլպայի, իսկ ձեռքերի այրվածքը՝ «ձեռնոցային այրվածք»:

Դեպքի հետ աշխատող սոցիալական աշխատողի ամենագլխավոր նպատակն է տարբերակել պատահական եւ բռնության հետեւանքով առաջացած այրվածքները եւ անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի օգնությանը:

Սովորաբար երեք կարգի այրվածքներ են առանձնացնում.

I կարգի այրվածքներ՝ մաշկը սովորաբար կարմրած եւ ուռած է: Եթե այրվածքը մարմնի ամուր հատվածի վրա է, ապա բժշկական շտապ միջամտություն հարկավոր չէ: Շատ արեւայրուքներ համարվում են I կարգի այրվածքներ:

II կարգի այրվածքներ՝ բնորոշ է վերնամաշկի շերտազատումը եւ բշտիկների առաջացումը: Եթե այրված մակերեսն այնքան էլ մեծ չէ, եւ այրվածքը չի գտնվում ձեռքերի, ոտքերի, դեմքի, հետույքի կամ մեջքի շրջանում, ապա այն չի պահանջում շտապ բժշկական միջամտություն:

III կարգի այրվածքներ՝ բուն մաշկի այրվածքն է, որը կարող է լինել մակերեսային եւ խորանիստ: Խորանիստ այրվածքների դեպքում, մաշկը դառնում է սեւ կամ չոր ու սպիտակ, կարող է զգացվել անտանելի ցավ, սակայն եթե նյարդը վնասված է, ապա կարող է ընդհանրապես չցավել:

Գլխի վնասվածքներ. Գլխի վնասվածքները, հատկապես փոքր երեխաների մոտ, կարող են առաջացնել ուղեղի վնասվածքներ: Բռնության որոշակի ձեւերի արդյունքում առաջանում են գլխի լուրջ վնասվածքներ:

- Երեխաների հանդեպ բռնության արդյունք է արյան կուտակումը՝ հեմատոման, գլխուղեղում, ինչը շատ վատ հետեւանքներ է թողնում երեխաների վրա: Դա կարող է առաջանալ գլխին ուժեղ հարվածից եւ կարող է պատճառ դառնալ լուրջ վնասվածքի: Այդպիսի վնասվածք ունեցող երեխաների 1/4 -ը մահանում են, իսկ ողջ մնացածների մեծամասնությունը ունենում են մտավոր հետամնացություն, կուրություն եւ այլն:
- Գլխի ոչ բոլոր հեմատոմաներն են առաջանում ուժեղ հարվածից: Այդպիսի կապտուկներ ունեցող երեխաների կեսը չունեն գանգի վնասվածքներ կամ տեսանելի վերքեր: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատ անբացատրելի հեմատոմաներ առաջանում են երեխային դաժանորեն թափահարելուց: Այսպիսի դեպքեր շատ են պատահում մեկ տարեկան երեխաների մոտ, որոնց շատ ուժեղ թափահարում են, որպեսզի քնացնեն: Գլխի հեմատոմաներն ինքնաբերաբար համարյա երբեք չեն առաջանում եւ վկայում են երեխայի հանդեպ կիրառված դաժան բռնության մասին:
- Երեխան կարող է ունենալ գանգի կոտրվածքներ կամ ուղեղի տրավմա, եթե նրան ուժեղ հրել են, եւ նրա գլուխը դիպել է պատին կամ դռանը:

- Երեխան կարող է ճաղատանալ՝ վերջինիս մազերը ուժեղ քաշելու արդյունքում: Մազերը ուժեղ քաշելուց գլխի մաշկի տակ կարող է առաջանալ արյունահոսություն:
- Աչքերի տակ կապտուկները եւս առաջանում են գլխին կամ աչքերի շրջակայքում ուժեղ հարվածից: Քթին պատահական հարվածից նույնպես կարող է աչքի տակը կապտել: Պետք է նաեւ նշել, որ աչքի տակի կապտուկները երկու օրից անհետանում են:

Հարկ է նշել, որ գլխի հեմատոմաները, գանգի լուրջ կոտրվածքները եւ այլ լուրջ կամ կյանքին վտանգ սպառնացող վնասվածքները չեն կարող առաջանալ երեխաների՝ մահճակալից պատահաբար վայր ընկնելուց, ուստի պետք է դիտել այդ վնասվածքները որպես բռնության արդյունք: Հետազոտելով 246 փոքրիկների, ովքեր պատահաբար վայր էին ընկել մահճակալից, պարզվել է, որ 80% - ի մոտ վնասվածքներ չկան, իսկ մյուսները ունեն միայն կապտուկներ, քերծվածքներ կամ ելունդներ: Միայն 1% - ի մոտ էին առկա գանգի վնասվածքներ: Կարեւոր է այն փաստը, որ նրանցից ոչ մեկի մոտ չկային արյան կուտակումներ գլխուղեղում կամ այլ վտանգավոր վնասվածքներ: Հայտնաբերելով գլխի վնասվածքները՝ դեպքի հետ աշխատող մասնագետը պետք է շտապ դիմի բժշկի օգնությանը:

Ներքին օրգանների վնասվածքներ. Այս տիպի վնասվածքները եւս շատ հաճախ կարող են մահացու լինել երեխաների համար, քանի որ նրանց ներքին օրգաններն այնքան էլ լավ պաշտպան չեն վաղ հասակում:

- Փորին հարվածի ժամանակ ամենից առաջ կարող են վնասվել ստամոքսը, աղիքները կամ փայծաղը: Երեխաների մոտ վնասվածք կարող է առաջանալ նաեւ մեջքին հասցված հարվածից:
- Ներքին օրգանների վնասվածքները կարող են արտահայտված լինել կապտուկներով կամ առանց որեւէ տեսանելի նշանի: Շատ դժվար է տարբերակել՝ արդյո՞ք այդ վնասվածքը բռնության արդյունք է, թե պատահական դեպքի, եթե փորի հատվածում կապտուկներ չկան: Ներքին օրգանների վնասվածքները կարելի է նկատել միայն դեպքից մի քանի օր անց եւ անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի:

Ներորովայնային վնասվածքներ. Ներորովայնային վնասվածքները բռնության ենթարկված երեխաների մահվան երկրորդ տարածված պատճառն են: Երեխաների մոտ որովայնի շրջանում տեղակայված օրգանները լավ պաշտպան չեն: Սովորաբար վերոնշյալ վնասվածքներն առաջանում են ոտքի կամ բռունցքի հարվածների արդյունքում:

- Որովայնին հասցված հարվածներից առաջացող ամենատարածված վնասվածքներն են լյարդի, փայծաղի, բարակ կամ հաստ աղիների վնասվածքները: Իսկ մեջքին ուղղված հարվածներից կարող են վնասվել երիկամները:
- Ներորովայնային վնասվածքների մեծամասնության դեպքերում որովայնի արտաքին պատին որեւէ ակնհայտ կապտուկներ կամ այլ վնասվածքներ չեն նկատվում: Քանի որ ներքին օրգանների պատահական վնասվածքները քիչ են տարածված կամ գրեթե տարածված չեն, ապա ամեն անգամ, երբ երեխայի մոտ առկա են ներքին օրգանների վնասվածքների ախտանշաններ, ապա պետք է նկատի ունենալ նրա նկատմամբ բռնության գործադրման փաստը:

Ներքին օրգանների վնասվածքների մասին կարող են վկայել փսխումը, որովայնային ցավը, հիպովոլեմիկ շոկը եւ այլ ախտանշաններ: Հիպովոլեմիկ շոկը ներքին արյունահոսության հետեւանքով արյան շրջանառության խանգարումն է: Հիպովոլեմիկ շոկի մասին կարող են վկայել արյան ճնշման անկումը, հաճախասրտությունը, մակերեսային շնչառությունը, սառը, կպչուն եւ գունատ մաշկը, սառած եւ ցրված հայացքը եւ այլն: Ներորովայնային վնասվածքները

կարող են աննկատ մնալ մի քանի օր: Դրանք բավականին լուրջ բնույթ են կրում եւ պահանջում են անհապաղ բժշկական միջամտություն:

Կոտրվածքներ. Բռնության ենթարկված երեխաների մոտ 20% - ը ունենում են ոսկրային կոտրվածքներ: Կոտրվածքի ախտորոշումը տրվում է բժշկի կողմից՝ ռենտգենյան հետազոտության միջոցով: Այնուամենայնիվ, ստորեւ բերված կոտրվածքների նկարագրությունները կօգնեն դեպքի հետ աշխատող մասնագետին տարբերակել պատահական եւ բռնության արդյունքում առաջացած կոտրվածքները: Բնական կոտրվածքները եւ բռնության արդյունքում առաջացած կոտրվածքները տարբերվում են միմյանցից:

- Բռնության ժամանակ կոտրվածքները կարող են առաջանալ կտրուկ քաշելուց, ճկելուց, ուժեղ հարվածելուց եւ այլն: Նման կոտրվածքները, անշուշտ, տարբերվում են պատահականներից:
- Կրկնվող կոտրվածքները նույն տեղում, երբ այդտեղ չկա թաքնված հիվանդություն կամ բարդ կոտրվածք տարբեր տեղերում, որոնք գտնվում են ապաքինման տարբեր փուլերում, նույնպես բռնության արդյունք կարող են լինել:
- Ոլորումները առաջանում են, երբ ոսկորի մի հատվածը ֆիքսված է, իսկ մյուս ծայրը թեքվում է: Ուստի պետք է նշել, որ այսպիսի վնասվածքները կարող են առաջանալ պատահաբար, օրինակ, երբ երեխան նոր է սկսում քայլել կամ վազել եւ ընկնում է:

Գոյություն ունեն մի շարք նշաններ, որոնց հիման վրա սոցիալական աշխատողը կարող է տարբերել պատահական կոտրվածքները կանխամտածված կոտրվածքներից: Դրանք են՝

- Օրինակ՝ բեկորային կոտրվածքն առաջանում է վերջույթները ոլորելուց կամ քաշելուց եւ չի կարող պատահականության արդյունք լինել:
- Երեխայի ոսկրերը կարող են կոտրվել ոսկրային հիվանդության դեպքում: Այս դեպքում կա տարբերություն, քանի որ ոսկորը կոտրվում է մեջտեղից եւ ընդ որում կրում է ժառանգական բնույթ:
- Հաճախ ծնողների փաստաբանը պնդում է, որ երեխան կոտրվածք է ստացել ծնվելու ժամանակ: Այդ կոտրվածքը սկսում է լավանալ 7-14 օր հետո: Սակայն այդ փաստը պետք է հաստատված լինի բժշկի կողմից:
- Ոսկրային վնասվածքներ. ստորև նկարագրվում են այն ոսկրային վնասվածքները, որոնք կարող են առաջանալ այն դեպքում, երբ երեխայի նկատմամբ բռնություն է գործադրվում:
- Գալարաձեւ կոտրվածք, որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ երեխայի վերջույթները ոլորում են:
- Բեկորային (բազմաբեկոր) կոտրվածք, երբ ոսկորը միանգամից կոտրվում է մի քանի տեղից:
- Կողոսկրի կոտրվածք, որը երեխաների մոտ հազվադեպ է հանդիպում պատահականորեն: Կողոսկրերի կոտվածքները երեխաների մոտ կարող են առաջանալ նրանց կողոսկրերի ուժգին սեղմումներից: Երեխայի նկատմամբ գործադրված բռնության մասին կասկածներ կարող են առաջացնել թիակների, անրակի եւ կրծոսկրի կոտրվածքները:
- Միեւնույն ոսկրի վրա մի քանի ոսկրային կոշտուկների առկայությունը, ինչը խոսում է տվյալ ոսկրի բազմակի կոտրվածքի մասին: Այս հանգամանքը եւս կարող է գործադրված բռնության վերաբերյալ կասկածներ հարուցել:

Հյուծվածություն. Հյուծվածությունը 50 %-ից ավելի դեպքերում հանդիսանում է թերսնման արդյունք: 20 %-ի դեպքերում այն կարող է առաջանալ սնուցման խախտումներից, իսկ մնացած 30 %- ի մոտ կարող է ունենալ օրգանական ծագում:

Երեխայի մոտ հյուծվածության ախտորոշման համար առանձնացվում են մի շարք չափանիշներ.

- Սովորաբար ծայրահեղ հյուծավածության հիմք են ընդունում են երեխայի քաշը: Ծայրահեղ հյուծվածությունը կարող է հանգեցնել երեխայի մահվան, մտավոր հետամնացության եւ այլն:
- Երեխաները, որոնք ծնողների անտարբերության եւ անուշադրության պատճառով հյուծվել են, կարող են միանգամից ավելացնել իրենց քաշն առողջարար եւ վիտամիններով հարուստ սնունդ ընդունելուց:
- Ծայրահեղ հյուծված երեխաները տարբերվում են իրենց հասակակիցներից կառուցվածքով: Եվ այդ երեխաները համապատասխան պայմաններում խնամվելով՝ կարող են առողջանալ:
- Հյուծվածություն ունեցող երեխաների կողերը հստակորեն ընդգծվում են մաշկի տակից, հետույքի եւ ազդրերի մաշկի վրա նկատվում են բազմաթիվ ծալքեր, երեխան այնպիսի տեսք ունի, կարծես նրան հագցրել են «կախ ընկած շալվար», ձեռքերն ու ոտքերը բարակ են, իսկ որովայնը կարող է մեծ եւ փքված լինել եւ այլն:

Թերսնման հետեւանքով առաջացած հյուծվածության ախտորոշման համար օգտագործվում են մի քանի չափանիշներ, որոնք ներառում են հետեւյալը.

- երեխայի քաշի եւ նրա տարիքի միջեւ առկա է որոշակի անհամապատասխանություն
- տնային պայմաններում երեխայի քաշի ավելանալու հարցում առկա են դժվարություններ
- երբ երեխային տնային պայմաններից տեղափոխեն այլ հաստատություններ, օրինակ, հիվանդանոց, նրա մոտ կարձանագրվի քաշի կտրուկ աճ
- սովորաբար երեխան մեծ ախորժակով է ուտում

Բռնության հուզական եւ վարքային բնութագրիչները. բռնության ֆիզիկական բնութագրիչները միշտ չէ, որ ակնհայտ են լինում, հետեւաբար դեպքը վարող սոցիալական աշխատողը պետք է ուշադրություն դարձնի բռնության այլ բնութագրիչներին եւս:

Սովորաբար բռնության ենթարկված երեխաներին բնորոշ են յուրահատուկ վարքագծեր, որոնք կարող են ներառել հետեւյալը.

- Երեխան կարող է լինել ներփակված, անհետաքրքրասեր, մեկուսացած: Կարող է ունակ չլինել հարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ:
- Երեխան կարող է տրտնջալ, հեծկլտալ, լաց լինել՝ առանց որեւէ ակնկալիքի:
- Բռնության ենթարկված բազմաթիվ երեխաների մոտ նկատվում է իրադարձություններին, իրավիճակներին «սառած ուշադրությամբ» հետեւելու երեւույթը: Նմանատիպ դեպքերում երեխաները հուզականորեն ներփակված եւ մեկուսացած են մնում, բայց իրականում նկատում եւ զգում են, թե ինչ է տեղի ունենում իրենց շուրջը:
- Երեխան կարող է դրսեւորել գերզգոնություն կամ խուսափել ֆիզիկական շփումից:
- Բռնության ենթարկված երեխաները կարող են տարօրինակ կերպով հարաբերվել իրենց շրջապատի հետ: Նրանց մեծ մասի մոտ կարող են նկատվել զարգացման հապաղումներ եւս:

- Երեխան կարող է ընկճված լինել, չցուցաբերել նույնիսկ չնչին հուզականություն, ցավի կամ վնասվածքի դեպքում կարող է ամենևին լաց չլինել: Բռնության ենթարկված որոշ երեխաներ նույնիսկ չեն ժպտում, չեն կարողանում խաղալ եւ այլն:

Նախադպրոցական տարիքի բռնության ենթարկված երեխաները կարող են բնութագրվել հետեւյալ հատկանիշներով.

- Նրանք կարող են լինել չափազանց ամաչկոտ եւ վախեցող. կարող են վախի նշաններ ցուցաբերել ծնողի մոտենալուց անգամ:
- Երեխայի մոտ կարող են առկա լինել դերերի խախտման, փոփոխման վաղ նշաններ:
- Կարող են նկատվել սթրեսի ֆիզիկական նշաններ՝ ներառյալ ֆիզիկական հիվանդությունները եւ ռեգրեսիվ վարքը:
- Երեխան կարող է ագրեսիվ լինել այլ երեխաների հետ հարաբերություններում, կարող է ունենալ տրամադրության հաճախակի փոփոխություններ եւ հուզական պոռթկումներ՝ չնչին պրովոկացիայի դեպքում:

Դպրոցահասակ երեխաների մոտ առկա են վերը թվարկված բնութագրիչների մի մասը: Դրանցից բացի, կարելի է առանձնացնել մի շարք բնորոշ հատկանիշներ եւս.

- Երեխան դժվարությամբ կարող է հարաբերվել այլ երեխաների եւ մեծահասակների հետ՝ ցուցաբերելով ագրեսիա, հուզական պոռթկումներ եւ այլն:
- Երեխան կարող է ցուցաբերել գերակտիվություն՝ չկարողանալով երկար ժամանակով կենտրոնանալ որեւէ կոնկրետ գործողության վրա: Զուգահեռաբար երեխայի մոտ կարող է դրսեւորվել ուշադրության պակաս: Եվ այս ամենը կբերի դպրոցում երեխայի առաջադիմության նվազմանը:

Դեռահասի մոտ մի շարք վարքային եւ հուզական խնդիրների առկայությունը կարող է խոսել այն մասին, որ նրա նկատմամբ երբեւէ գործադրվել է բռնություն: Դրանք ներառում են.

- ստելը կամ գողություն կատարելը
- կռվարարությունը, բարկացկոտ պոռթկումները, այլ մարդկանց նկատմամբ ագրեսիայի ցուցաբերումը
- ալկոհոլի կամ թմրամիջոցների չարաշահումը
- տանից փախչելը եւ հրաժարվելը ետ վերադառնալ
- միջանձնային հարաբերություններ հաստատելու դժվարությունները, հուզական եւ սոցիալական մեկուսացումը եւ դեպրեսիան

<u>Ուշադրություն:</u> *<u>Ցանկը համապարփակ չէ: Ցանկում նշված նշաններին մոտ նշանների կամ այլ (ցանկում չնշված նշանների) կասկածի պարագայում նպատակահարմար է խորհրդակցել կազմակերպության փորձառու մասնագետի հետ:</u>*

Սույն փաստաթղթին կցվում են հավելվածներ՝ 2, 3 (բացառությամբ Ձեւանմուշ 2-ից), 3,4,5,6:

Միջազգային օրենսդրություն՝

- «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագիր եւ կից արձանագրություններ[31], 20 նոյեմբերի, 1989 թ.: http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf
- «Մեռական շահագործումից եւ սեռական բռնությունից երեխային պաշտպանելու» Եվրոպայի խորհրդի հռչակագիր, Լանցարոտե, 25 հոկտեմբերի, 2007 թ.: https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e4
- «Աշխատանքային նվազագույն տարիքի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության հռչակագիր, Ժնեւ, 6 հունիսի, 1973 թ.: http://www.hamk.am/docs/138.pdf
- «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձեւերի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության N 182 հռչակագիր: http://www.irtek.am/views/act.aspx?aid=50912

Ազգային օրենսդրություն

- ՀՀ Սահմանադրություն, 6 դեկտեմբերի, 2016 թ.: http://www.parliament.am/parliament.php?id=constitution

Օրենսգրքեր եւ օրենքներ

- «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք», 5 մայիսի, 1998 թ.: http://www.arlis.am/documentview.aspx?docid=74658
- «ՀՀ Քրեական օրենսգիրք» (Առանձին գլուխ է հատկացված ընտանիքի եւ երեխաների դեմ կատարված հանցագործություններին՝ ներառյալ երեխայի դեմ բռնությունը եւ այլ դրույթներ), 18 մարտի, 2003 թ.: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349
- «ՀՀ Ընտանեկան օրենսգիրք», 9 նոյեմբերի, 2004 թ.: http://www.arlis.am/documentview.aspx?docid=66138
- «ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», 9 նոյեմբերի, 2004թ.: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 6 դետեմբերի, 1985թ.:

[31] *ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին հռչակագրին կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության եւ մանկական պոռնոգրաֆիայի մասին», «Զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին» կամընտիր արձանագրություններ:*

http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1392&lang=arm

- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 29 մայիսի, 1996 թ.: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1700
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 24 սեպտեմբերի, 2002 թ.: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1328&lang=arm
- «Կրթության մասին» ՀՀ օրենքը, 8 փետրվարի, 2011թ.: http://www.arlis.am/documentview.aspx?docid=66192
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք , 17 դեկտեմբերի, 2014թ.: http://www.arlis.am/documentview.aspx?docid=94972

ՀՀ կառավարության որոշումներ.

- 2012թ. դեկտեմբերի 27-ին՝ «ՀՀ երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. քաղաքականական ծրագիրը եւ երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. քաղաքականական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը» հաստատելու մասին, № 1694-Ն որոշում: https://www.e-gov.am/gov-decrees/item/22494/
- ՀՀ կառավարության «Խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 2 հունիսի 2016թ.- ի №-631-Ն որոշում: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=106809

Հիմնահարցերին վերաբերող այլ ընդունված օրենքներ եւ իրավական ակտեր և ռեսուրսներ

- Երեխայի հանդեպ բռնության երեւույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման Հավելված 1.: https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf
- Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագիծ http://www.mlsa.am/forum/forum.php?sec=conference&forum_id=-2&topic_id=574

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ (ՁԵՎԱՆՄՈՒՇ)

Ես՝ ներքոստորյալս, հավաստիացնում եմ, որ ծանոթացել եմ «Հայկական Կարիտաս»-ի «Երեխաների անվտանգության եւ պաշտպանության ապահովման ներքին ընթացակարգին» եւ հասկացել եմ դրանում ամրագրված դրույթները։

Ես տեղյակ եմ, որ սույն քաղաքականության դրույթների խախտման հետեւանքով կարող եմ ենթարկվել կարգապահական տույժերի եւ իրավաբանական պատասխանատվության։

Ես _____ համաձայն եմ սույն ներքին ընթացակարգերով

(անուն, ազգանուն)

ներկայացված դրույթներին եւ պարտավորվում եմ իրականացնել դրանք, պահպանելով Կազմակերպության որդեգրած արժեքներն ու գաղափարախոսությունը։

Լրացման վայրը՝ _____

Լրացման ամսաթիվը՝ _____

Լրացնող՝

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ («ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ԲԱՐԵԲԱՐՆԵՐԻ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ)

Սույնով հավաստիացնում եմ, որ կարդացել եմ եւ ամբողջությամբ հասկանում եմ «Հայկական Կարիտաս»-ի «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականությունը»: Այսպիսով ես պարտավորվում եմ ենթարկվել եւ հավատարիմ մնալ «Հայկական Կարիտաս»-ի երեխաների պաշտպանության քաղաքականությամբ սահմանված դրույթներին:

- Երեխաների հետ ֆիզիկական հաղորդակցության ընթացքում պահպանել մշակութային տեսանկյունից ընդունելի վարքագիծ, բացառել երեխայի հետ սեռական հարաբերությունները:
- Երեխաներին չզուրգուրել, չհամբուրել, չգրկել այնպես, ինչը չի համապատասխանում գործող մշակութային նորմերին եւ արժեքներին:
- Չօգտագործել այնպիսի լեզու, չանել այնպիսի առաջարկություններ կամ տալ խորհուրդներ, որոնք պատշաճ չեն, կրում են բռնության երանգ, կարող են ամոթանքի կամ ստորացման, նվաստացնող կամ նսեմացնող ազդեցություն ունենալ:
- Երեխաների հետ մասնակից չդառնալ այնպիսի վարքաձեւերում, որոնք անօրինական են, ոչ անվտանգ, ներառյալ վնասակար ավանդույթները, կրոնական կամ ծիսակարգային բռնությունը:
- Երեխաներին մի վարձեք ցանկացած տիպի աշխատանքում, մասնավորապես, «Հայկական Կարիտաս»-ի աշխատակիցները չպետք է երեխաներին վարձեն, որ նրանք աշխատեն իրենց տանը, եթե դա չի գտնվում երեխայի լավագույն շահի համատեքստում եւ չի հակասում տեղական օրենքներին եւ միջազգային չափորոշիչներին:
- Չօգտագործել ֆիզիկական կամ նյութական պատիժ երեխայի նկատմամբ, քանի դեռ երեխան գտնվում է «Հայկական Կարիտաս»-ի խնամքի ներքո:
- Երեխային առանձին չտեղափոխել Ձեր մեքենայով, եթե դա խիստ անհրաժեշտություն չէ եւ չկա երեխայի ծնողի/խնամակալի եւ ղեկավար կազմի համաձայնությունը:
- Ուշադիր լինել սեփական տեսքի, օգտագործվող լեզվի, գործողությունների եւ վարքի նկատմամբ, հարգանք ցուցաբերելով երեխաների եւ նրանց իրավունքների նկատմամբ:
- Ապահովել, որպեսզի երեխաների հետ ֆիզիկական կոնտակտը համապատասխանի տեղի միջավայրին:
- Օգտագործել դրական, ոչ բռնի մեթոդներ երեխաների վարքի կառավարման համար:
- Լինել պատասխանատու երեխայի վարքագծի, դրա նկատմամբ արձագանքին, եթե անգամ երեխան սեռականացված վարք է ցուցաբերում:
- երեխան սեռականացված վարք է ցուցաբերում:

_____	_____	_____
(ստորագրություն)	(ամսաթիվ/ամիս/տարեթիվ)	կարգավիճակ (Հայկական Կարիտասի դոնոր, հովանավոր, այցելու, կամավոր, աշխատակից)

_____ _____

(անուն, ազգանուն) (անձնագրի տվյալները)

_____

(հասցե)

(Կազմակերպության ներսում կիրառվող փաստաթուղթ է նախատեսված բռնության դեպքերի արձանագրման համար)։

Լրացվում է բռնության նշաններ նկատած եւ կասկած ունեցող մասնագետի կողմից (ցանկալի է սոցիալական աշխատողի)։

Լրացման վայրը՝ _____

Լրացման ամսաթիվը՝ _____

Տեղեկատվություն լրացնողի մասին.

Անուն- ազգանուն	
Զբաղեցրած պաշտոնը	
Կոնտակտային տեղեկատվություն	
Հասցե	
Հեռախոս	
Էլ. փոստի հասցե	
Ինչպիսի՞ աղբյուրից եք տեղեկացվել դեպքի մասին։	☐ Երեխա ☐ Ծնող/խնամակալ (նշել _____) ☐ Մասնագետ (նշել _____)

Տեղեկատվություն երեխայի մասին (եթե խոսքը մի քանի երեխայի մասին է, այդ թվում քույր-եղբայրների, ապա յուրաքանչյուրի համար պետք է առանձին թերթիկ լրացվի).

Անուն-ազգանունը	
Սեռը	☐ Արական ☐ Իգական
Տարիքը	
Բնակության հասցե	
Ծննդյան ամսաթիվ (եթե հայտնի է)	
Երեխայի նկատմամբ բռնությունը շարունակվում է	☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
Ծրագրի/կենտրոնի անվանումը	

(որի աշխատանքներում ներառված է երեխան)	
Երեխայի կապը ծրագրի հետ՝	
Երեխայի կապը պոտենցիալ բռնարարի հետ՝	
Տեղեկատվություն այն անձի մասին, ում հետ ապրում է երեխան (եթե բռնարարի հետ է ապրում՝ նշել)	
Երեխայի ներկա գտնվելու վայրը՝	
Ինչպե՞ս է տեղի ունեցել բռնությունը (նկարագրել)՝	
Արդյո՞ք երեխան հատուկ խոցելիություն ունի (կարողությունների սահմանափակման ցանկացած դրսեւորում, նշել տիպը)	
Արդյո՞ք երեխայի նկատմամբ բռնությունը շարունակական բնույթ է կրել։	
Երեխայի մոտ տրավմայի ինչպիսի՞ նշաններ են նկատվում։	
Հատուկ մշակութային/ընտանեկան գործոններ, որոնք ուշադրության են արժանի (նկարագրել)	
Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել երեխայի անվտանգության ապահովման ուղղությամբ՝	
Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել, որպեսզի երեխայի նկատմամբ բռնությունը դադարեցվի՝	
Ինչպիսի՞ միջոցներ են անհրաժեշտ երեխայի պաշտպանության ապահովման համար։	
Լրացուցիչ տեղեկատվություն (այլ)	

Տեղեկատվություն Ձեր կասկածների վերաբերյալ.

Անհանգստության/կասկածանքի տիպը (նկարագրե՛ք բռնության/դաժան վերաբերմունքի մասին վկայող նշանները, բռնության տիպը, ո՞վ է այդ մասին հայտնել եւ իրականացված գործողությունների ընթացքը)

Վայրը, որտեղ տեղի է ունեցել բռնությունը	
Բռնության միջադեպի ժամանակահատվածը	
Ամսաթիվ	
Վկաները	
Երեխայի հետ խոսակցության/ հարցազրույցի հաշվետվություն.	
Նկարագրեք հենց այն, ինչ Դուք եք ասել եւ ինչ է ասել երեխան, հնարավորության դեպքում նրա իսկ խոսքերով/բառերով (Խնդրում ենք չուղղորդել հարցազրույցը, ասել հենց այն, ինչ երեխան է ասել).	
Դիտարկման արդյունքում ստացված տեղեկատվություն (օրինակ՝ երեխայի տրավմաները, երեխայի հայացքը, վախերը)	
Նկարագրեք բռնության մեջ կասկածվողի արձագանքը մեղադրանքին՝	

Տեղեկատվություն պոտենցիալ բռնարարի մասին.

Անուն-ազգանունը	
Սեռը	☐ Արական ☐ Իգական
Տարիքը	
Ծննդյան ամսաթիվ	
Պոտենցիալ բռնարարի նկարագրությունը (հոգեբանական, սոցիալական եւ այլ հատկանիշներ)՝	
Պոտենցիալ բռնարարի կապը երեխայի հետ՝	
Պոտենցիալ բռնարարի կապը «Հայկական Կարիտաս»-ի հետ՝	
Պոտենցիալ բռնարարի կապը «Հայկական Կարիտաս»-ի կողմից իրականացվող ծրագրերի հետ՝	

Այլ տվյալներ.

Նշեք այն անձանց տվյալները ո՞ւմ տեղեկացրել եք դեպքի մասին։			
Անուն-ազգանունը	**Կազմապերպությունը**	**Պաշտոնը**	**Այլ տվյալներ (տրամադրված տեղեկատվությունը, ամսաթիվը եւ այլն)**

Հաշվետվությունը լրացնողը (անուն-ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը, լրացման ամսաթիվը)՝

_____

Ծրագրի ղեկավարը (անուն-ազգանունը, ծրագրի անվանումը, ստորագրությունը, լրացման ամսաթիվը)՝

_____

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ»
ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ
ՁԵՎԱՆՄՈՒՇ № 2

Լրացվում է ԵՊ պատասխանատուի կողմից՝ նախատեսված է երեխայի նկատմամբ բռնության դեպքի վերաբերյալ պատասխանատու մարմիններին տեղեկատվություն փոխանցելու համար:

Լրացման վայրը՝ _____

Լրացման ամսաթիվը՝ _____

ԵՊ պատասխանատուի անուն-ազգանունը		
ԵՊ պատասխանատուի հեռախոսահամարը		
Ամսաթիվը (երբ ստացվել է տեղեկատվությունը)		
Տեղեկատվությունը փոխանցողը	☐ Աշխատակիցը ☐ Երեխան ☐ Այլ (նշել) _____	
Տեղեկատվության հակիրճ նկարագրություն		
Երեխան	Երեխայի անուն-ազգանունը	
	Երեխայի բնակության հասցեն	
	Երեխայի ծննդյան ամսաթիվը	
	Երեխայի տարիքը	
	Երեխայից ստացված տեղեկատվության հակիրճ նկարագիրը:	
Երեխայի ծնողները/խնամակալները	Երեխայի ծնողի/խնամակալի հետ կապ հաստատվել է	☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
	Ծնողների անուն-ազգանունը (ում հետ կապ է հաստատվել)	
	Կապի միջոցները	☐ Զրույց կենտրոնում ☐ Տունայց

		☐ Հեռախոսազանգ ☐ Այլ (նշել _____)
	Ծնողների/խնամակալների հետ զրույցի ամփոփ ներկայացում.	
	Ծնողների/ խնամակալների հետ կապ չի հաստատվել	☐ Ծնողների/խնամակալների հետ անհնար է կապվել ☐ Ծնողները/խնամակալները հրաժարվեցին կապ հաստատել ☐ Այլ (նշել _____)
Բժշկական հետազոտություն	Բժշկական հետազոտություն է իրականացվել	☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
	Բժշկի անուն-ազգանունը, պաշտոնը	
	Բժշկի հեռախոսահամարը	
	Իրականացման ամսաթիվը	
	Հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը կցված է	☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
Հոգեբանական գնահատում	Հոգեբանական գնահատում իրականացվել է	☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
	Հոգեբանի անուն-ազգանունը, պաշտոնը	
	Հոգեբանի հեռախոսահամարը	
	Իրականացման ամսաթիվը	
	Հոգեբանի գնահատման հակիրճ նկարագրությունը՝	
Կազմակերպությունում/ կենտրոնում երեխաների պաշտպանության ապահովման ուղղությամբ կատարված քայլերի ամփոփ նկարագրություն՝		

Երեխային սպառնացող ռիսկի մակարդակի սահմանում (բռնության դեպքի վերաբերյալ քննարկման արձանագրությունը կցվում է)	Ծնողների/խնամակալների հետ հնարավոր է համագործակցել՝ ☐ Այո ☐ Ոչ (մեկնաբանել)
	Երեխայի անվտանգությանը անմիջական վտանգ է սպառնում ☐ Այո ☐ Ոչ
	Անմիջական ռիսկի հակիրճ նկարագրություն

Ուղղորդման նպատակի ձեւակերպման տարբերակներ.

Տարբերակ 1.

☐ (Նշել անհրաժեշտության դեպքում) Ես՝ ներքոնշյալս, որպես «Հայկական Կարիտաս»-ի ԵՊ պատասխանատու կցանկանայի պաշտոնապես խնդրել ԸԿԵԻՊԲ թիմին, սահմանված կարգով հետագա քայլեր ձեռնարկել երեխայի պաշտպանության մատնանշված դեպքի առնչությամբ ։

ԵՊ պատասխանատուի անուն/ազգանունը՝ _____

ԵՊ պատասխանատուի ստորագրությունը՝ _____

Ամսաթիվը՝ _____

Տարբերակ 2.

☐ Որպես «Հայկական Կարիտաս»-ի ԵՊ պատասխանատու՝ ես հանգել եմ այն եզրակացության, որ երեխան չի կարող վերադառնալ տուն, քանի որ այնտեղ չի ստանում համապատասխան խնամք եւ պաշտպանություն իր խնամակալների կողմից։ Այդ իսկ պաշտճառով երեխային հանձնել եմ ԽՀՀ/ԸԿԵԻՊԲ/Ոստիկանություն ներկայացուցիչ _____-ին, ով երեխային «Հայակական Կարիտաս»-ի _____-ից (ծրագրի/կենտրոնի անվանումը) կտեղափոխի այլընտրանքային խնամքի որեւէ այլ նպատակահարմար վայր։

ԵՊ պատասխանատուի անուն/ազգանունը՝ _____

ԵՊ պատասխանատուի ստորագրությունը՝ _____

Ամսաթիվ՝ _____

ԸԿԵԻՊԲ ներկայացուցչի անուն/ազգանունը՝ _____

ԸԿԵԻՊԲ ներկայացուցչի ստորագրությունը՝ _____

Ամսաթիվ՝ _____

ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ 3.

Քննարկման վայրը՝ _____

Քննարկման ամսաթիվը՝ _____

Դեպքի առնչությամբ կազմակերպված քննարկման հերթական համարը՝		
Երեխայի անձնական գործի համարը՝		
Տեղեկատվություն նախորդ քննարկման արդյունքում կայացված որոշումների կատարման մասին (նշել որոշումը, պատասխանատուին, կատարված լինել/չլինելը)		
Որոշումը	Պատասխանատուի անուն-ազգանունը	Կատարված է (եթե կատարված չէ, ապա մեկնաբանել)
		☐
		☐
Քննարկման հակիրճ նկարագրություն՝		
Քննարկման արդյունքում կայացված որոշումները՝		

Քննարկմանը ներկա մասնագետները՝

(նշել անուն-ազգանունը, ստորագրությունը, ամսաթիվը)

Անուն-ազգանուն	Ամսաթիվ/ամիս/ տարեթիվ	Ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր երեխա առողջ եւ առանց բռնության ենթարկվելու կյանքի իրավունք ունի. այս դրույթը կարծես համընդհանուր համաձայնության առարկա է: Այնուամենայնիվ, աշխարհում յուրաքանչյուր տարի միլիոնավոր երեխաներ դառնում են ֆիզիկական, սեռական եւ էմոցիոնալ բռնությունների զոհ, տառապում այդ եեւևույթի, շատ հաճախ, անուղղելի հետեւանքներից:

Իսկ ի՞նչ է երեխաների հանդեպ բռնությունը: 1999թ-ին Առողջության համաշխարհային կազմակերպության «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման խորհուրդի» կողմից տրված սահմանման համաձայն. «երեխաների հանդեպ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հասցնող ֆիզիկական եւ/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից եւ չարաշահելով երեխայի վստահությունը»:

Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից գործածվող սահմանումը բռնություն է համարում նպատակադրվածության փաստի պարագայում տեղի ունեցած գործողությունները: Պատահական դեպքերի հետեւանքները ինչպիսիք են ճանապարհային երթեւեկության ժամանակ դժբախտ պատահարները, այրվածքները եւ այլն, չեն համարվում բռնություն: Որոշ փորձագետներ, սակայն բռնության ենթարկված են համարում նաեւ այն երեխաներին, ովքեր պատահաբար վնասվել են ծնողների գործողությունների կամ անգործության պատճառով:

Բռնությունը սակայն պարզապես կանխամտածված եւ/կամ չկանխամտածված գործողությունների շարք չէ, այն անպայմանորեն ունի մշակութային ենթատեքստ, հետեւաբար բռնության մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետեւյալ դրույթները.

- չնայած բռնությունը տարանջատվում է այն չկանխամտածված գործողություններից, որոնք հանգեցնում են ֆիզիկական վնասի, այնուամենայնիվ, ուժի նպատակադրված կիրառումն անպայմանորեն չի ենթադրում վնասելու ցանկություն
- հանցագործը կարող է կանխամտածված կատարել որեւէ գործողություն, որն օբյեկտիվ չափանիշների տեսանկյունից համարվում է վտանգավոր առողջության համար, սակայն մշակույթի տեսանկյունից՝ «նորմալ»:

Տարբերում են բռնության հետեւյալ տեսակները՝ ֆիզիկական բռնությունը, հոգեբանական բռնությունը (ներառյալ բանավոր վիրավորանքը), անտեսումը, սեռական բռնությունը եւ շահագործումը[32]: Երեխայի դեմ ոչ մի տեսակի բռնություն ընդունելի չէ, այդ թվում՝ ծնողի կողմից ապտակը, ուսուցչի կողմից գոռգոռոցը կամ այլ երեխաների հետ կոնֆլիկտները:

Ֆիզիկական բռնությունը. լինելով բավականին տարածված երեւույթ, կարող է ամենատարբեր հետեւանքներ ունենալ երեխայի համար՝ սկսած փոքր կապտուկներից մինչեւ կյանքին վտանգ սպառնացող վնասվածները: Ընդ որում վտանգավորության աստիճանը ուղղակիորեն կապված է երեխայի տարիքի հետ:

[32] Բռնության տեսակներից յուրաքանչյուրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է տեքստի հաջորդ բաժիններում:

Կան բազմաթիվ հասարակություններ, որտեղ խրախուսվում է երեխաներին նկատմամբ ֆիզիկական պատժի՝ որպես դաստիարակության մեթոդի կիրառումը: Պետք է սակայն հիշել, որ ֆիզիկական պատիժն ու բռնությունը նույնական չեն: Միևնույն ժամանակ բռնության գործադրումը սկսում է հենց պատժի կիրառումից:

Այսպիսով, ֆիզիկական բռնությունը հարվածի, ցնցման, վայր գցելու, թունավորման, այրման, խեղդելու կամ այլ ձևով երեխային ֆիզիկական վնաս պատճառելն է:

Կարելի է առանձնացնել ֆիզիկական բռնության ենթարկված երեխայի մոտ նկատվող հետևյալ *նշանները եւ ախտանիշները.*

- վնասվածքների բուժման ժամանակ ի հայտ եկած նախկին վնասվածքների հետքեր, սպիներ
- վնասվածքի որոշակի օրինակներ, ինչպիսիք են կապտուկները, երեխային ծխախոտով վառելը եւ կոտրվածքը
- հաճախակի կրկնվող փոքր վնասվածքները՝ քերծվածքները, ճանկռվածքները (որոնց համար չկա ոչ մի տրամաբանական բացատրություն)
- բռնության մյուս նշանների առկայությունն, ինչպիսին են բարձիթողությունը, անբավարար զարգացումը եւ սեռական բռնությունը
- վնասվածքների տեղերը, որոնք հատկապես հավանական է, որ պատահական չեն, օրինակ գլխի վնասվածքը
- երեխայի հանդեպ բռնություն գործադրելու վերաբերյալ վկայությունները, հաղորդագրությունները
- ուշադրության արժանի են նաեւ այն վնասվածքները, որոնք չեն համապատասխանում երեխայի տված բացատրությունների հետ եւ այն իրավիճակները, երբ երեխային չի ուղեկցում ծնողը կամ խնամակալը կամ թվում է, թե երեխան զգուշանում, վախենում կամ խուսափում է չափահասներից

Սովորաբար որոշակի նշաններ նկատվում են նաեւ ծնողների/խնամակալների մոտ: Դրանց թվում են.

- վնասվածքներ, որոնք չեն համապատասխանում ծնողների կողմից տրված բացատրություններին (այսինքն չափից շատ են, չափից լուրջ, ոչ այն տեղում)
- անսովոր վարք ծնողի/խնամակալի կողմից, ինչպիսիք են թաքցնելը, բժշկական օգնություն ստանալը, հետաձգելը, պասիվ մասնակցությունը երեխայի օգնության գործընթացին, թշնամական կամ «տնավարի» վերաբերմունք մասնագետների նկատմամբ
- ծնող/խնամակալ, ով վնասվածքի պատճառը համարում է երկրորդական եւ հրաժարվում է քննարկել պատճառը
- անբացատրելի վնասվածք, որը նկատվել է մյուսների, ինչպես օրինակ դայակի կամ դպրոցի կողմից. բռնության, բարձիթողության կամ ընտանեկան բռնության վերաբերյալ փաստեր, արձանագրություններ

Վնասվածքների առանձնահատկությունները

Բազմակի կապտուկները կարող են բռնության նշան լինել: Կապտուկների տեղը կարող է նշանակալից լինել. գլխին, աչքերին, ականջներին եւ բերանին առկա վնասվածքները պետք

է կասկածանքով դիտարկել: Վզի շրջանում կապտուկները կարող են խեղդելու նշան լինել: Արմունկից եւ ծնկից ներքեւ կապտուկներին ընդհանուր առմամբ ավելի քիչ կարեւորություն է տրվում, քան այն կապտուկներին, որոնք հայտնաբերվել են ազդրերի եւ բազկի վերեւի մասում: Դրանք (որովայնի եւ կրծքավանդակի շրջանում) հիմնականում միտում ունեն ցույց տալու ֆիզիկական բռնություն, որովայնի ներքեւի շրջանում՝ սեռական բռնություն: Հետույքի, մեջքից ներքեւ եւ ազդրերի արտաքին մասի շրջանում կապտուկները հաճախ պատժի հետ են կապված: Ազդրի ներսի եւ սեռական օրգանների շրջանում վնասվածքները սեռական բռնության նշան են:

Կոտրվածքները լուրջ վնասվածքներ են: Դրանք կարող են առաջանալ ընկնելուց եւ ծայրահեղ բռնությունից, եւ կարելի է նկատել մյուս վնասվածքների հետ զուգորդված՝ հատկապես փափուկ հյուսվածքների: Երբ վնասվածքը բռնության հետեւանք է, պատմությունը, որը տվել է ծնողը/խնամակալը, կարող է լինել անորոշ, ոչ համապատասխան կամ անիրական, կամ ծնողը դիմում է այտուցի, ֆունկցիայի խանգարման առիթով, ինչն իրականում հետեւանք է կոտրվածքների:

Այրվածքները երեխայի մոտ սովորական երեւույթ են, մեծ մասամբ շատերը հետեւանք են այնպիսի դեպքերի, որոնք տեղի են ունենում ծնողի կողմից բարձիթողության պատճառով, որոշները այնումանեայնիվ, ներառում են բռնություն: Օրինակ՝ խոր այրվածքները: Բուժման հետաձգումը կամ դրանից խուսափումը, ինչպես նաեւ վնասվածքի ժխտումը բռնության կարեւոր նշաններ են:

Թունավորում. երեխայի պատահական թունավորումը երեխայի առողջության գլխավոր պրոբլեմներից է, հատկապես 2-4 տարեկանի համար: Որքան տարօրինակ է կլինիկական պատկերը, այնքան մեծ է դիտավորյալ թունավորման հավանականությունը:

Ախտորոշում ունենալուն ուղղված հատուկ ջանքեր. իրավիճակ, որի ժամանակ ծնողը/խնամակալը՝ հատկապես մայրը, չափազանցնում կամ կեղծում է ախտանշանները կամ դիտմամբ հիվանդություն է առաջացնում երեխայի մոտ: Օրինակ, երբեմն ծնողը կարող է բժշկի նշանակումից անկախ եւ նրանից գաղտնի դեղեր տալ կամ այլ թունավոր նյութեր կամ անգամ դիտմամբ «աքցանել» երեխայի կոկորդն այնպես, որ երեխայի մոտ առաջ գա հեւոց, նոպա, անգամ կարող է մահը վրա հասնել:

Սեռական բռնություն. **Երեխաների հանդեպ սեռական բռնությունը նրանց սեռական անհանգստություն պատճառելն է չափահասների կամ այլ երեխաների կողմից («սեռական» այստեղ նկատի ունեն յուրաքանչյուր գործողություն, որն ուղեկցվում/ հանգեցնում է սեռական գրգռման՝ բռնարարի մոտ):**

Բռնությունը կարող է տատանվել սեփական անդամների ցուցադրումից մինչեւ սեռական ակտ՝ ստիպելով կամ գայթակղելով երեխային (դեռահասի) մասնակցելու սեռական գործողությանը: Այն կարող է իրականացվել մեկ կամ բազմակի բռնարարների կողմից, մեկ կամ ավելի դեպքերում եւ համակցված լինել բռնության մյուս ձեւերի հետ:

Հիմնական առանձնահատկությունները.

- բռնացողը պատասխանատվություն չի զգում
- բռնության գործադրման նպատակը սեռական բավականություն ստանալն է
- ուժի/տարիքի միջեւ տարբերությունը (նշանակում է, որ երեխան չի կարող մերժել կամ դիմադրել)
- սովորաբար «պայմանավորվածություն» կա բռնացողի եւ երեխայի միջև, որ այն պետք է մնա գաղտնիք
- սովորաբար երեխաներին դա դուր չի գալիս եւ ուզում են դադարեցնել, միեւնույն ժամանակ ֆիզիկական կապվածության եւ ուշադրության կարիքը կարող է երբեմն հանգեցնել նրանց ակնհայտ մասնակցությանը կամ պատրաստակամությանը
- գայթակղություն, ուժ կամ հարկադրանք է կիրառվում

Սովորաբար, սեռական բռնության ենթարկված երեխաների մեծամասնությունն ավելի զգույշ քայլերի զոհեր են, որը ներառում է վախի, կաշառքի կամ էմոցիոնալ մանիպուլյացիայի, գայթակղությունների կիրառումը՝ կախված երեխայի տարիքից ու սոցիալական հասունության աստիճանից:

Բռնության դրսեւորման եւ իրագործման ձեւերը. Դեպքերի մեծամասնության ժամանակ բռնացողը ծանոթ է երեխային, հաճախ ընտանիքի անդամ, սովորաբար տղամարդ է: Ընդ որում, տղաներն ավելի քիչ հավանական է, որ կտեղեկացնեն բռնության մասին, քան աղջիկները:

Երբ բռնությունը պատահում է միջուկային կամ ընդարձակ ընտանիքների ներսում, ապա այն նկարագրվում է որպես «ներընտանեկան»: Երբ այն իրագործում են այն չափահասները, ում երեխաները ծանոթ են, սակայն նրանք չեն հանդիսանում երեխայի ընտանիքի անդամ, ապա բռնությունը կոչվում է «արտաընտանեկան»:

Սեռական բռնությունը տեղի է ունենում այնպիսի իրավիճակներում, երբ բռնացողը խոցելի երեխային մոտենալու ինչ-որ հնարավորություն ունի: Այն սովորաբար գաղտնի գործողություն է. օրինակ՝ ընտանիքում երեխան կարող է վերահսկվել եւ մանիպուլյացիայի ենթարկվել իր լռության համար՝ այդպիսով անհնարին դարձնելով բացահայտումը: Ներընտանեկան բռնությունը կարող է լինել հարաբերությունների այնպիսի ձեւը, երբ սերունդների միջեւ նորմալ սահմաններ պարզապես գոյություն չունեն:

Երբեմն ներընտանեկան եւ արտաընտանեկան բռնությունը համատեղվում է. եթե մեկը առկա է, մյուսը նույնպես կարող է դիտարկվել: Բռնացողը դիտավորյալ թիրախ է ընտրում այն ընտանիքներին, որտեղ նրա կարծիքով բռնությունը չի բացահայտվի: Արտաընտանեկան բռնության ժամանակ չափահասը (որին երեխան սովորաբար ճանաչում է) ձեւավորում է որոշակի հարաբերություն երեխայի հետ, որպեսզի գայթակղի նրան: Երբեմն ի հատուցում, երեխան կարող է ստանալ ուշադրության նշաններ՝ գումար, նվերներ եւ այլն, այդ թվում տարբեր արկածների հնարավորություն՝ տուն չգնալ, զվարճանալ տարբեր ակումբներում, նոր ծանոթություններ, մոդայիկ հագուստ եւ այլն:

Ֆիզիկական ցուցիչներ. Երեխաների հանդեպ սեռական բռնության ֆիզիկական ցուցիչները շատ կարեւոր են, քանի որ դրանք կարող են լինել փոքրիկ մանուկների (որոնք ունակ չեն հաղորդակցման) կամ ընդհանրապես երեխաների նկատմամբ, բռնության միակ նշանները: Այդպիսի նշանները կարող են օգնել բացահայտել ողջ պատմությունը:

Այնուամենայնիվ, շատ երեխաներ, ում սեռական բռնության են ենթարկել, կարող են ոչ մի ֆիզիկական նշան չունենալ:

Վնասվածքները եւ վարակը կարող են լինել երեխայի սեռական օրգանների կամ բերանի հետ ֆիզիկական միջամտության հետեւանք: Վնասվածքի գլխավոր ախտանշաններն են ցավը, վերքը, այտուցը, արյունահոսությունը: Վարակի ախտանշանները ներառում են հեշտոցային վնասվածք եւ բորբոքվածություն: Հղիությունը, սեռական ճանապարհով փոխանցվող որոշ հիվանդությունները եւ սպերմայի (սերմնահեղուկի) առկայությունը հեշտոցի կամ ուղիղ աղիքի մեջ նույնպես նշաններ են:

Վարքային ցուցիչներ. Երեխաները, ովքեր սեռական բռնության են ենթարկվում, հաճախ «վարժեցրած են» այնպես, որ կարծես խրախուսում կամ առաջ են բերում սեռական արձագանք բռնարարի մեջ: Սակայն այս վարքային նշանն ավելի շուտ բռնության հետեւանք է քան դրա պատճառ:

Որոշ ժամանակ բռնությունների ենթարկվելուց հետո երեխաների մոտ կարող են նկատվել հետեւյալ առանձնահատկությունները.

- գաղտնապահություն, ինչը փաստորեն, ապահովում է երեխայի եւ բռնարարի միջեւ համագործակցությունը
- անօգնականություն. գրեթե բոլոր դեպքերում երեխաներն ինքնուրույնաբար ունակ չեն դադարեցնելու բռնությունը
- ինքնամեղադրանք. երեխաներն իրենց են համարում պատասխանատու տեղի ունեցածի համար
- հետաձգել բացահայտումը. շատ երեխաներ երբեք չեն պատմում կամ էլ պատմում են միայն այն ժամանակ, երբ բռնությունն ինչ-որ պատճառով դադարում է
- հրաժարում. հաճախ նման իրավիճակ հանդիպում է այն դեպքերում, երբ երեխան մտածում է, որ հանկարծ իր արարքով չնպաստի ընտանիքի քայքայմանը կամ պիտակավորմանը

Երբեմն լուրջ սեռական բռնության ենթարկված որոշ երեխաներ արտաքուստ ոչ մի նշան կամ ախտանշան չեն ցուցաբերում: Որոշները ցուցաբերում են խանգարված վարքագիծ, ինչպիսին է՝ ոգելից խմիչքի օգտագործումը, փնթիությունը, ինքն իրեն վնաս հասցնելը, փախուստը, ինչպես նաեւ էմոցիոնալ պրոբլեմներ, ինչպիսիք են՝ անհանգստությունը, դեպրեսիան, մեկուսացումը: Նրանք կարող են ունենալ դժվարություններ դպրոցում: Հարաբերությունները մյուս չափահասների հետ եւ նրանց հասակակիցների հետ հավանական է, որ կլինեն խանգարված, որը կարող է արտահայտվել սեռականացված վարքագծով ե՛ւ չափահասների, ե՛ւ մյուս երեխաների նկատմամբ:

Բարձիթողությունը/անտեսումը երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձեւն է: Այն կարելի է բնորոշել որպես բռնության գաղտնի ձեւ, որը երեխայի վրա ազդում է զանազան եղանակներով՝ ներառյալ աճի եւ զարգացման խանգարումը, առողջության վատթարացումը եւ այլն: Բարձիթողությունը/անտեսումը ներառում է նաեւ էմոցիոնալ դեպրիվացիան, ինչպես նաեւ կարող է պարունակել ֆիզիկական եւ սեռական բռնության ռիսկ: Շատ դեպքերում սա նպաստող գործոն է երեխաների մահացության տեսանկյունից, եւ որոշ դեպքերում դա կարող է լինել ուղղակի պատճառը:

Բարձիթողությունը երեխայի ֆիզիկական եւ հոգեկան կարիքները բավարարելու շարունակական եւ տեւական անտեսումն է, որն ուղեկցվում է երեխայի առողջության եւ զարգացման լուրջ վնասներով:

Բարձիթողություն ենք կարող համարել այն դեպքերը, երբ ծնողը/խնամակալը ձախողում է՝

ա) ապահովել համապատասխան սնունդ, ապաստան եւ հագուստ
բ) ձախողում է պաշտպանել երեխային ֆիզիկական վնասից եւ վտանգից
գ) ապահովել բժշկական խնամք եւ բուժում
դ) երեխայի էմոցիոնալ կարիքների բավարարումը

Բարձիթողությունը ուղղակիորեն կապվում է ընտանիքի/երեխայի աղքատ լինելու փաստի հետ: Սակայն սա չի նշանակում, որ բոլոր աղքատ ընտանիքներում երեխաներն անտեսման զոհ են դառնում: Բարձիթողությունը նաեւ բնորոշվում է ծնողական խնամքի բացթողումների, արարքների միջոցով: Երբեմն այն հայտնի է որպես «պասիվ բռնություն», անկարողություն ապահովելու կամ արձագանքելու աճող երեխայի փոփոխվող կարիքներին:

Հազվադեպ է պատահում, որ բարձիթողությունն արտահայտվի մեկ եզակի դեպքի միջոցով, սովորաբար այն քրոնիկ բնույթ է կրում: Ընդ որում դրա դրսեւորումները կարելի է դիտարկել միջսերնդային կտրվածքով: Շատ ծնողներ, ովքեր բարձիթողության են մատնում իրենց երեխաներին, հնարավոր է, որ զգում են հմտությունների, ռեսուրսների եւ մոտիվացիայի պակաս՝ լավ ծնող լինելու համար: Բարձիթողության ենթարկված երեխաները մեծանում են սահմանափակ հմտություններով եւ ունակություններով չափահասների կողքին՝ իրենց հերթին դառնալով ապագա անտարբեր ծնող:

Բարձիթողության հետեւանքները փոփոխվում են՝ կախված երեխայի տարիքից:

	Ֆիզիկական	*Զարգացման*	*Վարքային*
0-2 տարեկան	✓ խանգարումներ զարգացման մեջ ✓ ընթացիկ եւ տեւական փոքր վարակներ ✓ հաճախակի դժբախտ պատահարներ ✓ հաճախակի այցելություններ բժշկին ✓ հաճախակի շտապօգնության կարիք (հոսպիտալացում/ հիվանդանոց)	✓ զարգացման որեւէ փուլի ուշացում, օրինակ, խոսքի հմտություններ ✓ ոչ մի կամ շատ փոքր առաջընթաց՝ առողջության պահպանման տեսանկյունից, /իմունային համակարգի եւ զարգացման հանկարծակի կասեցում/դադարում/	✓ կապվածության խանգարում ✓ տագնապալի վարք ✓ խուսափում, ✓ սոցիալական արձագանքի պակաս ✓ ինքնախրախուսական վարքագիծ
2-5 տարեկան	✓ խանգարումներ զարգացման մեջ ✓ հիգիենայի անբավարար պայմաններ, ✓ հաճախակի դժբախտ պատահարներ	✓ խոսքի եւ լեզվի դանդաղում/հապաղում ✓ սոցիալ-էմոցիոնալ թերհասունություն	✓ գերակտիվություն ✓ ագրեսիվություն եւ իմպուլսիվ ✓ խտրականություն չդնող, օտարների հետ անկանոն ֆիզիկական կապերի փնտրում

5-16 տարեկան	✓ կարճ հասակ ✓ անկայուն քաշ ✓ հիգիենայի ոչ բավարար պայմաններ ✓ առողջական անկայուն վիճակ ✓ փնթի արտաքին տեսք ✓ չափից շատ հյուծվածություն կամ գիրություն	✓ ուսուցման դժվարություններ ✓ ցածր ինքնագնահատական ✓ դիմադրողական աղքատիկ մեխանիզմներ ✓ սոցիալ-էմոցիոնալ անհասունություն ✓ վատ կենտրոնացում	✓ կոնֆլիկտային կամ քիչ հարաբերություններ ✓ ինքնախրախուսական կամ ինքն իրեն վնասող վարքագիծ ✓ ոգելից խմիչքի օգտագործում ✓ շեղվող, ագրեսիվ, քայքայիչ եւ մեկուսացնող վարք ✓ դպրոցի բացթողումները հաճախելիություն ✓ օրինախախտումներ	

Հուզական/էմոցիոնալ բռնությունը հավանաբար կարելի է համարել բռնության ամենադժվար սահմանվող եւ դժվար բացահայտվող տեսակը: Այն կարող է հանդես գալ ֆիզիկական բռնության հետ միասին, կամ առանձին:

Երեխայի հանդեպ հուզական բռնության լուրջ հետեւանքը (որը շատ երկար է մնում երեխայի մոտ) էմոցիոնալ ցավն է, որը խանգարում է երեխային դառնալ լիարժեք չափահաս: Պատճառը կարող է պայմանավորված լինել բռնություններով, որոնց ենթարկվել են ծնողներն իրենց մանկության տարիներին:

Երեխաները հաճախ ավելի լավ են կարողանում հաղթահարել այն իրավիճակները, որոնք կապված են կանխատեսելի բռնության հետ: Որոշ երեխաներ նույնիսկ հասկանում են բռնության առաջացման պատճառները եւ պարզապես խուսափում են ծնողների հետ շփումից, բայց, եթե ծնողները կամ խնամողները հանդիսանում են երեխայի միակ մտերիմ անձը եւ միաժամանակ ցավ են պատճառում նրան, ապա վերջինիս մոտ կարող են առաջանալ էմոցիոնալ խանգարումներ:

Ծնողների աջակցությունը եւ գովեստը երեխայի էմոցիոնալ զարգացման տեսանկյունից շատ են կարեւորվում: Այն երեխաները, որոնց միշտ նվաստացնում են եւ վիրավորում, կարող են էմոցիոնալ զարգացում չապրել: Ծնողների անտարբերությունը կարող է ավելի մեծ վնաս հասցնել երեխային, քան մշտական նվաստացումը. երեխայի մոտ կարող է առաջանալ այնպիսի զգացում, որ ինքը ոչ ոքի պետք չէ: Էմոցիոնալ բռնությունը խանգարում է երեխաներին հետագայում դառնալ հասուն մարդ եւ պատճառ դառնում վարքային խանգարումների համար: Պետք է նշել, որ հաճախ դժվար է հստակորեն սահմանել այն հիմնախնդիրը, որը ենթադրաբար առաջացել է էմոցիոնալ բռնության հետեւանքով:

Էմոցիոնալ բռնության բնութագրիչները հեշտ չէ բացահայտել: Կրկնվող նեգատիվ զգացումներն, օրինակ՝ քննադատությունը, վախեցնելը կամ ծաղրանքը երեխաներին «համոզում են», որ նրանք անօգտակար են, չսիրված եւ անցանկալի: Էմոցիոնալ բռնացող վարքի դրսեւորման ձեւեր են՝

- ✓ մերժումը՝ երեխայի չկարեւորելը եւ նրա կարիքները կարեւոր չհամարելը
- ✓ մեկուսացումը՝ երեխային մեկուսացնելը նորմալ սոցիալական փորձից եւ հասակակիցների կամ մեծահասակների հետ շփումից
- ✓ ահաբեկումը՝ երեխային բանավոր վախեցնելը, վախի եւ սարսափի մթնոլորտ ստեղծելը
- ✓ անտեսումը՝ երեխային զրկելը անհրաժեշտ ստիմուլներից եւ էմոցիոնալ «սառեցումը»
- ✓ «փչացնելը»՝ երեխային «հակասոցիալականացնելը», դեստրուկտիվ եւ հակասոցիալական վարքի քաջալերումը

Կախված տարիքից՝ էմոցիոնալ (հուզական) բռնությունը տարբեր կերպ է ազդում երեխայի զարգացման վրա:

0-1	**Քնելու/սնվելու խնդիրներ, նյարդայնություն, ապատիկ, անհանգիստ կամ խուսափողական կապ հիմնական խնամակալի հետ, քաշի աճի կանգ**
1-3	Վերոնշյալին գումարած անտարբերություն, վախ եւ անհանգստություն, ագրեսիվություն, խաղալու ցանկության բացակայություն, ուշացած խոսք
3-6	Վերոնշյալին գումարած հասակակիցների հետ հարաբերություններում դժվարություններ, անուշադրություն, դպրոցում ցածր առաջադիմություն, վատ սոցիալական հմտություններ
6-12	Վերոնշյալին գումարած զարգացող իրավախախտ վարք, փախուստներ, գողություն, ահաբեկչություն
12 եւ ավելին	Վերոնշյալին գումարած դեպրեսիա, ագրեսիա, անհանգստություն, ինքն իրեն վնասելու միտում, հոգեսոմատիկ հիվանդություն, դեղերի չարաշահում, հակահիրավական գործողություններ, անկայուն սեռական կապեր

Բռնության մասին վկայող ցուցիչները եւ դրանց մեկնաբանությունները.

Հետեւյալ էմոցիոնալ եւ վարքային հատկանիշների բացահայտումը մասնագետին թույլ է տալիս ենթադրել, որ երեխան ենթարկվել է բռնության: Դրանք են.

- այն երեխաները, որոնց պահանջմունքները չեն բավարարվում, հետ են մնում զարգացմամբ
- լքված երեխաները, նրանք լռակյաց են, շրջապատի հանդեպ հետաքրքրություն չեն ցուցաբերում
- նրանք չեն ցանկանում փոխհարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ
- լքված երեխաները կարող են սոված եւ հոգնած տեսք ունենալ, նրանք փորձում են սնունդ ձեռք բերել գողության, ողորմության միջոցով
- այսպիսի երեխաները ի վիճակի չեն վերահսկել իրենց վարքը

Կապտուկներ (ենթամաշկային հեմատոմաներ). Սրանք բռնության հիմնական ամենաակնհայտ հետեւանքներն են: Չնայած կապտուկների ապաքինման համար սովորաբար բժշկական միջամտություն անհրաժեշտ չէ, այնուամենայնիվ, դրանք կարող են շատ վտանգավոր լինել հատկապես մարմնի որոշ հատվածներում: Երբ կապտուկները գտնվում են կրծքավանդակի վրա, հնարավոր է, որ ներքին օրգանները վնասված լինեն: Կապտուկներ կարող են առաջանալ նաեւ կոտրվածքներից: Գլխի, վզի, փորի եւ սեռական օրգանների վրա առաջացած կապտուկները հաճախ խոսում են շատ ավելի լուրջ խնդրի առկայության մասին: Կապտուկների որոշակի տեսակներ վկայում են երեխայի հանդեպ կիրառված բռնության մասին.

- հետույքի վրայի կապտուկները հիմնականում խոսում են պատժի համար կիրառված բռնության մասին
- մարմնի փափուկ մասերում գտնվող կապտուկները, օրինակ՝ այտերի, ականջի ծայրի, վերեւի շրթունքի, արմունկների փափուկ հատվածի, ծոծրակի եւ մարմնի ավելի պաշտպան մասերի, օրինակ՝ հետույքի, փորի կամ սեռական օրգանների վնասվածքները հիմնականում առաջանում են բռնության հետեւանքով
- սեռական օրգանների վնասվածքները երբեք պատահական չեն առաջանում. սեռական օրգանների վրա հայտնաբերված կապտուկները կարող են առաջանալ այն դեպքում, երբ երեխաները ունեն զուգարանի հետ կապված խնդիրներ, իսկ ծնողները դրա համար պատժում են նրանց: Բացի այդ, կապտուկների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ սեռական բռնությունը, որի դեպքում պետք է շտապ դիմել բժշկի
- այտերի կամ ականջի կապտուկները կարող են առաջանալ ապտակի հետեւանքով, իսկ մատնահետքերը դեմքի վրա համարվում է ծանր վնասվածք, քանի որ դեմքին կամ գլխին հարվածը կարող է հանգեցնել ուղեղի ծանր վնասվածքների
- երեխաների շրթունքների վնասվածքները կարող են առաջանալ ստիպողաբար կերակրելու կամ լացող երեխային լռեցնելու արդյունքում, ընդ որում այս վնասվածքները չեն կարող առաջանալ երեխայի մեղքով այնքան ժամանակ, քանի դեռ նա չի կարողանում քայլել
- ծոծրակի հատվածում կապտուկները սովորաբար պատահական չեն առաջանում, բայց այս դեպքում կասկած կա, որ բռնություն է կիրառվել երեխայի նկատմամբ
- ատամնահետքերը եւս կարող են հուշել բռնության մասին, սակայն հստակորեն դա կարող է որոշել ատամնաբույժը՝ պարզելով արդյո՞ք դա երեխայի, թ՞ե մեծահասակի ատամնահետքեր են:

Գոյություն ունեն կապտուկների տարբեր տեսակներ մարմնի տարբեր մասերում, սակայն դեպքի հետ աշխատողի գլխավոր խնդիրն է կարողանալ տարբերակել պատահական եւ բռնության հետեւանքով առաջացած վնասվածքները: Ուստի, նախ կարեւոր է տարբերակել այն կապտուկները, որոնք սովորաբար պատահական են առաջանում: Դրանք են.

- պատահական կապտուկների հիմնական տեղերը մարմնի ոսկրային մասերն են, օրինակ՝ ծնկները, արմունկները, կզակը, ճակատը եւ այլն, սակայն ամենից հաճախ հանդիպում են ծնկներինը եւ արմունկներինը, իսկ ճակատի կապտուկները հաճախ առաջանում են շատ փոքր տարիքի երեխաների մոտ, ովքեր նոր են սկսում քայլել, ուստի հաճախ ընկնում են (այս կապտուկները ունեն շրջանի ձեւ)
- մի քանի ամսական հասակում երեխաները շատ հաճախ ճանկռում են իրենց քիթը, այտերը, աչքերը եւ ականջները, ինչը հիմնականում երկար եղունգների արդյունք է, եւ եթե ծնողները կանոնավոր կերպով կտրում են իրենց փոքրիկների եղունգները, այդպիսի խնդիրներ չեն առաջանում
- երբեմն կապտուկներն առաջանում են արյան հետ կապված հիվանդությունների պատճառով, ինչը հնարավոր է ախտորոշել արյան հետազոտությունների միջոցով

Այրվածքներ. Ֆիզիկական բռնությունների մոտավորապես տաս տոկոսը կազմում են այրվածքները: Գոյություն ունեն այրվածք ստանալու տարբեր եղանակներ ու պատճառներ: Դրանք են.

- ամենատարածված ձեւերից մեկը ծխախոտի այրվածքներն են, որոնք ունեն հաստատուն չափեր եւ շրջանաձեւ են, լինում են մակերեսային եւ խորը՝ կախված նրանից, թե որքան ժամանակ է ծխախոտը մնացել մաշկի վրա
- երեխային ստիպողաբար տաք իրերի առջեւ պահելուց առաջացած այրվածքներ, օրինակ, արդուկի, տաք ցանցի կամ ջեռոցի, որոնք թողնում են տիպիկ եւ ճանաչելի

հետքեր (օրինակ՝ երեխան, ով պատահաբար ընկնում է տաք առարկայի վրա, բնականաբար երկար ժամանակ չի մնա այդպիսի դիրքում, մինչդեռ կանխամտածված այրվածք հասցնելու դեպքում այն լուրջ է եւ խորը)

- երեխային նախապես տաքացված առարկայով հարվածելուց հետո առաջացած այրվածքներ, որոնց հետքն ունի այդ առարկայի տեսքը (օրինակ՝ դանակ, բանալի, արդուկ)
- տաք ջրից ստացած այրվածքներ (օրինակ՝ երեխային կարող են ստիպողաբար մտցնել տաք ջրի մեջ՝ մոտեցնելով ծնկները փորին եւ ստիպել երկար ժամանակ այդպես մնալ)
- երեխայի ոտքերի այրվածքներն անվանում են «գուլպայի այրվածք», քանի որ այն նման է գուլպայի, իսկ ձեռքերի այրվածքը՝ «ձեռնոցային այրվածք»:

Դեպքի հետ աշխատող սոցիալական աշխատողի ամենագլխավոր նպատակն է տարբերակել պատահական եւ բռնության հետեւանքով առաջացած այրվածքները եւ անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի օգնությանը:

Սովորաբար երեք կարգի այրվածքներ են առանձնացնում.

I կարգի այրվածքներ՝ մաշկը սովորաբար կարմրած եւ ուռած է: Եթե այրվածքը մարմնի ամուր հատվածի վրա է, ապա բժշկական շտապ միջամտություն հարկավոր չէ: Շատ արեւայրուքներ համարվում են I կարգի այրվածքներ:

II կարգի այրվածքներ՝ բնորոշ է վերնամաշկի շերտազատումը եւ բշտիկների առաջացումը: Եթե այրված մակերեսն այնքան էլ մեծ չէ, եւ այրվածքը չի գտնվում ձեռքերի, ոտքերի, դեմքի, հետույքի կամ մեջքի շրջանում, ապա այն չի պահանջում շտապ բժշկական միջամտություն:

III կարգի այրվածքներ՝ բուն մաշկի այրվածքն է, որը կարող է լինել մակերեսային եւ խորանիստ: Խորանիստ այրվածքների դեպքում, մաշկը դառնում է սեւ կամ չոր ու սպիտակ, կարող է զգացվել անտանելի ցավ, սակայն եթե նյարդը վնասված է, ապա կարող է ընդհանրապես չցավել:

Գլխի վնասվածքներ. Գլխի վնասվածքները, հատկապես փոքր երեխաների մոտ, կարող են առաջացնել ուղեղի վնասվածքներ: Բռնության որոշակի ձեւերի արդյունքում առաջանում են գլխի լուրջ վնասվածքներ:

- Երեխաների հանդեպ բռնության արդյունք է արյան կուտակումը՝ հեմատոման, գլխուղեղում, ինչը շատ վատ հետեւանքներ է թողնում երեխաների վրա: Դա կարող է առաջանալ գլխին ուժեղ հարվածից եւ կարող է պատճառ դառնալ լուրջ վնասվածքի: Այդպիսի վնասվածք ունեցող երեխաների 1/4 -ը մահանում են, իսկ ողջ մնացածների մեծամասնությունը ունենում են մտավոր հետամնացություն, կուրություն եւ այլն:
- Գլխի ոչ բոլոր հեմատոմաներն են առաջանում ուժեղ հարվածից: Այդպիսի կապտուկներ ունեցող երեխաների կեսը չունեն գանգի վնասվածքներ կամ տեսանելի վերքեր: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատ անբացատրելի հեմատոմաներ առաջանում են երեխային դաժանորեն թափահարելուց: Այսպիսի դեպքեր շատ են պատահում մեկ տարեկան երեխաների մոտ, որոնց շատ ուժեղ թափահարում են, որպեսզի քնացնեն: Գլխի հեմատոմաներն ինքնաբերաբար համարյա երբեք չեն առաջանում եւ վկայում են երեխայի հանդեպ կիրառված դաժան բռնության մասին:
- Երեխան կարող է ունենալ գանգի կոտրվածքներ կամ ուղեղի տրավմա, եթե նրան ուժեղ հրել են, եւ նրա գլուխը դիպել է պատին կամ դռանը:

- Երեխան կարող է ճաղատանալ՝ վերջինիս մազերը ուժեղ քաշելու արդյունքում: Մազերը ուժեղ քաշելուց գլխի մաշկի տակ կարող է առաջանալ արյունահոսություն:
- Աչքերի տակ կապտուկները եւս առաջանում են գլխին կամ աչքերի շրջակայքում ուժեղ հարվածից: Քթին պատահական հարվածից նույնպես կարող է աչքի տակը կապտել: Պետք է նաեւ նշել, որ աչքի տակի կապտուկները երկու օրից անհետանում են:

Հարկ է նշել, որ գլխի հեմատոմաները, գանգի լուրջ կոտրվածքները եւ այլ լուրջ կամ կյանքին վտանգ սպառնացող վնասվածքները չեն կարող առաջանալ երեխաների՝ մահճակալից պատահաբար վայր ընկնելուց, ուստի պետք է դիտել այդ վնասվածքները որպես բռնության արդյունք: Հետազոտելով 246 փոքրիկների, ովքեր պատահաբար վայր էին ընկել մահճակալից, պարզվել է, որ 80% - ի մոտ վնասվածքներ չկան, իսկ մյուսները ունեն միայն կապտուկներ, քերծվածքներ կամ ելունդներ: Միայն 1% - ի մոտ էին առկա գանգի վնասվածքներ: Կարեւոր է այն փաստը, որ նրանցից ոչ մեկի մոտ չկային արյան կուտակումներ գլխուղեղում կամ այլ վտանգավոր վնասվածքներ: Հայտնաբերելով գլխի վնասվածքները՝ դեպքի հետ աշխատող մասնագետը պետք է շտապ դիմի բժշկի օգնությանը:

Ներքին օրգանների վնասվածքներ. Այս տիպի վնասվածքները եւս շատ հաճախ կարող են մահացու լինել երեխաների համար, քանի որ նրանց ներքին օրգաններն այնքան էլ լավ պաշտպան չեն վաղ հասակում:

- Փորին հարվածի ժամանակ ամենից առաջ կարող են վնասվել ստամոքսը, աղիքները կամ փայծաղը: Երեխաների մոտ վնասվածք կարող է առաջանալ նաեւ մեջքին հասցված հարվածից:
- Ներքին օրգանների վնասվածքները կարող են արտահայտված լինել կապտուկներով կամ առանց որեւէ տեսանելի նշանի: Շատ դժվար է տարբերակել՝ արդյո՞ք այդ վնասվածքը բռնության արդյունք է, թե պատահական դեպքի, եթե փորի հատվածում կապտուկներ չկան: Ներքին օրգանների վնասվածքները կարելի է նկատել միայն դեպքից մի քանի օր անց եւ անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի:

Ներորովայնային վնասվածքներ. Ներորովայնային վնասվածքները բռնության ենթարկված երեխաների մահվան երկրորդ տարածված պատճառն են: Երեխաների մոտ որովայնի շրջանում տեղակայված օրգանները լավ պաշտպան չեն: Սովորաբար վերոնշյալ վնասվածքներն առաջանում են ոտքի կամ բռունցքի հարվածների արդյունքում:

- Որովայնին հասցված հարվածներից առաջացող ամենատարածված վնասվածքներն են լյարդի, փայծաղի, բարակ կամ հաստ աղիների վնասվածքները: Իսկ մեջքին ուղղված հարվածներից կարող են վնասվել երիկամները:
- Ներորովայնային վնասվածքների մեծամասնության դեպքերում որովայնի արտաքին պատին որեւէ ակնհայտ կապտուկներ կամ այլ վնասվածքներ չեն նկատվում: Քանի որ ներքին օրգանների պատահական վնասվածքները քիչ են տարածված կամ գրեթե տարածված չեն, ապա ամեն անգամ, երբ երեխայի մոտ առկա են ներքին օրգանների վնասվածքների ախտանշաններ, ապա պետք է նկատի ունենալ նրա նկատմամբ բռնության գործադրման փաստը:

Ներքին օրգանների վնասվածքների մասին կարող են վկայել փսխումը, որովայնային ցավը, հիպովոլեմիկ շոկը եւ այլ ախտանշաններ: Հիպովոլեմիկ շոկը ներքին արյունահոսության հետեւանքով արյան շրջանառության խանգարումն է: Հիպովոլեմիկ շոկի մասին կարող են վկայել արյան ճնշման անկումը, հաճախասրտությունը, մակերեսային շնչառությունը, սառը, կպչուն եւ գունատ մաշկը, սառած եւ ցրված հայացքը եւ այլն: Ներորովայնային վնասվածքները

կարող են աննկատ մնալ մի քանի օր: Դրանք բավականին լուրջ բնույթ են կրում եւ պահանջում են անհապաղ բժշկական միջամտություն:

Կոտրվածքներ. Բռնության ենթարկված երեխաների մոտ 20% - ը ունենում են ոսկրային կոտրվածքներ: Կոտրվածքի ախտորոշումը տրվում է բժշկի կողմից՝ ռենտգենյան հետազոտության միջոցով: Այնուամենայնիվ, ստորեւ բերված կոտրվածքների նկարագրությունները կօգնեն դեպքի հետ աշխատող մասնագետին տարբերակել պատահական եւ բռնության արդյունքում առաջացած կոտրվածքները: Բնական կոտրվածքները եւ բռնության արդյունքում առաջացած կոտրվածքները տարբերվում են միմյանցից:

- Բռնության ժամանակ կոտրվածքները կարող են առաջանալ կտրուկ քաշելուց, ճկելուց, ուժեղ հարվածելուց եւ այլն: Նման կոտրվածքները, անշուշտ, տարբերվում են պատահականներից:
- Կրկնվող կոտրվածքները նույն տեղում, երբ այդտեղ չկա թաքնված հիվանդություն կամ բարդ կոտրվածք տարբեր տեղերում, որոնք գտնվում են ապաքինման տարբեր փուլերում, նույնպես բռնության արդյունք կարող են լինել:
- Ոլորումները առաջանում են, երբ ոսկորի մի հատվածը ֆիքսված է, իսկ մյուս ծայրը թեքվում է: Ուստի պետք է նշել, որ այսպիսի վնասվածքները կարող են առաջանալ պատահաբար, օրինակ, երբ երեխան նոր է սկսում քայլել կամ վազել եւ ընկնում է:

Գոյություն ունեն մի շարք նշաններ, որոնց հիման վրա սոցիալական աշխատողը կարող է տարբերել պատահական կոտրվածքները կանխամտածված կոտրվածքներից: Դրանք են՝

- Օրինակ՝ բեկորային կոտրվածքն առաջանում է վերջույթները ոլորելուց կամ քաշելուց եւ չի կարող պատահականության արդյունք լինել:
- Երեխայի ոսկրերը կարող են կոտրվել ոսկրային հիվանդության դեպքում: Այս դեպքում կա տարբերություն, քանի որ ոսկորը կոտրվում է մեջտեղից եւ ընդ որում կրում է ժառանգական բնույթ:
- Հաճախ ծնողների փաստաբանը պնդում է, որ երեխան կոտրվածք է ստացել ծնվելու ժամանակ: Այդ կոտրվածքը սկսում է լավանալ 7-14 օր հետո: Սակայն այդ փաստը պետք է հաստատված լինի բժշկի կողմից:
- Ոսկրային վնասվածքներ. ստորև նկարագրվում են այն ոսկրային վնասվածքները, որոնք կարող են առաջանալ այն դեպքում, երբ երեխայի նկատմամբ բռնություն է գործադրվում:
- Գալարաձեւ կոտրվածք, որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ երեխայի վերջույթները ոլորում են:
- Բեկորային (բազմաբեկոր) կոտրվածք, երբ ոսկորը միանգամից կոտրվում է մի քանի տեղից:
- Կողոսկրի կոտրվածք, որը երեխաների մոտ հազվադեպ է հանդիպում պատահականորեն: Կողոսկրերի կոտվածքները երեխաների մոտ կարող են առաջանալ նրանց կողոսկրերի ուժգին սեղմումներից: Երեխայի նկատմամբ գործադրված բռնության մասին կասկածներ կարող են առաջացնել թիակների, անրակի եւ կրծոսկրի կոտրվածքները:
- Միեւնույն ոսկրի վրա մի քանի ոսկրային կոշտուկների առկայությունը, ինչը խոսում է տվյալ ոսկրի բազմակի կոտրվածքի մասին: Այս հանգամանքը եւս կարող է գործադրված բռնության վերաբերյալ կասկածներ հարուցել:

Հյուծվածություն. Հյուծվածությունը 50 %-ից ավելի դեպքերում հանդիսանում է թերսնման արդյունք: 20 %-ի դեպքերում այն կարող է առաջանալ սնուցման խախտումներից, իսկ մնացած 30 %- ի մոտ կարող է ունենալ օրգանական ծագում:

Երեխայի մոտ հյուծվածության ախտորոշման համար առանձնացվում են մի շարք չափանիշներ.

- Սովորաբար ծայրահեղ հյուծավածության հիմք են ընդունում են երեխայի քաշը: Ծայրահեղ հյուծվածությունը կարող է հանգեցնել երեխայի մահվան, մտավոր հետամնացության եւ այլն:
- Երեխաները, որոնք ծնողների անտարբերության եւ անուշադրության պատճառով հյուծվել են, կարող են միանգամից ավելացնել իրենց քաշն առողջարար եւ վիտամիններով հարուստ սնունդ ընդունելուց:
- Ծայրահեղ հյուծված երեխաները տարբերվում են իրենց հասակակիցներից կառուցվածքով: Եվ այդ երեխաները համապատասխան պայմաններում խնամվելով՝ կարող են առողջանալ:
- Հյուծվածություն ունեցող երեխաների կողերը հստակորեն ընդգծվում են մաշկի տակից, հետույքի եւ ազդրերի մաշկի վրա նկատվում են բազմաթիվ ծալքեր, երեխան այնպիսի տեսք ունի, կարծես նրան հագցրել են «կախ ընկած շալվար», ձեռքերն ու ոտքերը բարակ են, իսկ որովայնը կարող է մեծ եւ փքված լինել եւ այլն:

Թերսնման հետեւանքով առաջացած հյուծվածության ախտորոշման համար օգտագործվում են մի քանի չափանիշներ, որոնք ներառում են հետեւյալը.

- երեխայի քաշի եւ նրա տարիքի միջեւ առկա է որոշակի անհամապատասխանություն
- տնային պայմաններում երեխայի քաշի ավելանալու հարցում առկա են դժվարություններ
- երբ երեխային տնային պայմաններից տեղափոխեն այլ հաստատություններ, օրինակ, հիվանդանոց, նրա մոտ կարձանագրվի քաշի կտրուկ աճ
- սովորաբար երեխան մեծ ախորժակով է ուտում

Բռնության հուզական եւ վարքային բնութագրիչները. բռնության ֆիզիկական բնութագրիչները միշտ չէ, որ ակնհայտ են լինում, հետեւաբար դեպքը վարող սոցիալական աշխատողը պետք է ուշադրություն դարձնի բռնության այլ բնութագրիչներին եւս:

Սովորաբար բռնության ենթարկված երեխաներին բնորոշ են յուրահատուկ վարքագծեր, որոնք կարող են ներառել հետեւյալը.

- Երեխան կարող է լինել ներփակված, անհետաքրքրասեր, մեկուսացած: Կարող է ունակ չլինել հարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ:
- Երեխան կարող է տրտնջալ, հեծկլտալ, լաց լինել՝ առանց որեւէ ակնկալիքի:
- Բռնության ենթարկված բազմաթիվ երեխաների մոտ նկատվում է իրադարձություններին, իրավիճակներին «սառած ուշադրությամբ» հետեւելու երեւույթը: Նմանատիպ դեպքերում երեխաները հուզականորեն ներփակված եւ մեկուսացած են մնում, բայց իրականում նկատում եւ զգում են, թե ինչ է տեղի ունենում իրենց շուրջը:
- Երեխան կարող է դրսեւորել գերզգոնություն կամ խուսափել ֆիզիկական շփումից:
- Բռնության ենթարկված երեխաները կարող են տարօրինակ կերպով հարաբերվել իրենց շրջապատի հետ: Նրանց մեծ մասի մոտ կարող են նկատվել զարգացման հապաղումներ եւս:

- Երեխան կարող է ընկճված լինել, չցուցաբերել նույնիսկ չնչին հուզականություն, ցավի կամ վնասվածքի դեպքում կարող է ամենևին լաց չլինել: Բռնության ենթարկված որոշ երեխաներ նույնիսկ չեն ժպտում, չեն կարողանում խաղալ եւ այլն:

Նախադպրոցական տարիքի բռնության ենթարկված երեխաները կարող են բնութագրվել հետեւյալ հատկանիշներով.

- Նրանք կարող են լինել չափազանց ամաչկոտ եւ վախեցող. կարող են վախի նշաններ ցուցաբերել ծնողի մոտենալուց անգամ:
- Երեխայի մոտ կարող են առկա լինել դերերի խախտման, փոփոխման վաղ նշաններ:
- Կարող են նկատվել սթրեսի ֆիզիկական նշաններ՝ ներառյալ ֆիզիկական հիվանդությունները եւ ռեգրեսիվ վարքը:
- Երեխան կարող է ագրեսիվ լինել այլ երեխաների հետ հարաբերություններում, կարող է ունենալ տրամադրության հաճախակի փոփոխություններ եւ հուզական պոռթկումներ՝ չնչին պրովոկացիայի դեպքում:

Դպրոցահասակ երեխաների մոտ առկա են վերը թվարկված բնութագրիչների մի մասը: Դրանցից բացի, կարելի է առանձնացնել մի շարք բնորոշ հատկանիշներ եւս.

- Երեխան դժվարությամբ կարող է հարաբերվել այլ երեխաների եւ մեծահասակների հետ՝ ցուցաբերելով ագրեսիա, հուզական պոռթկումներ եւ այլն:
- Երեխան կարող է ցուցաբերել գերակտիվություն՝ չկարողանալով երկար ժամանակով կենտրոնանալ որեւէ կոնկրետ գործողության վրա: Զուգահեռաբար երեխայի մոտ կարող է դրսեւորվել ուշադրության պակաս: Եվ այս ամենը կբերի դպրոցում երեխայի առաջադիմության նվազմանը:

Դեռահասի մոտ մի շարք վարքային եւ հուզական խնդիրների առկայությունը կարող է խոսել այն մասին, որ նրա նկատմամբ երբեւէ գործադրվել է բռնություն: Դրանք ներառում են.

- ստելը կամ գողություն կատարելը
- կռվարարությունը, բարկացկոտ պոռթկումները, այլ մարդկանց նկատմամբ ագրեսիայի ցուցաբերումը
- ալկոհոլի կամ թմրամիջոցների չարաշահումը
- տանից փախչելը եւ հրաժարվելը ետ վերադառնալ
- միջանձնային հարաբերություններ հաստատելու դժվարությունները, հուզական եւ սոցիալական մեկուսացումը եւ դեպրեսիան

<u>Ուշադրություն:</u> *<u>Ցանկը համապարփակ չէ: Ցանկում նշված նշաններին մոտ նշանների կամ այլ (ցանկում չնշված նշանների) կասկածի պարագայում նպատակահարմար է խորհրդակցել կազմակերպության փորձառու մասնագետի հետ:</u>*

Առանձնացնում են երեխայի մասնակցության աստիճանական մոտեցումը: Այս մոտեցման շրջանակում առանձնացվում է մասնակցության հետեւյալ աստիճանները՝ սկսած մանիպուլիացիայից մինչեւ որոշումների համատեղ կայացում:

Առաջին **երեք աստիճաններն** ենթադրում են, որ կիրառված մոտեցումը մասնակցային չէ, հետեւաբար դրանցից պետք է խուսափել: Դրանք են՝

Աստիճան 1. Մանիպուլացիա. իրավիճակի ամբողջական վերահսկողությունը գտնվում է մեծահասակների ձեռքին: Իսկ կազմակերպության եւ նրա աշխատակիցների կողմից իրականացվող գործողությունները հաճախ չեն համապատասխանում երեխայի լավագույն շահի սկզբունքին: Երեխաների ձայնը լսված չէ եւ նրանք չունեն որոշումների կայացման իշխանություն:

Աստիճան 2. Դեկորացիա. երեխաները խնամված տեսք ունեն եւ աջակցում են միջոցառման/ծրագրի իրականացմանը:

Աստիճան 3. Սիմվոլիկ դեր. սիմվոլիկ դեր ասելով, հասկանում ենք, որ երեխաների ներառումը միջոցառման/ծրագրի մեջ նրանց համար իմաստալից չէ: Նրանց կարող է ձայն տրվել, սակայն նրանք փոքր ասելիք ունեն թեմայի մասին, խուսափում են հաղորդակցությունից:

Հաջորդ՝ 4, 5 եւ 6-րդ աստիճանները բնորոշում են բուն մասնակցությունը:

Աստիճան 4. Երեխաները տեղեկացված են եւ ունեն խորհրդակցային ձայնի իրավունք. երեխաները լավ են տեղեկացված իրենց կողմից իրականացվող գործողությունների, դրանց նպատակի մասին:

Աստիճան 5. Երեխաները համագործակցում են եւ/կամ մասնակցում որոշումների կայացմանը. երեխաները համագործակցում են մեծահասակների հետ եւ մասնակցում որոշումների կայացմանը: Սա կարող է լինել ինչպես մեծահասակի նախաձեռնությունը, այնպես էլ երեխաների, սակայն մեծահասակները եւ երեխաները հարգում են միմյանց եւ հավասարաչափ մասնակցում իրականացվող աշխատանքներին:

Աստիճան 6. Երեխաները նախաձեռնություն են դրսեւորում. Երեխաներն առաջամարտիկ են եւ նախաձեռնում են սեփական միջոցառումների կայացումը: Նրանք կարող են աջակցություն կամ ուղղորդում փնտրել մեծահասակներից, սակայն սա ընտրովի է:

Կան երեխաների հետ մասնակցային աշխատանքի մի քանի բնութագրիչներ, որոնց օգնությամբ կարելի է իրականացնել երեխաների մասնակցության գնահատում:



Մասնակցության ցածր մակարդակի բնութագրիչներն են՝

- երեխաները պասիվ են
- առաջնորդող դերը մեծահասակներինն է
- միջոցառման/գործողության պլանավորում/նախագծում, իսկ չափանիշները սահմանումը են մեծահասակները
- երեխաները հրավիրվում են մասնակցություն ունենալ մեծահասակների կողմից պլանավորվող միջոցառումներին
- երեխաները տեղեկացվում են եւ ունեն խորհրդակցական ձայն
- մասնակցային գործընթացները մեկանգամյա են, չեն կրում կանոնավոր բնույթ

Մասնակցություն միջին եւ բարձր մակարդակի բնութագրիչներն են՝

- երեխաներն ակտիվ նախաձեռնողներ են
- երեխաները համագործակցում են մեծահասակների հետ
- մեծահասակները ու երեխաները ընդհանուր են որոշումներ կայացնում
- մեծահասակները ու երեխաները հարգում են միմյանց որպես հավասարազոր կողմեր
- երեխաները ներգրավված են միջոցառումների նախագծման գործընթացում
- երեխաները կազմակերպում եւ իրականացնում են միջոցառումներ
- երեխաների մասնակցությունը հանգեցնում է փոփոխությունների
- երեխաները նոր հմտություններ են ձեռք բերում
- երբեմն (ոչ միշտ) երկարաժամկետ միջոցառումներ են իրականացվում
- երեխաներն ունեն առաջնորդող/նախաձեռնող դերը, որը աջակցություն է ստանում մեծահասակների կողմից

Ցածր մակարդակի մասնակցություն	Միջին-բարձր մակարդակի մասնակցություն
• Խորհրդակցություններ • Ֆոկուս-խմբային քննարկումներ • Նյութերի վերանայում • Նոր ռեսուրսների փորձարկում • Մասնակցություն ադվոկացիոն, լոբբինգային բնույթի միջոցառումների • Մասնակցություն դասընթացների, վերապատրաստումների • Ծրագրերի ներկայացում եւ մեկնաբանություններ	• Հանրային միջոցառումների հետազոտում, նախագծում եւ իրականացում • Մեդիա խոսնակներ • Մեծահասակների հետ համատեղ պլանավորվող աշխատանք • Հետազոտություն, հասկանալու երեխաների կարիքները • Երեխաների համար նյութերի մշակում

	• Միջոցառումների եւ գիտաժողովների պլանավորում եւ կազմակերպում • Միջոցների հավաքագրմանն ուղղված աշխատանքներ • Լոբբինգ եւ շահերի պաշտպանություն • Համատեղ ուսուցում

Երեխաների հետ մասնակցային աշխատանքի սկզբունքներն են՝

- երեխաները եւ նրանց գաղափարները հարգանքի են արժանանում
- երեխաներին ներկայացվում է եւ բացատրվում իրենց մասնակցության նպատակներն ու արդյունքները
- երեխաների մասնակցությունը կամավոր բնույթ է կրում
- կիրառվում են երեխաների համար նախընտրելի մեթոդներ՝ զվարճալի, հետաքրքիր եւ ներառող, համապատասխան երեխաների ունակություններին
- տրամադրվում է այնպիսի հնարավորություն, որը համապատասխանում է երեխայի կարիքներին եւ ընտրությանը
- մասնակցային բնույթ ունեցող միջոցառումները կրում են պարբերական բնույթ

Երեխայի մասնակցության չափորոշիչներն են՝

1. էթիկական մոտեցում. թափանցիկություն, ազնվություն եւ հաշվետվողականություն
2. երեխաների մասնակցության կամավոր բնույթ
3. երեխաների համար հարմարեցված, ներառող միջավարի առկայություն
4. հավասար հնարավորությունների ապահովում
5. անձնակազմը մասնագիտացված է եւ գործում է արդյունավետորեն
6. մասնակցությունը ապահովում է երեխաների անվտանգությունն ու պաշտպանությունը
7. ապահովվում է գործընթացի վերահսկողությունն ու գնահատումը

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԸ

Բռնության նշաններ են նկատվել, որոնք վերաբերվում են կենտրոնի ներսում տեղի ունեցած բռնության միջադեպին՝



Բռնության նշաններ են նկատվել կենտրոնում, սակայն դեպքը տեղի է ունեցել կենտրոնից դուրս, ոչ կենտրոնի անձնակազմի կամ կամավորների կողմից՝



«Հայկական Կարիտաս»-ի հարգելի՛ աշխատակից,

«Հայկական Կարիտաս»-ը պլանավորում է մշակել երեխաների պաշտպանության նվազագույն ստանդարտներ, ինչը թույլ կտա կազմակերպության անձնակազմին լավագույնս տեղեկացված լինել եւ կիրառել աշխատանքային միջավայրին առաջադրվող այն նվազագույն պահանջները, որոնք կերաշխավորեն երեխաների անվտանգությունն ու պաշտպանությունը կազմակերպության բոլոր ծրագրերում եւ ծառայություններում:

Նման նվազագույն պահանջների՝ ստանդարտների մշակման համար Ձեր օգնության կարիքն ունենք: Պատասխանելով ստորեւ բերված հարցերին՝ Դուք կօգնեք մշակվող ստանդարտները առավելագույնս հարմարացնել կազմակերպության ու նրա կողմից մատուցվող ծառայությունների առանձնահատկություններին, ինչպես նաեւ իրականացվող ծրագրերի ընդհանուր համատեքստին, ի վերջո՝ կազմակերպության ընդհանուր առաքելությանը այս ոլորտում:

Հարցումն անանուն է:

Ուղեցույց պատասխանողի համար

Հարցերը վերաբերում են հետեւյալ ոլորտներին՝

1. Կազմակերպության վերաբերմունքը երեխաների անվտանգության երաշխավորման խնդիրների վերաբերյալ:
2. Կազմակերպության ներքին քաղաքականությունը եւ գործող ընթացակարգերը երեխաների անվտանգության ապահովման ոլորտում:
3. Երեխաների հանդեպ չարաշահման/բռնության կանխարգելմանն ու վաղ միջամտությանն ուղղված գործընթացները՝
   - մարդկային ռեսուրսների կառավարում եւ վերապատրաստումներ
   - տեղեկատվության փոխանակման եւ հաղորդակցման մեխանիզմներ
   - մշտադիտարկում եւ սուպերվիզիա:

Յուրաքանչյուր վեց ոլորտի համար ներկայացված են որոշակի պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պատասխանելու համար Դուք հնարավորություն ունեք ընտրելու ստորեւ նշված չորս տարբերակներից որեւէ մեկը՝

ա. համաձայն եմ/ կամ իրականացվում է

բ. մասնակի համաձայն եմ/կամ իրականացվում է մասնակի

գ. համաձայն չեմ/ կամ չի իրականացվում

դ. դժվարանում եմ պատասխանել (ԴՊ)

Հարցաթերթի լրացումը Ձեզանից կխլի մոտ 10-15 րոպե:

Մաղթում ենք Ձեզ հաջողություն:

I.	Երեխաների անվտանգության երաշխավորման խնդիրը կազմակերպությունում	Ա	Բ	Գ	Դ
1.	Կազմակերպությունը հստակ դիրքորոշում ունի երեխաներին պաշտպանելու իր պատասխանատվության վերաբերյալ եւ դրա մասին տեղեկացնում է բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են իր հետ:				
2.	Մեր կազմակերպությունում մասնագիտական անձնակազմի եւ կազմակերպության այլ ներկայացուցիչների կողմից՝ երեխաների հանդեպ վերաբերմունքից կարելի է եզրակացնել, որ բոլորն այստեղ կոչված են պաշտպանելու երեխաներին չարաշահման/ բռնության բոլոր հնարավոր դեպքերից:				
3.	Անձնակազմի անդամները պատշաճ կերպով իրազեկված են «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի եւ երեխաների իրավունքների վերաբերյալ այլ փաստաթղթերի մասին: Փաստացի, դրանք մեր կազմակերպությունում համարվում են երեխաների պաշտպանության կազմակերպման հիմքեր, կազմակերպությունում գործող բոլոր մոտեցումները կառուցվում են դրանց վրա:				
4.	Ղեկավար աշխատակիցների կողմից իրականացվում են բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի առնվազն կազմակերպության շրջանակներում երաշխավորվի երեխաների իրավունքների իրացումը (լինել լսված, ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն եւ այլն):				
5.	Կազմակերպությունը հատուկ հետեւում է, որպեսզի բոլոր երեխաների իրավունքների իրացումը ապահովվի հավասարապես՝ անկախ սեռից, կրոնից, հաշմանդամությունից եւ այլն:				
6.	Կազմակերպությունը երեխաների հետ աշխատում է այնպես, որպեսզի երեխաների վարքի վերահսկումը, ներքին կանոններին հետեւելը չպարունակեն ստորացման/նվաստացման կամ բռնության որեւէ դրսեւորում:				
II.	Երեխաների հանդեպ չարաշահման/վնասի կանխարգելումը	Ա	Բ	Գ	Դ
1.	Կազմակերպությունում առկա են հստակ ուղղորդումներ, որոնք մեկնաբանում են, թե երեխաների հետ աշխատանքում, որոնք են ընդունելի եւ անընդունելի վարքաձեւերը: Դրանք տրամադրվում են բոլոր աշխատակիցներին՝ որպես պարտադիր ստորագրման ենթակա փաստաթուղթ՝ ինչպես աշխատանքային պայմանագրերը եւ այլն:				

2.	Ծառայությունների ուղղակի մատուցման գործընթացում երեխաների իրավիճակը մշտապես վերահսկվում է ղեկավարների կողմից այնպես, որպեսզի նրանք պատշաճ կերպով պաշտպան լինեն:				
3.	Կազմակերպությունում առկա են հստակ, կարգավորված եւ փաստաթղթավորված ուղղորդումներ, որոնք մեկնաբանում են, թե այս կամ այն ոչ ստանդարտ իրավիճակում ինչպիսին պետք է լինի կազմակերպության աշխատակիցների վարքը:				
4.	Աշխատակիցների վարքը կարգավորող ուղենիշների խախտման դեպքում աշխատակիցները ենթարկվում են կարգապահական տույժերի:				
5.	Աշխատակիցների վարքը կարգավորող ուղենիշների խախտումները անպայման որոշակի հետեւանքներ են ունենում:				
6.	Կազմակերպությունում գոյություն ունեն անձնակազմի հավաքագրման եւ երեխաների հետ աշխատանքին նրանց անձնային հատկանիշների համապատասխանության գնահատման կոնկրետ ընթացակարգեր:				
7.	Անձնակազմի պոտենցիալ թեկնածուների վերաբերյալ լիարժեք տեղեկություններ իմանալու համար կազմակերպությունը կարող է գրավոր հարցում կատարել նաեւ ոստիկանությունից:				
8.	Կազմակերպությունում առկա է ուղեցույց տեղեկատվական տեխնոլոգիաների՝ համացանց, վեբ կայքեր, թվային տեսախցիկներ եւ այլն, կիրառման վերաբերյալ՝ նպատակ ունենալով պաշտպանել երեխաներին հնարավոր ռիսկերից:				
9.	Աշխատակիցների համար սահմանված են հստակ ընթացակարգեր, որոնց միջոցով նրանք կարող են իրենց մտահոգությունները (այս կամ այն աշխատակցի՝ երեխայի հանդեպ ոչ պատշաճ վերաբերմունքի մասին) հայտնել ղեկավարությանը կոնֆիդենցիալ պայմաններում:				
10.	Աշխատակիցները գիտեն, թե կոլեգայի կողմից կազմակերպության ծառայությունների շրջանակներում երեխայի հանդեպ անընդունելի վարքագծի վերաբերյալ իրենց մտահոգությունների մասին որ պաշտոնական կառույցներին է կարելի դիմել եւ ինչպես:				
III.	**Ուղղորդումներ եւ վերապատաստումներ**	**Ա**	**Բ**	**Գ**	**Դ**
1.	Կազմակերպությունում գոյություն ունեն երեխաների անվտանգության երաշխավորման հստակ գրավոր				

	ուղղորդումներ անձնակազմի, գործընկերների եւ այլ կազմակերպությունների համար:				
2.	Երեխաների պաշտպանության ապահովմանն ուղղված կազմակերպությունում հաշվի են առնվում տեղի մշակութային առանձնահատկությունները, կազմակերպությունում փորձում են պաշտպանել երեխաներին՝ առանց քննադատելու կամ մեղադրելու գոյություն ունեցող մշակութային համատեքստը:				
3.	Կազմակերպությունում առկա է գրավոր ձեւակերպված փաստաթուղթ, որում ամրագրված են երեխաների անվտանգության ապահովման համար անհրաժեշտ քայլերը:				
4.	Կազմակերպությանը միանալով՝ անձնակազմի բոլոր անդամները եւ կամավորները մասնակցում են երեխաների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստումների, որոնց շրջանակներում ներկայացվում են երեխաների պաշտպանության վերաբերյալ կազմակերպությունում գործող քաղաքականությունն ու ընթացակարգերը:				
5.	Անձնակազմի բոլոր ներկայացուցիչները հնարավորություն ունեն կրթվել եւ իրազեկ լինել երեխաների հանդեպ չարաշահման դեպքերին արձագանքելու համար գործող մեխանիզմների եւ միջոցների վերաբերյալ:				
6.	Աշխատանք է իրականացվել նաեւ բոլոր գործընկերների հետ՝ տեղեկանալու եւ ըմբռնելու կազմակերպությունում ընդունված գործելակերպն ու խրախուսվող վարքագծերի այն մոտեցումները, որոնք հիմնված են վերը թվարկված ստանդարտների վրա:				
	IV. Տեղեկատվության փոխանցում եւ հաղորդակցություն	**Ա**	**Բ**	**Գ**	**Դ**
1.	Կազմակերպության հետ առնչվող երեխաներն իրազեկ են հնարավոր չարաշահումներից/բռնություններից պաշտպան լինելու իրենց իրավունքի մասին:				
2.	Երեխաները տեղյակ են, թե ու՞ր է պետք դիմել օգնություն եւ խորհրդատվություն ստանալու համար, եթե առկա է չարաշահման, հետապնդման կամ ահաբեկման ռիսկ կամ դրա վերաբերյալ որեւէ փաստ:				
3.	Յուրաքանչյուրը կազմակերպությունում գիտի, թե անձնակազմի կոնկրետ որ անդամն է պատասխանատվություն կրում երեխաների անվտանգության ապահովման համար, թե անհրաժեշտության դեպքում ում է պետք դիմել եւ ինչպես է կարելի կապ հաստատել նրա հետ:				

4.	Կազմակերպությունում բոլորը տեղյակ են եւ տեսանելի վայրում փակցված կարելի է գտնել երեխաների պաշտպանությամբ զբաղվող կառույցների, ազգային մարմինների եւ «Թեժ գիծ» ու “Շտապ օգնություն” ծառայության հեռախոսային համարները եւ այլ տվյալներ։				
5.	Երեխաների անվտանգության համար պատասխանատվություն ունեցող անձնակազմի բոլոր անդամները մասնագիտական խորհրդատվություն, աջակցություն եւ տեղեկատվություն ստանալու հնարավորություն ունեն։				
6.	Կազմակերպությունում ազգային եւ/կամ տեղական մակարդակներում երեխաների պաշտպանությամբ զբաղվող կառույցների հետ հաստատված են գործնական եւ փոխադարձ վստահության վրա հիմնված փոխհարաբերություններ։				
V.	**Մշտադիտարկումգ եւ վերանայում**	**Ա**	**Բ**	**Գ**	**Դ**
1.	Կազմակերպությունում միջոցներ են ձեռնարկվում վերահսկելու երեխաների պաշտպանության կանխարգելմանն ու միջամտությանն ուղղված վերոնշյալ հանձնառությունների իրագործումը։				
2.	Պարբերաբար քայլեր են ձեռնարկվում՝ երեխաներին եւ նրանց ծնողներին երեխաների անվտանգության ապահովման վերաբերյալ կազմակերպությունում գործող ընթացակարգերին եւ մոտեցումներին ծանոթացնելու ուղղությամբ։				
3.	Չարաշահման/բռնության բոլոր միջադեպերը, դիմումները արձանագրվում են, իսկ դրանց հետագա ընթացքի հանդեպ սահմանվում է հսկողություն։				
4.	Կազմակերպությունն օգտագործելով երեխաների պաշտպանության երաշխավորմանն ուղղված տարբեր մեխանիզմները, մշտապես կատարելագործում է իր ընթացակարգերը եւ վերահսկում դրանց առօրյա պրակտիկ կիրառումը։				
5.	Երեխաների հանդեպ չարաշահումների կանխարգելմանն ուղղված կազմակերպության քաղաքականությունը եւ պրակտիկ ընթացակարգերը պարբերաբար վերանայվում են եւ կատարելագործվում (առնվազն երեք տարին մեկ անգամ)։				
6.	Վերը նշված քաղաքականությունն ու դրա գործնական կիրառումը կատարելագործելու համար հաշվի են առնվում նաեւ երեխաների ու նրանց ծնողների/ խնամակալների կարծիքը։				

VI. Երեխաների անվտանգությունը ապահովող քաղաքականությունն ու ընթացակարգերը		Ա	Բ	Գ	Դ
1.	Կազմակերպությունը ունի երեխաների պաշտպանության քաղաքականություն եւ բռնությունների կանխարգելման ընթացակարգերը նկարագրող գրավոր փաստաթուղթ:				
2.	Քաղաքականությունը եւ ընթացակարգերը բոլորի կողմից ենթակա են պարտադիր կատարման:				
3.	Կազմակերպությունում առկա են հստակ ընթացակարգեր երեխաների պաշտպանության վերաբերյալ, որոնք քայլ առ քայլ ուղղորդումներ են տալիս այն մասին, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն երեխայի անվտանգության եւ/կամ բարեկեցության վտանգի/ ռիսկի պարագայում:				
4.	Երեխաների պաշտպանությանն ուղղված գործող ընթացակարգերը հաշվի են առնում տեղի տարածաշրջանային եւ մշակութային առաձնահատկությունները:				
5.	Քաղաքականությունը եւ համապատասխան կարգավորումները հաստատված են եւ հավանության են արժանացել կազմակերպության ղեկավար մարմնի կողմից (օրինակ, հոգաբարձուների խորհուրդ, գործադիր ղեկավարություն եւ այլն):				

Շնորհակալություն համագործակցության համար: